

UNITED NATIONS OFFICE IN ARMENIA
DEPARTMENT OF PUBLIC INFORMATION

ՄԱԿ-ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ARTICLE 19 IN THE WORLD

Collection of Presentations

19-րդ ՀՈԳՎԱԾԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ձեկույցների ժողովածու



Yerevan 1999 Երևան

**Universal Declaration
of Human Rights**

Article 19

**Everyone has the right
to freedom of opinion
and expression;
this right includes freedom
to hold opinions without
interference and
to seek, receive and impart
information and ideas through
any media and
regardless of frontiers.**

Մարդու իրավունքների
համընդհանուր հռչակագիր

Հոդված 19

Ամեն ոք ունի
համոզմունքներ ունենալու
եւ արտահայտելու իրավունք.
այս իրավունքը ներառում է
համոզմունքներին անարգել
հավատարիմ մնալու,
տեղեկություններ ու
գաղափարներ որոնելու,
ստանալու եւ տարածելու
ազատություն՝ լրատվության
ցանկացած միջոցներով, անկախ
պետական սահմաններից:

Table of Contents

Foreword	6
Introduction	8
USA	14
Russian Federation	18
France	23
Germany	30
Lebanon	35
Egypt	38
China	42
Ukraine	45
Greece	50
Gyumri (Armenia)	55
Georgia	60
Yerevan (Armenia)	66
Sissian (Armenia)	73
Goris (Armenia)	76
Appendix 1: Excerpts from International Instruments and Armenian National Legislation on Freedom of Speech, of Expression and of the Press	80
Appendix 2: Selected List of International Organizations Dealing with Issues of Freedom of Speech and Rights of Journalists	90
Appendix 3: From the History of Armenian Mass Media	96
Appendix 4: A Selected List of Mass Media in Armenia	98

Բովանդակություն

Նախաբան	6
Ներածություն	8
ԱՄՆ	14
Ռուսաստանի դաշնություն	18
Ֆրանսիա	23
Գերմանիա	30
Լիբանան	35
Եգիպտոս	38
Չինաստան	42
Ուկրաինա	45
Հունաստան	50
Գյուլմրի (Հայաստան)	55
Վրաստան	60
Երեւան (Հայաստան).....	66
Սիսիան (Հայաստան)	73
Գորիս (Հայաստան).....	76
Հավելված 1. Հատվածներ միջազգային փաստաթղթերից եւ Հայաստանի հանրապետության օրենսդրությունից խոսքի, արտահայտվելու եւ մանուլի ազատության մասին	80
Հավելված 2. Խոսքի ազատության եւ լրագրողների իրավունքների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների համառոտ ցանկ	90
Հավելված 3. Հայ լրատվամիջոցների պատմությունից	96
Հավելված 4. Հայաստանի զանգվածային լրատվամիջոցների համառոտ ցանկ	98

FOREWORD


It gives me great pleasure to introduce “*Article 19 in the World*”. It is a compilation of presentations made by representatives of the Embassies of ten countries in Armenia and by Armenian representatives of mass media, on the topic of implementation of Article 19 of the Universal Declaration of Human Rights in their countries. This publication also contains materials of three round-table discussions held in the regions of Armenia, as well as a compilation of Articles from relevant international instruments and national Armenian legislation, and a list of international and foreign organisations dealing with the issue of freedom of speech and expression.

I would like to extend my sincere gratitude and appreciation for excellent cooperation provided by the Embassies of USA, Russian Federation, France, Germany, Lebanon, Egypt, China, Ukraine, Greece and Georgia. Without their interest and enthusiasm, this important initiative undertaken by the Office of the UN Department for Public Information would have hardly succeeded. The presentations and inputs provided by the Embassies have been excellent examples of true and real international cooperation and contributed immensely to better mutual understanding of societies and people.

Armenia, like most of the transition countries, is going through a challenging and at times painful process of consolidating democracy, building a viable and competitive economic system, and establishing a vibrant civil society. The free, independent, impartial and professional media - the “*fourth power*” - is an essential part and parcel of the civil society. I am pleased to note that in spite of the difficulties and problems the Armenian media and the emerging civil society have experienced during the turbulent years after the declaration of independence in 1991, the momentum gained at the beginning of the democratisation process is still there, and positive developments inspire optimism about the success of the Armenian model of democracy.

The United Nations, in its capacity of a supranational entity concerned with the global well being, has increasingly prioritized the importance of working closely with the civil society for the promotion of democracy, human rights and education. We believe that by doing so we would be able to help identify and offer solutions to some global problems and to meaningfully address others. Indeed, little can be expected from our efforts in Armenia unless these are joined and supported by the civil society that is best positioned to build a viable and strong democracy capable of ensuring a proper system of checks and balances of the entire governance system.

I am confident that the international experience in the implementation of the Article 19 would be instrumental in further consolidating and advancing the Armenian civil society and free media. I also believe that the Armenian experience is of interest both to the established democracies, and to other countries that are undergoing the transition. With these considerations in mind, we are presenting this publication to mass audience both in Armenia and elsewhere.



Katiča Cekalovic

UN Resident Coordinator

Ինձ համար մեծ հաճույք է ներկայացնել «19-րդ հոդվածն աշխարհում» գիրքը: Այս հրատարակությունը Հայաստանում հավաստաբանաբար տասը երկրների դեսպանատների, ՁԼՄ հայկական ներկայացուցիչների գեկույցների ժողովածու է այն մասին, թե ինչպես է մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածը կիրառվում տվյալ երկրներից յուրաքանչյուրում: Գրքում տեղ են գտել նաև Հայաստանի մարզերում կազմակերպված կլոր սեղանների նյութեր, միջազգային համապատասխան փաստաթղթերից հոդվածներ, ինչպես նաև խոսքի ու արտահայտվելու ազատության հարցերին առնչվող մի շարք միջազգային ու արտասահմանյան կազմակերպությունների մասին տեղեկություններ:


Կցանկանալի իմ անկեղծ երախտագիտությունն ու գնահատանքը հայտնել ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Չինաստանի, Ուկրաինայի, Հունաստանի և Վրաստանի դեսպանատներին իրենց գերազանց համագործակցության համար: Առանց նրանց շահագրգռության և խանդավառության՝ ՄԱԿ-ի Հասարակական տեղեկատվության բաժնի այս կարևոր նախաձեռնությունը հազիվ թե հաջողվեր: Դեսպանատների կողմից ներկայացված գեկույցներն ու օժանդակությունը միջազգային համագործակցության մի ճշմարիտ ու գործնական օրինակ եղան և մեծապես նպաստեցին հասարակությունների ու ժողովուրդների փոխըմբռնմանը:

Հայաստանը, ինչպես անցման փուլում գտնվող երկրների մեծ մասը, հաստատելով գործուն ու մրցունակ տնտեսական համակարգ և ձևավորելով մերդաշնակ քաղաքացիական հասարակություն, ժողովրդավարության ամրապնդման հաղթահարումների դժվարին և հաճախ ցավազին գործընթացում է: Ազատ, անկախ, անաչառ ու փորձառու մամուլը՝ «չորրորդ իշխանությունը», քաղաքացիական հասարակության էական բաղկացուցիչն է: Ուրախ եմ նշել, որ չնայած այն փորձություններին ու հիմնախնդիրներին, որ բաժին հասան Հայաստանի լրատվամիջոցներին ու նորելույլ քաղաքացիական հասարակությանը 1991-ից՝ անկախության հռչակումից հետո հաջորդած փոթորկալից տարիներին, ժողովրդավարական գործընթացների սկզբնական վերելքը դեռևս առկա է, և դրական զարգացումները ժողովրդավարության հայկական մոդելի հաջողության լավատեսություն են ներշնչում:

ՄԱԿ-ը, իբրև գլոբալ բարեկեցության հարցերով մտահոգված վերազգային մարմին, առավելապես նախապատվություն է տալիս քաղաքացիական հասարակության հետ սերտ համագործակցությանը ժողովրդավարության, մարդու իրավունքների և կրթության հարցերի առաջադրմանը: Հավատում եմ, որ այսպիսով մենք կկարողանանք աջակցել որոշ գլոբալ խնդիրներ բացահայտելուն ու լուծումներ գտնելուն, ինչպես նաև այլ հարցերի ձեռնամուխ լինելուն: Իհարկե, Հայաստանում գործադրված մեր ջանքերից հազիվ թե մեծ ակնկալիքներ լինեն, եթե դրանք չհամադրվեն ու նեցուկ չունենան քաղաքացիական հասարակությանը: Դա գործուն և ամուր ժողովրդավարության կառուցման և հավասարակշիռ ու վերահսկելի կառույցներ ապահովող լիարժեք կառավարման համակարգի ստեղծման լավագույն երաշխիքը:

Վստահ եմ, որ 19-րդ հոդվածն իրականացնելու միջազգային փորձը կնպաստի Հայաստանի քաղաքացիական հասարակությանը և լրատվության միջոցներին: Հավատացած եմ նաև, որ հայկական փորձը հետաքրքրական է թե՛ հաստատված ժողովրդավարությունների, թե՛ անցման փուլում գտնվող այլ երկրների համար: Այս ամենը նկատի ունենալով՝ ներկայացնում եմ այս հրատարակությունը լայն հանրության դատին Հայաստանում և այլուր :

Կատիցա Չեկալովիչ



ՄԱԿ-ի Մշտական համակարգող

INTRODUCTION

UNDPI Information Assistant
Armine Haladjian

ՄԱԿ-ի ԴՏԲ տեղեկատվության գծով օգնական
Արմինե Հալաջյան



The mainstreaming of human rights today in most nations is a crucial task and a mission that the UN system is committed to. Since its foundation the United Nations has initiated the creation of about 60 international conventions, covenants, declarations and treaties related to the various aspects of human rights. 10 December 1998 marked the 50th anniversary of the Universal Declaration of Human Rights. And as the Declaration ranks among one of the first and the greatest documents in recent history of mankind, it is only natural that almost the entire world celebrated the anniversary.

For the last 50 years the UDHR has been considered more often than not as an

Մարդու իրավունքներին հավատարիմ մնալն այսօր էլ կարևոր խնդիր է շատ պետությունների համար, ինչպես նաև այն առաքելությունն է, որ հանձն է առել Միացյալ ազգերի կազմակերպությունը: Հիմնադրումից ի վեր ՄԱԿ-ը նախաձեռնել է մարդու իրավունքների տարբեր բնագավառներին վերաբերող շուրջ 60 միջազգային կոնվենցիաների, պարտավորագրերի, հռչակագրերի և դաշնագրերի ստեղծումը: 1998թ. դեկտեմբերի 10-ին նշվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 50-ամյակը: Եվ ելնելով այն փաստից, որ այս հռչակագիրը համարվում է մարդկության նորագույն պատմության մեջ առաջին և ամենանշանակալից փաստաթղթերից մեկը, բնական է, որ գրեթե ողջ աշխարհը նշեց դրա տարեդարձը:

Վերջին 50 տարիներին Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը հանդիսացել է ոչ միայն հայտնի իրավական փաստաթուղթ և հայեցակարգ, այլև նվիրական իդեալների մի ամբողջություն, որ առանձին մշակույթների համար գործող մոդել է ծառայել: Այն ոգեշնչել և շարունակում է ոգեշնչել ու խթանել, որպեսզի ջանքեր ներդրվեն բարելավելու և նույնիսկ քննության առնելու ազգային օրենքներն ու սահմանադրությունները:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 30 հոդվածներից յուրաքանչյուրը վերաբերում է սոցիալական կյանքի առանձին բնագավառի կամ սոցիալական խմբի հիմնահարցերին՝ սկսած երեխայի ու կանանց իրավունքներից մինչև հաշմանդամների ու փախստականների իրավունքները, հավաքների ու խղճի ազատությունից մինչև կարծիքի ու արտահայտվելու իրավունքը: Վերջինս ամրագրված է հռչակագրի 19-րդ հոդվածում և ներկայացված է որպես ամենահիմնական իրավունքներից մեկը:

outstanding legal instrument and a conceptual framework, a comprehensive roll of eminent and magnanimous ideals and at the same time as an operationable model to be replicated and grounded in specific reality of particular cultures. It has and still does inspire and motivate endeavors to improve or even, in appropriate cases, to overhaul national legislations and Constitutions.

Each of the 30 articles, that the UDHR is comprised of, addresses the issues related to a particular segment of societal life or to a social group, from the child's and women's rights to the rights of the disabled persons and refugees, from the freedom of association and conscience to the freedom of opinion and expression. The latter is formulated in the Declaration in Article 19 and is presented as one of the most fundamental rights. As Mr. Kofi Annan, the UN Secretary-General succinctly put it, "Information and freedom are indivisible. The information revolution is unthinkable without democracy and true democracy is unimaginable without freedom of information."

Intensified by increasing globalization, the rapid development of new communication technologies has transformed the world and human life. Freedom of the press is no longer limited to print media but applies to an ever growing range of electronic media (radio, TV and, now, Internet).

However, inequalities in the distribution of and in the access to basic communication technologies have aggravated the polarization between the advanced and the so-called developing countries. This is most vividly demonstrated when we talk about "info rich" and "info poor" countries, with the latter, *the developing nations*, being the most disadvantaged.

Culturally, many communities have felt their very existence threatened because of the way new communication resources are

հնչպես նշել է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար պրն. Քոֆի Անանը, «Տեղեկատվությունն ու ազատությունը միմյանցից անբաժանելի են: Տեղեկատվության հեղափոխությունն անհնար է առանց ժողովրդավարության, իսկ ճշմարիտ ժողովրդավարությունը չի կարելի պատկերացնել առանց տեղեկատվության ազատության»:

Հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաների արագ զարգացումը, որն ավելի ինտենսիվ է դարձել հետզհետե աճող գլոբալիզացիայի շնորհիվ, վերափոխեց աշխարհն ու մարդկանց կյանքը: Մամուլի ազատությունն այլևս չի սահմանափակվում տպագիր լրատվությամբ, այլև տարածվում է օրավոր աճող էլեկտրոնային լրատվության վրա (ռադիոն, հեռուստատեսությունը, այժմ նաև ինտերնետը):

Այնուամենայնիվ հաղորդակցության հիմնական տեխնոլոգիաների բաշխման և մատչելիության անհավասարությունը նպաստել է զարգացած (առաջնակարգ) և, այսպես կոչված, զարգացող երկրների միջև անջրպետի խորացմանը: Գա նկատելի է այն ժամանակ, երբ մենք գործ ունենք *հարուստ և աղքատ տեղեկատվություն* տնօրինող երկրների հետ. վերջիններս, այսինքն՝ *զարգացող պետությունները*, ամենաանբարենպաստ վիճակում են:

Մշակութային առումով շատ համայնքներ մաշկի վրա են զգացել իրենց գոյությանը սպառնացող վտանգը՝ կախված այն հանգամանքից, թե ինչպես են ղեկավարվում հաղորդակցության ժամանակակից պաշարները: Այսպիսով, հաղորդակցության աշխարհում այս նոր իրականությունը հրատապ է դարձնում այն, որ մենք բոլորս առավել ուշադրություն դարձնենք և լրջորեն մոտենանք խնդրին: «Հաղորդակցության իրավունքի» կոչ անող հղումներն այստեղ միանգամայն տեղին են:

Խոսելով ազատ արտահայտվելու իրավունքի մասին՝ նշենք, որ 19-րդ հոդվածը վերաբերում է միավորում է ազատությանն առնչվող մի շարք կարևոր իրավունքներ, առաջին հերթին՝ մամուլի ազատության իրավունքը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի բուն էությունը նաև իրավունքի ու ազատության համակարգի լավագույնս կայացումն ու հետագա զարգացումն է:

Թեև Մարդու իրավունքների համընդհանուր

being managed. Thus, the new reality in the world of communications makes it imperative that we all give much more serious and attentive consideration to the situation. The appeals that invoke "*the right of communication*" are quite timely and pertinent.

Speaking about the right of free expression, Article 19 implies and connects with a number of related crucial rights and freedoms, primarily the freedom of the press.

The significance of the UDHR is also in triggering further evolution and important nuancing of the system of rights and freedoms.

Even though the UDHR does not employ the terms like "*the right to information*" or "*the rights of communication*", it has been instrumental in setting the course for and mapping out the trajectory of the developments that resulted in recognition of legitimacy of these concepts and their close affinity with the spirit and letter of the Declaration.

Independent mass media pride themselves on their role as guardians of democracy and freedom. Ideally, this is what they should be. But real dangers challenge independent media from within. It may seem premature to raise this point in fledgling democracies and countries just emerging from totalitarian regimes or drifting from authoritarian ones.

As a rule, all parties concerned tend to focus on the unfortunate traditions of total societies with abusive and manipulative State and on additional, built-in guarantees for free press. These worries and concerns are legitimate and in most cases are justly voiced and dealt with at great length.

However, the delicate balance between right and responsibilities should not be upset. And the more societies in transition progress to the much-sought ideals and goals of a modern democracy, the more pronounced will the responsibility of media

հոշակագրում չեն գործածվում այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «տեղեկատվության իրավունքը» կամ «հաղորդակցության իրավունքը», այնուամենայնիվ, փաստաթուղթը նպաստել է այն իրողությունների ուղղությունների ու հեռանկարների նախանշմանը, որոնք այս հասկացությունների և օրինակաճանաչման արդյունք էին՝ հոշակագրի ոգուն ու անվանը հոգեհարազատ:

Անկախ լրատվամիջոցները հպարտանում են ժողովրդավարության և ազատության խնամակալի իրենց դերով: Ըստ էության, նրանց դերն էլ հենց այդ է: Բայց իրական վտանգը սպառնում է այստեղից: Թվում է, թե վաղաժամ է այս ամենի մասին խոսել «նորաթուխ» ժողովրդավարություններում և ամբողջատիրական ու վարչահրամայական վարչակարգից նոր ձերբազատված կամ շեղված երկրներում:

Որպես կանոն, բոլոր շահագրգիռ կողմերը ուշադրություն են հրավիրում պետության կողմից մամուլի ազատությանն ուղղված մեքենայությունների ու չարաշահումների տխուր ավանդույթների վրա, որոնք հատուկ են ամբողջատիրական հասարակություններին: Այս տագնապներն ու մտահոգությունները տրամաբանական են և շատ դեպքերում արդարացիորեն բարձրացված ու ծավալուն քննարկումների առարկա դարձած: Այնուամենայնիվ, իրավունքի ու պարտականության միջև հավասարակշռության թուլացումը չպետք է հիասթափության տեղիք տա: Որքան ավելի մեծ է անցման փուլում գտնվող հասարակությունների դեպի ժողովրդավարություն առաջընթացը, այնքան ավելի զգալի է դառնում լրատվամիջոցների ու նրանց մասնագետների պատասխանատվությունը:

Առհասարակ հասարակությունն անհարիր վիճակում է հայտնվում (և հազիվ թե կարողանա համակերպվել դրան), եթե լրատվամիջոցներն անուշադրության են մատնում իրենց էթիկայի, մասնագիտական և սոցիալական պատասխանատվություններն ու դառնում չարաշահող, խարդավող և անպատասխանատու: Կարևոր է, որ լրատվական մասնագետները սահմանեն, ընդունեն, կիրառեն ու հավատարիմ մնան էթիկայի շիտակ և ազնիվ կանոններին, էթիկա, որն արժանապատվորեն ու արդյունավետ կերպով

and its professionals become.

Society at large will be at a disadvantage (and will hardly reconcile to the situation) if media ignores its ethical, professional and social responsibilities and becomes abusive, manipulative and irresponsible. It is important that media professionals design, adopt, enforce and abide by an unambiguous, very straightforward code of ethics; the ethics which will effectively rule out the misuse and abuse of media power and hold those, who might attempt to do that, accountable.

Of course, free and independent media are central to the development of a healthy civil society, where freedom of speech and of the press are the cornerstones. True citizenship presupposes active participation in collective decision-making and in voluntary associations. This requires intellectual and spiritual freedoms as well as academic and educational freedoms. Media must thus be free to address political issues, to make people's voices heard, while resisting the temptation to get directly involved in politics or to otherwise institutionalize its power.

We cannot have a modern, civilized democratic society unless freedom of speech and freedom of the press are guaranteed first. It is noteworthy that few countries that wish to be considered as modern democracies (or at least as countries that respect fundamental human rights) by the global community reject this principle outright. More often than not they subscribe to it, especially when it is worded in almost abstract fashion. Suffice it to say that each and every one of the Constitutions that have ever been drafted and passed within the last 70 years in sovereign, self-governed or autonomous entities in the vast territory known as the former Soviet Union, contained provisions for freedom of speech.

In order to avoid the pitfalls on our way

«կվտարի» չորրորդ իշխանության ոլորտում կատարվող սխալներն ու չարաշահումները և հետ կպահի նրանց, ովքեր կփորձեն թույլ տալ դրանք:

Անշուշտ, առողջ քաղաքացիական հասարակության զարգացման համար, որտեղ անկյունաքարը խոսքի և մամուլի ազատությունն է, ազատ ու անկախ լրատվությունը կարևոր նշանակություն ունի: Դժարիտ քաղաքացիությունը ենթադրում է մասնակցություն միասնական որոշումներ ընդունելուն և կամավոր հավաքներին: Դրա համար պահանջվում են մտավոր ու հոգևոր, ինչպես նաև ակադեմիական ու կրթական ազատություններ: Այսպես, լրատվամիջոցները պետք է ազատ լինեն արձագանքելու քաղաքական հիմնահարցերին, նպաստեն, որ լսելի դառնա ժողովրդի ձայնը՝ դիմադրելով, սակայն, քաղաքականության մեջ ուղղակիորեն ներգրավվելու կամ այլ կերպ իրենց ազդեցությունն օգտագործելու գայթակղությանը:

Մենք չենք կարող ունենալ ժամանակակից, քաղաքակիրթ ժողովրդավարական հասարակություն, քանի դեռ ապահովված չէ խոսքի և մամուլի ազատությունը: Հարկ է նշել, որ որոշ երկրներ, որոնք ցանկանում են աշխարհի հանրության կողմից դիտվել իբրև ժամանակակից ժողովրդավարություններ (կամ առնվազն երկրներ, որտեղ հարգվում են մարդու հիմնական իրավունքները), հրաժարվում են այս դրույթը լիովին կիրառելուց: Ավելի հաճախ նրանք հակված չեն այդպես վարվել, հատկապես, երբ այդ մասին գրվում է վերացականորեն: Բավական է նշել, որ ցանկացած սահմանադրություն, որի համար երբևէ նախագիծ է ներկայացվել և ընդունվել վերջին 70 տարիների ընթացքում սուվերեն, ինքնակառավարվող և ինքնավար իշխանությունների կողմից այն հսկայական տարածքում, որ Խորհրդային Միություն էր կոչվում, դրույթներ էր պարունակում խոսքի ազատության վերաբերյալ:

Դեպի ժողովրդավարական ու քաղաքացիական հասարակություն տանող մեր ճանապարհին ընկած որոգայթներից խուսափելու համար նորաստեղծ անկախ պետությունները պետք է զգուշավոր ու հետևողական ջանքեր գործադրեն անկախ լրատվամիջոցներին պաշտպանելու նպատակով: Այլ կերպ ասած, սահմանադրության կողմից բավարար չէ միայն մամուլի ու խոսքի ազատության հռչակումը

to democratic, civil society, newly independent states have to make conscious and consistent efforts to safeguard independent mass media. To put it in another way, it is not sufficient (albeit unquestionably important) to just proclaim freedom of the press and freedom of speech by Constitution. This provision should be supported by sophisticated laws and by standing practice.

Department of Public Information Yerevan office, as an entity in the UN system dealing with information, initiated a series of presentations on "Article 19 in the World".

It was our hope that a valuable input of our esteemed speakers from Embassies accredited in Armenia would initiate a serious dialogue and public discussions.

The assumption was that these would be instrumental in drawing public attention to the crucial issues, in clarifying the media and general public's thinking and attitude to these freedoms and the ways of their practical implementation.

One presentation and two round-table discussions that focused specifically on the Armenian situation were planned and held at the very end of the series. That gave us all a unique opportunity to better assess where we are and where we are heading for and how successfully. Lively discussions demonstrated that other countries' experience was critically assessed and used as a conceptual and practical frame of reference.

Each of at least 300 media people as well as trainee and student journalists attended, on an average, 3 or 4 sessions of this 11-month-long series. Media coverage of the events and the feedback drew an ever growing public and media attention to the series.

To make the impact lasting and to contribute to a robust exchange of opinions and to a cross-fertilization of ideas and per-

(չնայած, անտարակույս, անհրաժեշտ է): Այս դրույթի նեցուկ պիտի դառնան խելամիտ օրենքներն ու դրանց կիրառումը:

Հասարակական տեղեկատվության երևանյան գրասենյակը՝ որպես ՄԱԿ-ի համակարգի մարմին, որը գործ ունի տեղեկատվության հետ, նախաձեռնել էր միջոցառումների մի շարք «9-րդ հոդվածն աշխարհում» խորագրով:

Մենք հուսով էինք, որ Հայաստանում հավատարմագրված դեսպանատներից մեր հարգարժան ելույթ ունեցողները կնախաձեռնեն տաք երկխոսություն ու հասարակական քննարկումներ, որոնք կնպաստեն հարցի վերաբերյալ պարզաբանումներին:

Ենթադրվում էր, որ դրանք կօժանդակեն հրավիրելու հասարակության ուշադրությունը կարևոր հիմնահարցերի վրա, հստակեցնելու լրատվամիջոցների և առհասարակ հասարակության մտածելակերպն այս ազատությունների առնչությամբ, ինչպես նաև վերաբերմունքը դրանք գործնականորեն կիրառելու տեսանկյունից:

Հատկապես Հայաստանում առկա իրավիճակի մասին մեկ զեկույց և երկու կլոր սեղաններ կազմակերպվեցին շարքը եզրափակելուց անմիջապես առաջ: Դրանք մեզ բուլոբիս բացառիկ հնարավորություն տվեցին ավելի լավ գնահատելու, թե որտեղ ենք մենք, ուր ենք գնում և ինչ հաջողությամբ: Աշխույժ բանավեճերը ցույց տվեցին, որ մյուս երկրների փորձը քննադատաբար է գնահատվել ու օգտագործվել իբրև կոնցեպտուալ ու պրակտիկ տեղեկատվություն:

11-ամսյա այս շարքի ընթացքում միջին հաշվով 3 կամ 4 հանդիպումների է մասնակցել լրատվության բնագավառի առնվազն 300 աշխատակից, ինչպես նաև դասավանդողներ ու ուսանողներ:

Լրատվամիջոցների լուսաբանումները շարքի վրա հրավիրեցին հասարակության ու այլ լրատվամիջոցների հարաճուն ուշադրությունը:

Այս միջոցառումների ազդեցությունն էլ ավելի տևական դարձնելու և կարծիքների բուռն փոխանակմանը նպաստելու համար, ինչպես նաև գաղափարների ու հեռանկարների խաչասերմանը նպաստելու նպատակով, ՄԱԿ-ի հասարակական տեղեկատվության երևանյան գրասենյակը հանձն է առել այս հրատարակությունը:

Ես ուզում եմ հավաստել, որ առանց ՄԱԿ-ի

spectives, the UNDPI Yerevan office is undertaking this publication.

I wish to acknowledge that without constant encouragement, assistance, oversight and funding generously provided by the UN Resident Coordinator Ms. Katiča Cekalovic, this important project would have never materialized. The role of Ms. Cekalovic in insuring the success of the whole undertaking has been crucial.

I wish to stress, however, that the responsibility for the implementation of the project, for possible mistakes and other inadvertent imperfections rests entirely with the UNDPI Yerevan Office.

The views, ideas and opinions expressed in the presentations are those of the authors and do not necessarily coincide with those of the UN Yerevan Office.

The presentations in this publication are arranged in chronological order.

We will be grateful for any comments, reactions, recommendations and criticisms related to this publication.

մշտական համակարգող տիկ. Կատիցա Չեկալովիչի քաջալերող օգնության, հսկողության ու առատաձեռն ֆինանսավորման, այս կարևոր նախագիծը նյութեղեն չէր դառնա: Մեծ է տիկ. Կատիցայի դերը այս ամբողջ նախաձեռնության հաջողությունը երաշխավորելու գործում:

Ուզում եմ ընդգծել նաև, որ նախագծի իրականացման պատասխանատվությունը հնարավոր սխալների և վրիպումների համար ամբողջապես ընկած է ՄԱԿ-ի հասարակական տեղեկատվության բաժնի երևանյան գրասենյակի վրա: Միաժամանակ պարտադիր չէ, որ ժողովածուի մեջ զետեղված զեկույցներում արտահայտված տեսակետները համընկնեն ՄԱԿ-ի գրասենյակի կարծիքի հետ:

Նյութերի հաջորդականությունը համընկնում է շարքի ժամանակագրությանը:

Մենք երախտապարտ կլինենք այս հրատարակության հետ կապված ցանկացած մեկնաբանության, արձագանքի, խորհուրդի ու դիտողության համար:

ԱՄՆ USA

US Embassy Public Affairs Officer
in Armenia
Morgan Liddick

Հայաստանում ԱՄՆ դեսպանատան
Հասարակայնության հետ կապերի բաժնի տնօրեն
Մորգան Լիդիք



Եկեք մի փոքր զրուցենք 19-րդ հոդվածի շուրջ: Ես նկատի ունեմ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածը: Այսպես ուրեմն, ինչի՞ մասին է այն: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածը երաշխավորում է ձեր ազատ մտածելու, խոսելու, տպագրելու, տեղեկատվություն ստանալու և տարածելու իրավունքը՝ անկախ պետական սահմաններից: Այսօր դուք մի փոքր կծանոթանաք, թե ինչպես է աշխատում ամերիկյան լրագրողը:

19-րդ հոդված: Կիրառվում է այն Միացյալ Նահանգներում: Անշուշտ, կիրառվում է: Եվ կիրառվում է ամենուր: Բայց, իհարկե, մամուլի, խոսքի, հրատարակման և հեռարձակման հարցերում մենք մի փոքր առաջ ենք ՄԱԿ-ից: Քանի որ մեր հանրապետության առանցքը հիմնականում ընթացիկ զանգվածային լրատվությունն է, կարող եք բացարձակապես վստահ լինել մեր ղեկավարների վրա, որոնք ՋԼՄ-ների համար հրատարակելու, հանրությանը դիմելու և նրա զգոնությունը բարձրացնելու հնարավորություն ստեղծելու նպատակով ոչ մի ջանք չեն խնայում: Այս իրավունքները ամրագրված են մեր Սահմանադրությամբ, և որևէ վերապահում չկա: Ես համոզված եմ, որ ձեզանից ոմանք առնվազն ծանոթ են մեր Սահմանադրության այդ կետերին: Կոնգրեսը չի կարող որևէ օրենք ընդունել, որը կսահմանափակի մտածելու, խոսելու, ցանկացած նյութի հայթայթման ու հրատարակման ազատությունը: Եվ քանի որ մենք շուրջ 140 տարով առաջ ենք ՄԱԿ-ից, այս բնագավառում պարծենալու առիթ ունենք: Բայց

Let us start out by talking a little bit about Article 19. I assume it is Article 19 of the Universal Declaration of Human Rights. And just one thing: what does Article 19 say? Article 19 of the Universal Declaration of Human Rights guarantees your right to think what you want, say what you want, print what you want, receive, transmit information regardless of national boundaries. Today you will see a little bit of how an American journalist operates.

Article 19. Does it apply in the United



States? Of course, it does. It applies everywhere. But, of course, in the question of the freedom of the press, speech, publication and broadcasting, we were a little bit ahead of the United Nations. Since our Republic was primarily the product of the mass media of the day, you can be absolutely sure of our founders who took great pains to ensure that they would have the right to publish, to address the public and raise public concerns. These rights are in our Constitution, and they are without reservation. And I am sure that some of you, at least, are familiar with those provisions of our Constitution. Congress can make no law restricting freedom of thought, speech, assembly or publication whatsoever. And since we are about a 140 years ahead of the UN, we have somewhat of the pride in place. Does this mean that the government never tries to regulate the media? Of course, it tries, and every time it does, the answer is given in tall and no uncertain terms by our Supreme Court, "I am sorry but you can't do that". There are very few exceptions to this rule. They generally have to do with situations in which the government can show that publication of information would lead to someone's death, someone, who is, for example, participating in the federal witness relocation project. It is a project where people give testimony in important criminal cases and then they are moved and their identities are changed. So, if you know some of these people and you are a journalist, you cannot publish that information for obvious reasons. Someone will hunt and kill them. Besides this kind of exceptions, the rest is open in the US.

We can publish things about presidents, speakers of the House, senators, congressmen, judges, your next-door neighbor. Not much anybody can do about it, especially if someone is a public figure.

So, are we in favor of Article 19? We sure are. We think everybody has to work like that. Of course, any journalist in that kind of situation requires something. There is a price. And it is this: you have to be dedicated, dedicated to fact, dedicated to the journalistic process, dedicated to informing the public. If you cannot do these things, give it up. You will never

արդյո՞ք դա նշանակում է, որ կառավարությունը երբեք չի փորձում կարգավորել լրատվությունը: Իհարկե փորձում է: Սակայն յուրաքանչյուր փորձի դեպքում պատասխանն արդեն իսկ տրված է լինում Գերագույն դատարանի կողմից՝ վերամբարձ ու հստակ տերմինաբանությամբ: Այնպես որ, խորհուրդ չեմ տա միջամտել: Բացառություններ գրեթե չեն պատահում: Միջամտությունն այն դեպքում է լինում, երբ կառավարությունը համոզված է, որ տեղեկատվության հրապարակումը որևէ մեկի մահվան պատճառ կարող է դառնալ: Այնպիսի մարդու, որն, օրինակ, ըստ ծրագրի՝ տեղափոխման ենթակա պետական վկա է: Մի ծրագիր, որի դեպքում կարևոր քրեական գործերով ցուցմունքներ տալուց հետո ցուցմունք տվող անձանց տեղափոխում են և փոխում նրանց անձը հաստատող տվյալները: Այսպիսով, եթե դու լրագրող ես և ճանաչում ես այդպիսի մարդու, չես կարող հրապարակել այդ տեղեկատվությունը հասկանալի պատճառներով: Որևէ մեկը կհետապնդի և կսպանի նրան: Բացի այսպիսի դեպքերից՝ մնացյալը ազատ է ԱՄՆ-ում:

Կարող եք լուրեր հրապարակել նախագահների, Սպիտակ տան խոսնակների, սենատորների, դատավորների, ձեր անմիջական հարևանների մասին: Ոչ ոք ոչինչ չի կարող անել, եթե նույնիսկ հասարակական դեմք է:

Այսպիսով, մենք կո՞ղմ ենք 19-րդ հոդվածին: Անշուշտ: Կարծում եմ, ամեն ոք պետք է նման ձևով աշխատի: Իհարկե, ցանկացած թղթակից նման իրավիճակում հատուկ շահագրգռություն ունի: Բայց կա մի որոշակի արժեք, այն, որ դու պետք է հավատարիմ լինես. հավատարիմ՝ փաստերին, լրագրության կանոններին, հանրությանը տեղեկատվությամբ ապահովելուն: Եթե անկարող ես իրականացնել այս բոլորը, ապա մի զբաղվիր այդ գործով: Որպես թղթակից՝ դու որևէ արժեք չես ունենա:

Ո՞րն է լրագրողի աշխատանքը: Ի՞նչ պետք է նրանք անեն: ԱՄՆ-ում ենթադրվում է, որ նրանք մի քանի բան պետք է անեն: Նախ՝ հանրությանը ապահովեն տեղեկատվությամբ: Դա նշանակում է նորություններ հայթայթել հնարավորին չափ արագ և համոզված լինել փաստերի իսկության մեջ: Արագությունը անիմաստ է, եթե տեղեկատվությունը ճիշտ չէ: Հիշեք այս: ԱՄՆ-ի լրագրողների երկրորդ կարևոր առաքելությունը, ըստ իս՝ բավական

be worth anything as a reporter.

What is the journalists' work? What should they do? In the US we think they should do a couple of things. First, they should inform the public. This means getting the news out as fast as you can, which means making certain that you have your facts right. Fast is worthless, if it is wrong. Remember that. The second thing the journalists do in the role they perform in the US, I hope for one worth thing, is to watch the government.

The founding fathers believed, and that belief is very widespread still today, that the government, if left to itself, will slowly take people's liberties away. I do not know where people have got to know that idea. One of the ways to prevent that is to make sure that citizens are informed about everything the government does. What does that mean? Does that mean that the TV stations in the US devote hours on end televising debates in the congress? No. There is only one station that does that in the US, and it is cable, one out of the several thousand stations. If you are a real political junky you can watch it.

Most rational television stations do not do things like that. Instead, they do interviews, they go out and research stories, they talk to ordinary people, they develop leads, and they never give anybody more than 2 minutes of airtime. And the president is on air if he is giving a major address. Otherwise, he is back in the 92nd place with the rest of us. For a journalist the president is nobody special. He can be an interesting story from time to time. But it does not get much of special consideration.

In the US we do not have laws through which the people become enemies of the people. A large majority of the time when the US Government goes to court to prevent publication or to punish someone for publishing something, the answer is no. The government loses more of those cases than wins.

Now we are going to talk about the other side of the Article 19 coin. Let us assume we are in another country, not in the US, say, in Canada, and you have constitutional protections for speech, publication, broadcasting, etc. You, too, are in compliance with Article

արժեքավոր, կառավարությանը հետևելն է:

Մեր հիմնադիր այրերը հավատացած էին, և առ այսօր էլ այդ կարծիքը կա, որ եթե կառավարությանը չհսկեն, ապա այն աստիճանաբար մարդկանց կրկի իրենց ազատություններից: Ես չգիտեմ, թե որտեղից է մարդկանց մեջ այդ համոզմունքը: Կանխելու ուղիներից մեկը հանրությանը կառավարության գործունեության մասին տեղեկատվությամբ ապահովելն է: Դա ի՞նչ է նշանակում: Արդյո՞ք այն, որ հեռուստատեսության կայանները ԱՄՆ-ում անսպառ ժամեր են տրամադրում կոնգրեսի հեռուստաբանավեճերին: Բնավ՝ ոչ: ԱՄՆ-ում միայն մեկ կայան կա, մեկ ալիք, որ այդպես է վարվում, միակը՝ մի քանի հազար կայանների մեջ: Եթե դու իսկական քաղաքական մոլեռանդ ես, կարող ես դիտել այն:

Շատ խոշոր հեռուստակայաններ մման բան չեն անում: Նրանք հարցազրույցներ են անցկացնում, դուրս են գալիս նյութ որոնելու, զրուցում են հասարակ մարդկանց հետ, նախաձեռնություն են հանդես բերում և երբեք 2 րոպեից ավելի եթերաժամ չեն տրամադրում որևէ մեկին: Իսկ նախագահը եթեր է դուրս գալիս, եթե կարևոր ուղերձ ունի: Մնացած դեպքերում նա մեզ մման վերջից առաջին տեղն է զբաղեցնում: Լրագրողների համար նախագահը բացառիկ մարդ չէ: Երբեմն անդրադառնում են նրա անձին, բայց և այնպես այնքան էլ մեծ ուշադրության չի արժանանում:

ԱՄՆ-ում մենք օրենքներ չունենք, որոնք թշնամացնեն մարդկանց: Շատ դեպքերում, երբ ԱՄՆ-ի կառավարությունը դիմում է դատարան՝ կանխելու որևէ հրապարակում կամ պատժելու որևէ մեկին ինչ-որ բան հրապարակելու համար, պատասխանը մեկն է՝ ոչ: Հարուցված գործերից շատերը կառավարությունը ավելի շուտ տանուլ է տալիս, քան շահում:

Այժմ քննարկենք 19-րդ Հոդվածի երկրորդ երեսը: Ենթադրենք, թե մենք ԱՄՆ-ում չենք, այլ մի ուրիշ երկրում, ասենք՝ Կանադայում: Դուք ունեք խոսքի, տպագրելու, հեռարձակելու և այլնի սահմանադրական իրավունք: Դու նույնպես համաձայն ես 19-րդ հոդվածի հետ: Բայց դու կանադացի լրագրող ես: Ի՞նչ օգուտ քեզ այդ օրինական պաշտպանությունից, եթե դու ոչ հարցնելու, ոչ էլ ասելու բան ունես: Լրագրողի գործը մասնագիտություն չէ, կոչում է: Այն

19. Let us say you are a Canadian journalist. What good do these elaborate legal protections do to you if you have got no questions to ask and nothing to say? Journalism is not only a profession. It's a calling. It entails responsibilities. I come back to the question, why bother with Article 19? If you got nothing to say, it does not really matter, does it?

Let us talk about the press a little. The same principles apply to the print media as they do to electronic media. You have to decide what in the world that goes you give people that they need. If you cannot answer that question, you are on your way out. That applies to just about every kind of media there is really. It also works for radio, by the way. So, in dealing with these questions of rights and freedoms, it is well to talk about what is protected, what is allowed and what is freely done. It is always less comfortable talking what responsibilities are, what kind of work there is to be done and where everybody's place is in the process.

Journalism is a hard work. I used to do it. It was harder than what I do now. But it is good work because you are both the people's voice and the people's ears. It entails a lot of responsibility. Because in a very real way journalists help create their societies and their countries. As story tellers, you have a lot of power. That means you must use this power wisely and to a better end.

պատասխանատվություն է: Ես իմ հարցին եմ անդրադառնում. ո՞ւմ է պետք 19-րդ հոդվածը, եթե ասելիք չունես: Իրոք պետք չէ, այնպես չէ՞:

Այժմ խոսենք մամուլի մասին: Նույն սկզբունքներն են կիրառվում գրավոր լրատվության մեջ: Դու պետք է որոշես, թե մարդկանց անհրաժեշտ լրատվություն տալը ինչ գին կունենա քեզ համար: Եթե չես կարող այս հարցին պատասխանել, ուրեմն կշեղվես քո ուղուց: Սա վերաբերում է լրատվության բոլոր տեսակներին: Նույն օրենքներն են ռադիոյում, իմիջալոց: Այսպիսով, երբ գործ ունենք իրավունքների և ազատությունների հետ, ավելի լավ է խոսենք, թե ինչ է պաշտպանվում, ինչ՝ թուլատրվում և ինչ կարելի է անել: Շատ ավելի դժվար է խոսել պարտականությունների, անելիքների և յուրաքանչյուրի դերի մասին:

Լրագրությունը դժվար աշխատանք է: Ես զբաղվել եմ դրանով: Այն ավելի ծանր էր, քան իմ այսօրվա աշխատանքը: Բայց կարևոր գործ է, քանի որ դու մարդկանց ձայնն ես, նրանց ականջը: Այն պատասխանատվությունների մի ամբողջ շարք է, քանի որ իրականում լրագրողները օգնում են կառուցել հասարակարգերը և իրենց երկրները: Որպես պատմություն կերտողներ՝ դուք մեծ ուժ եք: Դա նշանակում է, որ դուք պետք է այն խելամտորեն օգտագործեք և լավագույն արդյունքի հասցնեք:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ RUSSIAN FEDERATION

*Ambassador Extraordinary and Plenipotentiary
of Russian Federation in Armenia*
Andrei Urnov

*Հայաստանում Ռուսաստանի Դաշնության
Արտակարգ և լիազոր դեսպան
Անդրեյ Ուռնով*



Let me start with a disclaimer. I am in no way an expert on mass media; hence the goal of my talk is basically to provide you with firsthand information.

The text of Article 19 has just been read out for us. It is drawn in very general terms and places virtually no restrictions. To assess the legal aspects of the situation with these rights, I would like to attract your attention to Article 29 of the Constitution of Russian Federation. It is grounded in and proceeds from the provisions of Article 19. Freedom of thought and speech is guaranteed to everyone. No one can be forced to express his or her beliefs or to relinquish

Թույլ տվեք սկսել իմ խոսքը որոշ առարկությամբ՝ ասելով, որ ես բնավ էլ լրատվության փորձագետ չեմ, ուստի իմ գրույցի նպատակը ձեզ անմիջական տեղեկատվությամբ ապահովելն է:

Հենց նոր մեզ համար ընթերցվեց 19-րդ հոդվածը, որը շատ ընդհանուր ձևով է ներկայացված և, ըստ էության, ոչ մի սահմանափակում չի նախատեսում: Այս բնագավառում իշխող իրավիճակը իրավաբանական տեսանկյունից գնահատելու համար ես կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 29-րդ հոդվածի վրա: Այն հիմնված է և ելնում է 19-րդ հոդվածի դրույթներից: Յուրաքանչյուր ոք ունի մտածելու և խոսքի ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող մյուսներին հարկադրել իր կարծիքը կամ ստիպել հրաժարվել սեփական կարծիքից: Փաստորեն, յուրաքանչյուր ոք իրավունք ունի օրինական լրատվության միջոցներով ազատ կերպով տեղեկատվություն փնտրել, փոխանակել և տարածել: Երաշխավորվում է զանգվածային լրատվության ազատությունը, և արգելվում է գրաքննությունը:

Այս ամենն, իհարկե, լավ է հնչում: Այնուամենայնիվ, ի հակադրություն 19-րդ հոդվածի, կան որոշ սահմանափակումներ: Իսկ ի՞նչ չի թույլատրվում անել: Արգելվում է այնպիսի քարոզչությունը կամ պաշտպանությունը, որը կարող է սոցիալական, ռասայական, էթնիկական, կրոնական ատելություն կամ թշնամանք հարուցել, ինչպես նաև սոցիալական, ռասայական, էթնիկական, լեզվական գերիշխանության քարոզչությունը: Չի թույլատրվում նաև հրապարակել պետական գաղտնիքները: Կարծում եմ սրանք բոլորն էլ օրինական սահմանափակումներ են:

Իմ եզրակացությունը հետևյալն է. Ռուսաստանի Սահմանադրությունը, մասնավորապես 29-րդ



them. Each and every individual has in fact the right to freely search for, receive, share, produce and disseminate information through any legitimate means. Freedom of mass media is guaranteed, whereas censorship has been banned.

All this sounds rather good. However, in contrast to Article 19 there are some restrictions. Well, what is not allowed to do? Propaganda or advocacy that would stir social, racial, ethnic or religious hatred and enmity as well as propaganda of social, racial, ethnic or linguistic superiority is prohibited. Neither is it allowed to divulge State secrets. I believe these are legitimate restrictions.

My conclusion is that Russian Constitution, and specifically Article 29, is kindred in spirit to Article 19 of the UDHR. In that respect I would like to state (and I really mean it) that if indeed we have achieved something during these past turbulent years, that is undoubtedly a drastically new situation with freedom of speech and with new opportunities for mass media.

It is nothing less than a revolution. The most convincing argument for Russians that this assessment is correct is a possibility to criticize the authorities. That was unimaginable for Russia for many years and not only under the Communist regime. Unrestrained criticism was never welcomed in the Tsarist times as well.

Now, however, such criticism is a reality of life. That has been proved for a fact. Let me remind you of a most radical newspaper "Zavtra/Tomorrow", slightly less radical "Sovetskaya Rossiya/Soviet Russia" or "Kooklij/Puppets" political TV show. Critical materials abound in other publications, too. Thus, considerable progress is undeniable.

There are some achievements in economic terms as well. As professionals, you may be aware of the fact that Russian publications are exempt from VAT (20%), profit tax (13%) and duties on State-owned professional equipment. Besides, mass media offices are charged for the utilities at the rates set for Government offices.

հոդվածը, կառուցված է համաձայն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածի: Այս առումով ես կցանկանայի նշել, որ եթե մենք իսկապես ինչ-որ բանի հասել ենք այս վերջին փոթորկալից տարիների ընթացքում, ապա խոսքի ազատության բնագավառում նոր արմատական փոփոխությունների և զանգվածային լրատվության միջոցների հնարավորությունների շնորհիվ:

Սա պակաս հեղափոխություն չէ: Այս գնահատականը ճիշտ է այն առումով, որ հնարավորություն է ընձեռվում քննադատել իշխանություններին: Մի բան, որ Ռուսաստանում անհնար է եղել տասնյակ տարիների ընթացքում և ոչ միայն կոմունիստական ռեժիմի օրոք: Անսահմանափակ քննադատությունը ցարական ժամանակներում ևս երբեք ողջունելի չի եղել:

Ներկայում, սակայն, այդպիսի քննադատությունն իրականություն է: Դա ապացուցված է փաստերով: Կարելի է նշել ամենաարմատական «Ջավտրա» թերթը, պակաս արմատական «Սովետսկայա Ռոսիա» թերթը կամ հեռուստատեսային «Կուկլի» քաղաքական շոու ծրագիրը: Մյուս հրատարակությունները նույնպես ողողված են քննադատական նյութերով: Հետևաբար, էական առաջընթացն անժխտելի է:

Տնտեսական առումով նույնպես կան որոշակի ձեռքբերումներ: Որպես մասնագետներ, դուք պետք է որ ավելի լավ տեղյակ լինեք՝ ռուսական հրատարակություններն ազատված են ավելացված արժեքի հարկից (20%), շահութահարկից՝ 13%, պետության սեփականությունը հանդիսացող մասնագիտական սարքավորումների համար գանձվող տուրքերից: Բացի այդ, զանգվածային լրատվության գրասենյակներից կենցաղային ծառայությունների համար գանձումը կատարվում է կառավարական գրասենյակների համար նախատեսված դրույքաչափերով:

Այդուհանդերձ, ռուսական մամուլը դեռևս մի շարք տնտեսական հիմնախնդիրների է բախվում: Տպագրությունը ցածրորակ է ու թանկ: Բացի այդ, արտասահմանում հրատարակելն ավելի է ժան է նստում, քանի որ հրատարակությունն այնտեղ հարկերից ազատվում է (բայց ոչ տպագրատան սարքավորումները): Արդյունքում, երկիրը և հայրենական արտադրողները տարեկան կորցնում են մոտ 1,5 միլիոն ԱՄՆ դոլար: Մինչդեռ այդ գումարը ավելի արդյունավետ կարող էր օգտագործվել: Մասնավորապես, ավելի բարենպաստ դրույքաչափերի և տարիֆային համակարգի առկայության դեպքում, այն կարող էր հատկացվել տպագրատների վերանորոգման համար:

However, Russian media faces a plethora of serious economic problems. Newsprint is low quality and expensive. Besides, it is cheaper to commission a publication abroad since publications are tax-exempt, whereas printing-house equipment is not. As a result about 1,5 million dollars are lost annually for domestic producers and the country. That money could have been used more efficiently. In particular, it could have been earmarked for the retrofit of printing-houses, if more favorable rates and tariffs were in place.

I would like to point out some legal imperfections that pose certain problems for media people. Two laws regulate mass media activities in Russia. The first one, the Law on Mass Media, stipulates that a founder of a media outlet has to register. There is no provision, however, in the law regarding a publisher and/or owner, whether it is physical or legal person. Thus, the existing situation provides a considerable leeway to some individuals or entities and significantly limits the opportunity for others. The second law, the Law on Joint-Stock Companies (JSC), stipulates that media outlets, in their capacity of JSC, must have an owner. The law is flawed, however, in that it does not regulate the relations between owners and employees in terms of the legitimate distinctiveness of mass media.

That is the reason why those who wish to rectify the situation and amend the laws, make three major demands. First, official notification of who the owner of a given media outlet is has to be made mandatory. Second, the media outlet's budget, book-keeping and transactions should be made entirely transparent. Such a provision will enable all those interested to discover whether a given print or electronic media outlet is economically viable and sustainable or additional funding is channeled into it by the owner(s) who are willing to bear the costs. Third issue that has to be resolved yet is clarification and detailed regulation of relations between owners, employees, editors-in-chief and contributing authors.

Now a few more words are in order.

Ես կցանկանայի մատնանշել նաև մի շարք իրավական թերություններ, որոնք որոշակի հիմնախնդիրներ են ստեղծում լրատվության բնագավառում աշխատող անձանց համար: Ռուսաստանում լրատվական միջոցների գործունեությունը կարգավորող երկու օրենք է նախատեսված: Առաջինը՝ Ջանգվածային լրատվության մասին օրենքը, սահմանում է, որ լրատվական միջոցի հիմնադիրը պետք է գրանցվի: Մինչդեռ այդ օրենքում որպես ֆիզիկական կամ իրավաբանական անձ հրատարակողի կամ սեփականատիրոջ վերաբերյալ որևէ դրույթ չկա: Այսպիսով, առկա իրավիճակը շոշափելի հնարավորություններ է ապահովում որոշ անձանց և ձեռնարկությունների համար և զգալիորեն սահմանափակում մյուսներին: Երկրորդը՝ Բաժնետիրական ընկերությունների (ԲԸ) մասին օրենքը, սահմանում է, որ լրատվության միջոցները ԲԸ-ի կարգավիճակով պետք է ունենան սեփականատեր: Այնուամենայնիվ, այս օրենքը թերի է այնքանով, որ այն չի կարգավորում սեփականատիրոջ և աշխատողների միջև հարաբերությունները՝ զանգվածային լրատվության առանձնահատկությունից ելնելով: Այդ է պատճառը, որ նրանք, ովքեր ցանկանում են «շտեկ» իրավիճակը և լրացումներ կատարել օրենքներում, իրենց առջև խնդիր են դրել բավարարել 3 հիմնական պահանջ: Նախ՝ պետք է պարտադիր դառնա այն պաշտոնական հայտարարությունը, թե ով է հանդիսանում տվյալ լրատվական միջոցի սեփականատերը: Երկրորդ՝ միանգամայն հստակեցված պետք է լինեն լրատվության միջոցի բյուջեն, հաշվապահությունը և գործարքները: Այդպիսի դրույթը հնարավորություն կտա շահագրգիռ անձանց բացահայտել տվյալ հրատարակության կամ էլեկտրոնային լրատվության տնտեսապես աշխատունակությունը և կայունությունը կամ լրացուցիչ հիմնադրամ բացել այն սեփականատերերի կողմից, ովքեր ցանկություն ունեն իրենց վրա վերցնել ծախսերը: Եվ վերջապես երրորդ պահանջը, որը դեռևս լուծում է պահանջում, սեփականատերերի, աշխատողների, գլխավոր խմբագիրների և թղթակից հեղինակների միջև հարաբերությունների պարզեցումն է:

Իսկ այժմ մի քանի նկատառում: Բացարձակ ազատություն, իհարկե, անհնար է: Դա վերաբերում է նաև տեղեկատվության ազատությանը: Այնուամենայնիվ, դրամը սահմանափակումներ դնող առաջնային գործոն է: Հռչակված է բոլորի համար ազատ կերպով թերթ կամ ամսագիր հիմնելու իրավունքը: Սակայն ոչ բոլորն են ի վիճակի

Absolute, unlimited freedom is unfeasible. The same holds true for freedom of information. Money, however, is a primary factor that puts restrictions. The freedom to start a newspaper or magazine has been declared for all. But not everyone is in a position to start a periodical since availability of money is the prerequisite, which drastically reduces the number of those who would be able to enjoy these rights and freedoms to the full. The information market places other constraints, even on individuals like journalists who do not contend to own or control a media outlet.

Ուզում եմ անդրադառնալ լրագրողների կրթության հարցերին: Իհարկե, ոչ ոք լրագրող չի ծնվում: Յուրաքանչյուրը՝ իբրև լրագրող, որոշ գիտելիքներ և փորձ է ձեռք բերում իր ծավալած գործունեության ընթացքում: Գերմանիայի համալսարաններում լրագրություն է դասավանդվում: Նման դասընթացներ են կազմակերպվում նաև Մյունխենում գտնվող լրագրողներ պատրաստող հատուկ դպրոցներում, և շատ լրագրողների ցանկությունն է սովորել այդ դպրոցումներում: Լրագրող դառնալու այլ ճանապարհներ ևս կան, ինչպես օրինակ, կամավորական սկզբունքով, այսինքն, երբ փոքր պարտականություններ կատարելով՝ ձեռք ես բերում այն փորձը, որն անհրաժեշտ է լրագրող դառնալու համար:

Թույլ տվեք ևս մեկ անգամ շեշտել, որ կարծիքի արտահայտման ազատությունը մարդու ամենահիմնական իրավունքներից մեկն է, որը պետք է ապահովվի նաև մամուլում: Ուզում եմ նաև հիշեցնել, որ մամուլի յուրաքանչյուր աշխատող պետք է իմանա, որ ինքը պատասխանատվություն է կրում իր տված տեղեկատվության և մեկնաբանության համար:

ԼԻԲԱՆԱՆ LEBANON

Chargé d’Affaires of Lebanon in Armenia
Saad Zakhia

*Հայաստանում Լիբանանի
ժամանակավոր հավատարմատար՝
Սաադ Ջախիա*



Pursuant to the Preamble of the Constitution, Lebanon is one of the founders of the United Nations, and it still remains faithful to the UN Charter and the Declaration of Human Rights, the provisions of which are maintained throughout the State, in all the spheres without exception. Lebanon is a Parliamentary Republic based on the respect towards public freedom in particular, and the right to expression and faith. It has also undertaken to establish public justice, equity and equal rights and obligations for all without distinction and discrimination. Article 13 of the Constitution of Lebanon fully resembles Article 19 of the Universal Declaration of Human Rights, and it

Ըստ Սահմանադրության նախաբանի, Լիբանանը ՄԱԿ-ի հիմնադիր անդամ է և հավատարիմ է ՄԱԿ-ի կանոնադրությանն ու Մարդու իրավունքների հռչակագրին և պետության, առանց բացառության, բոլոր դաշտերում հաստատում է այս հիմնադրույթները:

Լիբանանը խորհրդարանական հանրապետություն է, որի հիմքում ընկած է հարգանքը հասարակության ազատության, հատկապես արտահայտվելու ու հավատի իրավունքի նկատմամբ, նա միաժամանակ ձգտում է բոլոր քաղաքացիների հարաբերություններում արդարության, լրիվ անաչառության և հավասար իրավունքների ու պարտավորությունների՝ առանց տարբերության կամ խտրականության:

Լիբանանի Սահմանադրության 13-րդ հոդվածն արտացոլում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածը և հաստատում գրավոր ու բանավոր խոսքում «համոզմունքների և արտահայտվելու ազատությունը»: Օրենքը երաշխավորում է տպագրության և հավաքների ազատությունը և:

1962թ. ընդունված հրատարակության մասին օրենքն իր ուղղումներով ու 1-ին հոդվածով, կազմակերպում է բոլոր հրատարակությունների, թերթերի, գրադարանների ու տեղեկատվություն տարածող այլ հաստատությունների աշխատանքը: Վերջիններս ազատ են, և միայն սույն օրենքն է վերահսկում նրանց ազատությունը:

Տվյալ օրենքը հնարավորություն է տալիս Լիբանանի տարածքում թերթերի և այլ հրատարակությունների աշխատանքը կազմակերպել՝ պահանջելով նրանցից որոշակի պայմաններ ապահովել իրենց գործունեության իրականացման համար արտոնագիր ստանալու համար:

Ընդհանուր առմամբ, համաձայն 12-րդ հոդվածի, օրենքն արգելում է հետևյալ տեղեկությունների

recognizes "the freedom of opinion and expression", both oral or in writing. The Law also ensures freedom of publication and associations.

This Law adopted in 1962 with its Amendments and Article 1 regulates the operation of all types of publications, print media, libraries and relevant disseminating institutions. They all enjoy freedom under overall supervision of this Law. The Law provides opportunity within the territory of Lebanon to organize the operation of the print media and other publications and stipulates that their licensing is contingent on meeting some requirements.

In general, pursuant to Article 12, the Law prohibits:

1. to publicize legal proceedings materials until the outcome is finally reached,
2. to publicize resolutions on legal civil acts (such as marriage, divorce, etc.), decrees of the Ministers' Board,
3. to publicize discussions of the closed parliamentary sessions,
4. to publicize research related to administrative issues,
5. to publicize confidential documents,
6. to publicize reports, books and letters of moral behavior for mercenary ends.

Article 16 prohibits using print media and other publications for the purposes of black-mail.

In accordance with Article 17, print media and other publications are prohibited to give offence and to insult.

It is prohibited by Article 23 to criticize the President (as well as foreign presidents) tackling issues of his private life.

According to Articles 14 and 25, it is prohibited to take proceedings and tackle the racial and religious issues that may threaten the integrity of the State.

Articles 38 and 39 allow the government to exercise supervision over the publication of news in such exceptional events as foreign and internal affairs, foreign and internal military actions, revolution and war.

Recently the Law on TV and radio broadcasting has been recently adopted after private TV companies emerged. The joint "TV Liban" company operated before the war, which was entitled to broadcast information through television. The Law on Broadcasting obliges all the television, radio and political institutions to respect:

հրապարակումը.

1. մինչև քրեական հետախուզությունների ավարտը դրանց արդյունքները,

2. քաղաքացիական օրենսդրական ակտերի (ամուսնություն, ապահարգան և այլն) դատավճիռները, Նախարարների խորհրդի որոշումները,

3. պառլամենտի մատաչրջանների դրմփակ քննարկումները,

4. վարչական հարցերի վերաբերյալ ուսումնասիրությունները,

5. գաղտնի փաստաթղթերը,

6. բարոյական ու հասարակական վարքը շահարկող գեկույցները, գրքերն ու նամակները:

16-րդ հոդվածով արգելվում է օգտագործել թերթերն ու հրատարակությունները շանտաժի նպատակով:

17-րդ հոդվածով արգելվում է լրագրերին ու հրատարակչություններին կիրառել անարգանքներ և վիրավորանքներ:

23-րդ հոդվածով արգելվում է քննադատել նախագահին (նաև օտարերկրյա նախագահներին)՝ շոշափելով նրանց անձնական կյանքին վերաբերող հարցեր:

Համաձայն 24-25-րդ հոդվածների, արգելվում է հարուցել քրեական գործ և քննարկել ռասայական ու կրոնական խնդիրներ, սպառնալ պետական ամբողջականությանը:

38-39-րդ հոդվածները թույլ են տալիս կառավարությանը հսկողություն սահմանել լուրերի հրապարակման վրա այնպիսի բացառիկ դեպքերի պայմաններում, ինչպիսիք արտաքին ու ներքին գործերն են, արտաքին կամ ներքին ռազմական գործողությունները, հեղափոխությունը կամ պատերազմը:

Հեռուստատեսության և ռադիոհաղորդումների մասին օրենքն ընդունվել է վերջերս՝ հեռուստատեսային մասնավոր ընկերությունների կատարելագործումից հետո: Պատերազմից առաջ գործում էր «TV Liban» միացյալ համատեղ ընկերությունը, որը հեռուստատեսությամբ հաղորդումներ հեռարձակելու իրավունք ուներ:

Հեռարձակման օրենքը պարտավորեցնում է հեռուստատեսային և ռադիոյի կամ քաղաքական բոլոր հաստատություններին հարգել՝

1. քարոզչական գործունեության ազատությունն ու ժողովրդավարությունը, որի նպատակը տարբեր բնույթի կարծիքներ հեռարձակելն է,

2. մարդու իրավունքներն ու ուրիշների ազատությունը, հասարակության պաշտպանությունն ու ազգային անվտանգությունը,

3. գրական, գեղարվեստական և առևտրական

1. freedom and democracy during the campaign activities the pivotal role of which belongs to disseminating various opinions,

2. human rights and freedom of other people, protection of public and national security,

3. literary, artistic and commercial rights.

The Law prohibits broadcasting news that may have an adverse impact on public peace, morals and national economy, and the dissemination of information that may do harm to currency system.

It is prohibited by the Law to broadcast any information and reports that will do harm to public and religious institutions and to morals. Particularly, the Law prohibits physical and moral violence, terrorism, stirring religious and racial hatred and intolerance and digression from moral behavior.

It is obvious that the norms of the Law provide basis and framework for the incorporation of general ideas of the Universal Declaration of Human Rights without compromising the purpose of preserving the national integrity and interests of national security.

The rights to free expression and the freedom of publication have been respected in Lebanon even during the 17-year war period.

There are 40 political and cultural newspapers, which carry out their activities freely and without interference. We may also state that freedom of print media is ensured in Lebanon. The publications sometimes further the agenda not only of the groups from within the country but also from other Arab and Near East countries.

Book exhibitions are annually opened in various towns of Lebanon. Eight TV and radio broadcasting companies have been granted broadcasting certificates. The most famous of them are "L.B.C" and "Future TV". They broadcast to the Near East and Europe through Arab satellites. There are also numerous radio stations that broadcast for Lebanon and other Near East countries.

Finally, it is evident that availability of campaign holding companies (such as print media, TV, radio, publications) will not be made possible without the freedom of opinion and expression. And it will also be impossible without remaining faithful to the opinion and non-interference policy, which is the fundamental of provision Article 19 of the Universal Declaration of Human Rights.

իրավունքները:

Օրենքն արգելում է որևէ նյութի հեռարձակում, որը կարող է խախտել հասարակական անդորրը, բարոյական դրվածքը, ինչպես նաև արգելում է ազգային տնտեսությանն ու դրամարժույթին վնասող տեղեկատվության տարածումը:

Օրենքն արգելում է ցանկացած տեղեկատվության կամ գեկույցի հեռարձակում, որը վտանգում է հասարակական, կրոնական կառույցները, հասարակության բարոյախոսությունը: Հատկապես արգելում է ֆիզիկական և բարոյական բռնությունը կամ բարոյական վարքագծի շեղումը, ահաբեկչությունը և կրոնական ու ռասայական խտրականության հրահրումը:

Այնհայտորեն օրենքի նորմերը հիմք ու ձևեր են ապահովում Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածում նշված ընդհանուր գաղափարները ներկայացնելու համար, որպեսզի պաշտպանվեն ազգային ամբողջականությունն ու ազգային անվտանգության մյուս շահերը:

Ազատ արտահայտվելու և տպագրության ազատության իրավունքները հարգվել են Լիբանանում նույնիսկ պատերազմի 17 տարիների ընթացքում: գոյություն ունեն 40 քաղաքական և մշակութային լրագրեր, որոնք ազատ և առանց միջամտության ծավալում են իրենց գործունեությունը: Նշենք նաև, որ Լիբանանում տպագրությունը երաշխավորված է: Հրատարակչություններն աշխատում են ամբողջ ծանրաբեռնվածությամբ՝ ստանալով պատվերներ ոչ միայն մեր, այլև արաբական երկրներից և Մերձավոր Արևելքից:

Բացվում են ամենամյա գրքերի ցուցահանդեսներ Լիբանանի տարբեր քաղաքներում: Հեռուստատեսային և ռադիոհաղորդումների հաստատություններից 8-ը ունեն հեռարձակելու թույլտվություն: Դրանցից առավել ճանաչվածներն են «L.B.C»-ն և «Future TV»-ն: Նրանք արբանյակների միջոցով հեռարձակում են ծրագրեր Մերձավոր Արևելքում, Եվրոպայում և ողջ աշխարհում: Կան նաև FM ռադիոալիքի բազմաթիվ ռադիոկայաններ, որոնց հաղորդումները սփռվում են Լիբանանում և Մերձավոր Արևելքի այլ երկրներում:

Վերջապես ակներև է, որ Լիբանանում քարոզչության հաստատությունների առկայությունը (լրագրեր, հեռուստատեսություն, ռադիո, հրատարակություններ) անհնարին կլինի առանց կարծիքի և արտահայտման ազատության ու չմիջամտելու քաղաքականության, որը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածի հիմնական գաղափարն է:

ԵԳԻՊՏՈՍ EGYPT

*First Secretary of the Embassy
of Egypt in Armenia*
Sherif Fuad Neguib

*Հայաստանում Եգիպտոսի
ղեսպանատան 1-ին քարտուղար՝
Շերիֆ Ֆուադ Նեգիբ*



First, I would like to thank the UNDPI Yerevan office and Mrs. Armine Haladjian for giving me the opportunity to participate in the commemoration of the 50th Anniversary of the Universal Declaration of Human Rights.

In my brief presentation I shall present Egypt's experience in the field of human rights, with special emphasis on Article 19 of the Declaration. The article stresses the right to freedom of expression and opinion and the dissemination of information regardless of frontiers. I will commit myself to the subject of its practice mainly in the Egyptian media and press: its history, institutions, ethics and its influence on our society.

From a historical perspective, Egypt is con-

Նախ, ես ուզում եմ շնորհակալություն հայտնել ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի հասարակական տեղեկատվության բաժնին և տիկ. Արմինե Հալաջյանին՝ ինձ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 50-ամյա հոբելյանին մասնակցելու հնարավորությունն ընձեռելու համար:

Ես համառոտ կներկայացնեմ Եգիպտոսի փորձն այս բնագավառում՝ մասնավորապես անդրադառնալով հռչակագրի 19-րդ հոդվածին: Հոդվածը շեշտում է համոզմունքների ազատ արտահայտումը, կարծիք ունենալու իրավունքը և տեղեկատվության տարածումն անկախ սահմաններից: Ես կներկայացնեմ այս իրավունքի գործնական կիրառումը, հատկապես Եգիպտական մամուլում և լրատվական միջոցներում, նրա պատմությունը, հաստատությունները, էթիկան և դրա ազդեցությունը մեր հասարակության վրա:

Եգիպտոսն այն ամենահին քաղաքակրթություններից մեկն է, որը մամուլի, տեղեկատվության ու զեկույցների որոշ ձևեր է կիրառել սկսած փարավոններից, որոնք մանրամասն արձանագրություններ էին թողնում իրենց տաճարների պատերին ու հուշակոթողների վրա, որպեսզի հետագա սերունդներին փոխանցեին տեղեկություններ անցած իրադարձությունների մասին: Եգիպտոսում առաջին թերթը տպագրվել է 1798թ.՝ Նապոլեոն Բոնապարտի արշավանքի ժամանակ: Եգիպտական առաջին պաշտոնաթերթը՝ «Ալ Վակաիմ», առաջին անգամ տպագրվել է 1828թ.: Դրան հետևեց ոչ պաշտոնական «Վադի էլ Նիլ» թերթի հրատարակումը: 1872-1892թթ. տպագրվել է մոտ 86 անուն թերթ:

Համոզմունքներն ազատ արտահայտելն ու ազատ հրապարակելը Եգիպտոսում միշտ եղել է քաղաքական և հասարակական գործիչների ուշադրության կենտրոնում: 1925թ. հայտնի բարեփոխումներ



sidered one of the oldest civilisations to introduce a form of press, information and reporting, starting with the pharaohs who inscribed the minute details of their lives on the walls of their temples and obelisks in order to inform later generations of past events. The first newspaper was published in 1798 during the Napoleon Bonaparte's campaign to Egypt. The first Egyptian official newspaper "Al Wakae" was first published in 1828. This was followed by the publication of the public newspaper "Wadie El Nil", and about 86 papers were published during the period from 1872-1892.

Throughout the years Egyptian politicians and intellectuals have always focused their attention on the issue of freedom of expression and publications. In 1925 the famous Egyptian reformer Mohamed Abdou stressed that it was absolutely necessary that the country's laws should give rein to the freedom of meetings, the printing press and thoughts. Egyptian judiciary has repeatedly called on the application of these rights in several court rulings since the beginning of the century.

An important development in March 1941 was the emergence of the Egyptian press association. Its establishment in the history of Egypt's media took place after a long struggle and under difficult circumstances, both domestic and abroad, due to World War II. During that period many journalists were jailed or expelled, and the press was under strict censorship imposed by both the government and colonial forces. The association strongly confronted such situations and called for the necessity of easing censorship, and at a different stage, contributed to the promotion of the rights and freedoms of journalists. The association was also the first to call for the formation of the Arab Press Association in 1964, and its Chairman was elected in 1975 as head of the first African Press Federation.

Nowadays the Egyptian press reforms its role in full freedom as a public authority and with all immunities, according to the Constitution, which states that "the press is an independent public authority carrying out its messages according to the laws". "The press carries out its message in freedom and independence at the service of the society through the various means of expression, and within the framework of the basic elements of the society maintaining liberties, rights and public duties and respect for the private lives of citizens".

կատարող Մոհամեդ Աբդուն ընդգծեց, որ երկրի օրենքներում մեծ տեղ տրվեն հավաքների, տպագիր մամուլի ու մտքերի ազատությանը: Գեռես դարասկզբին Եգիպտոսի իրավաբանները տարբեր դատական գործերի ժամանակ կոչ էին անում այս իրավունքների կիրառման համար:

Չարգացում նշանավորող կարևոր իրադարձություն էր 1941թ. մարտին Եգիպտական մամուլի ընկերակցության երևան գալը: Եգիպտոսի մամուլի պատմության մեջ վերջինիս հիմնադրումը տեղի ունեցավ երկար պայքարից հետո և 2-րդ համաշխարհային պատերազմի հետևանքով առաջացած ներքին ու արտաքին խոչընդոտների ծանր պայմաններում: Այդ ընթացքում շատ լրագրողներ ձերբակալվեցին կամ վտարվեցին երկրից, իսկ մամուլը ենթարկվում էր կառավարության և գաղութարարների խիստ գրաքննությանը: Ընկերակցությունը խիստ հակադրվում էր նման դեպքերին և կոչ էր անում թեթևացնել գրաքննությունը, ինչպես նաև տարբեր փուլերում աջակցում էր լրագրողների իրավունքների և նրանց ազատության պաշտպանությանը:

Ընկերակցությունն առաջինն էր նաև, որ 1964թ. կոչ արեց հիմնել Արաբական մամուլի ընկերակցություն, իսկ նրա նախագահը 1975թ. ընտրվեց որպես Աֆրիկյան մամուլի ֆեդերացիայի առաջին նախագահ:

Ներկայիս ազատության պայմաններում եգիպտական մամուլը վերափոխում է իր դերը որպես անձեռնմխելիության սահմանադրական բոլոր իրավունքներով օժտված լիիրավ հասարակական մարմին՝ հռչակելով մամուլն անկախ հասարակական մարմին, որն իր առաքելությունն իրականացնում է գործող օրենքների համաձայն: «Մամուլն իր առաքելությունն իրականացնում է անկախության և ազատության պայմաններում՝ արտահայտման տարբեր միջոցներով, հասարակության հիմնական տարրերի շրջանակներում, ծառայելով հասարակության շահերին, կարևորելով ազատությունները, իրավունքները և հասարակական պարտականությունները, ինչպես նաև հարգելով քաղաքացիների անձնական կյանքը»:

Հետևելով ժողովրդավարության ամրապնդմանը և 1970-ական թթ. կեսերից Եգիպտոսում գերիշխող բազմակուսակցական համակարգին՝ նախագահը ստորագրեց մամուլի աշխատանքը սահմանող գերազույն խորհուրդ ստեղծելու մասին հրամանագիրը: Դրա 1-ին հոդվածը սահմանում է, որ Եգիպտոսում մամուլն ազգային անկախ մարմին է, որը ծառայում է ժողովրդին: Այդպիսով, այս խորհուրդը դարձավ մամուլի գործերին առնչվող մի մարմին, որը պատասխանատու էր օրենքով սահմանված

Following the consolidation of democracy and the prevalence of the multiparty system in Egypt in the mid-seventies, the president issued a decree on the establishment of the higher council for the press defining its scope of work. Article 1 stipulates that the press in Egypt is an independent national institution performing its role at the service of the people. Thus, the council became the body concerned with the affairs of the press responsible for realising its independence and freedom according to the law. The Higher Council on Press has the following membership: the Speaker of the Shura Council (the higher house of parliament), Editors-in-chief of political parties' newspapers and national newspapers, Head of the State Information Service, Chairman of the National News Agency, Board Chairman of the radio and TV Union, representatives of the press association, distribution and printing companies, Book Federation and a number of public figures concerned with press affairs and two members of the Parliament. The main competence of the Higher Council for the Press includes:

- Protecting and preserving the rights of journalists and pressmen and guaranteeing the performance of their duties according to the law, and securing appropriate minimum salaries.
- Taking suitable decisions regarding matters affecting the freedom and independence of the press, or complaints of infringements on the rights and dignity of individuals.
- Authorising newspaper licences and setting the prices for national newspapers and reviewing their administration.
- Securing the respect and implementation of the code of honours and ethics which include binding commitments and rights and obligations for all those working in the field of journalism and press (like loyalty to the country, people, freedom, honour, and principles of honesty and professional ethics, the rights of free expression of opinion and protection against physical or moral attacks).

Another important development for the promotion of the freedom of press in Egypt was "Law N 148 on the authority of the press" passed by the People's Assembly (Parliament) in 1980. The law stipulates that the press is an independent public authority that performs its duties freely in the service of the society. Article 2 of the Law defines the pur-

անկախության և ազատության հարցերի համար: Մամուլի գերագույն խորհրդի անդամների կազմում են՝ Շուրա խորհրդի (պառլամենտի վերին պալատ) խոսնակը, քաղաքական կուսակցությունների պաշտոնաթերթերի գլխավոր խմբագիրները, Տեղեկատվության պետական ծառայության տնօրենը, Նորությունների ազգային գործակալության տնօրենը, Ռ-ադիոյի և հեռուստատեսության միության խորհրդի նախագահը, Մամուլի ընկերակցության, բաշխման և տպագրական ընկերությունների ու Գրքի ֆեդերացիայի ներկայացուցիչները, մամուլի հետ առնչվող հասարակական գործիչներ և պառլամենտի երկու անդամներ: Մամուլի գերագույն խորհրդի իրավասություններն են՝

- լրագրողների և մամուլի աշխատողների անվտանգության ու իրավունքների պաշտպանությունը, օրենքի համաձայն նրանց պարտականությունների կատարման երաշխավորումը և համապատասխան նվազագույն աշխատավարձի ապահովումը,

- մամուլի ազատության և անկախության հարցերին խոչընդոտող արգելքների, ինչպես նաև իրավունքների խախտման և անհատի արժանապատվության վերաբերյալ բողոքների դեպքում համապատասխան որոշումներ ընդունելը,

- թերթերին արտոնագրեր տալը և պետական թերթերի գների որոշումը, դրանց ղեկավարման կազմակերպումը,

- պատվի և էթիկայի վարքականոնի նկատմամբ հարգանք և կիրառում ապահովելը, որն ընդգրկում է պատասխանատվություն, իրավունքներ և պարտավորություններ նրանց համար, ովքեր աշխատում են ժուռնալիստիկայի և մամուլի բնագավառում (ինչպես օրինակ՝ օրինապահությունը դեպի երկիրը, ժողովուրդը, ազատությունը, պատիվը և մասնագիտական էթիկայի սկզբունքները, ազատ կարծիքն արտահայտելու և բարոյական ու ֆիզիկական հարձակումներից պաշտպանության իրավունքները):

1980թ. Ազգային ժողովի կողմից ընդունված «Մամուլի իշխանության մասին թիվ 148 օրենքը» ևս մեկ կարևոր առաջընթաց քայլ դարձավ Եգիպտոսում մամուլի ազատության զարգացման ճանապարհին: Օրենքը սահմանում է, որ մամուլն անկախ հասարակական մարմին է, որը կատարում է իր պարտականությունները՝ ծառայություն մատուցելով հասարակությանը: Օրենքի 2-րդ հոդվածը մամուլին ազատություն շնորհելու նպատակ է հետապնդում: Այն մամուլի լուսավորչությամբ ու օժանդակությամբ հասարակության զարգացման կոչ է անում՝ փորձելով ազգի և ժողովրդի շահերից բխող լավագույն լուծումներ գտնել:

pose of granting freedom to the press. It calls for the promotion of the society through the enlightenment and contribution of the press in trying to reach the best solutions for the interest of the nation and people.

Article 13 allows the free issuance and possession of newspapers by political parties and individuals. Article 19 also defines the function of the press as "to express public opinion, contribute to its formation and guidance, provide the society with knowledge, help in reaching the best solutions and secure the people's rights to receive knowledge and communication".

In Egypt the press and media enjoy the widest range of freedom. Their words are published unrestricted except for what is considered a threat to the public interest and accuracy of news and the inviolability of people rights as stipulated by the Constitution. The freedom of the press is one of the basic factors of our democratic system, furthermore the Egyptian press, whether national or partisan, is a reflection of the political and social reality in Egypt, and in that context it represents the people.

The number and variety of newspapers and their publications in Egypt is a clear indication of the important role and influence they play in the society. The following statistics represents an important indication in this regard:

- The newspaper Al Ahram has a daily circulation of over one million copies, and El Akhbar daily has almost the same circulation.
- Partisan periodicals include over 22 dailies, and magazines published on weekly and monthly basis.
- National newspapers have over 45 publications on daily and weekly basis.
- Publications of Unions and Syndicates exceed 66 issues on quarterly, monthly and weekly basis, not to mention the various publications of government authorities, clubs and companies.

Finally, it is worth mentioning that within the last 18 years no Egyptian paper, whether national or partisan, was suspended by confiscation or by censorship. And with its effective and influential role the Egyptian press has remained in Egypt and in the Arab world as a school of enlightenment and free dialogue of disseminating values of knowledge, modernisation and development.

Օրենքի 13-րդ հոդվածով թույլատրվում է նաև քաղաքական կուսակցությունների և անհատների կողմից թերթերի ազատ լույս ընծայումն ու տնօրինումը: 19-րդ հոդվածը սահմանում է նաև, որ «մամուլը պետք է հանդիսանա հասարակական կարծիքի արտահայտողը, աջակցի հասարակության ձևավորմանն ու նրա ղեկավարմանը, հասարակությանն ապահովի գիտելիքներով, նպաստի ճիշտ լուծումներ գտնելուն և երաշխավորի ժողովրդի գիտելիք ստանալու և հաղորդակցվելու իրավունքը»:

Եգիպտոսում լրատվամիջոցներին ընձեռնված են ամենալայն ազատություններ: Նրանց կողմից տպագրվում է ամենայն ինչ, եթե չի սպառնում հասարակական շահերին, տեղեկատվության ճշգրտությանը և մարդկանց իրավունքների անխախտելիությանը, ինչպես ամրագրված է Սահմանադրության մեջ: Մամուլի ազատությունը մեր ժողովրդավարական համակարգի հիմնական գործոններից մեկն է, ավելին, եգիպտական մամուլը, լինի պետական թե կուսակցական, արտացոլում է Եգիպտոսի քաղաքական և սոցիալական իրավիճակը՝ այդպիսով ներկայացնելով ժողովրդին:

Թերթերի թիվը և բազմազանությունը, ինչպես նաև դրանց տպագրումը Եգիպտոսում պարզորոշ վկայում է հասարակության մեջ դրանց ունեցած կարևոր դերի և ազդեցության մասին: Հետևյալ վիճակագրական տվյալները դրա վառ արտահայտությունն են:

- «Ալ Ահրամ» թերթը տպագրվում է օրական 1 մլն. տպաքանակով, գրեթե նույն տպաքանակն ունի «Էլ-Ախբար» օրաթերթը:
- Կուսակցական պարբերականների թվին են պատկանում 22 օրաթերթեր, շաբաթաթերթեր և ամսագրեր:
- Պետական օրաթերթերի և շաբաթաթերթերի թիվը 45 է:
- Սիությունների և արհմիությունների պաշտոնաթերթերի քանակը անցնում է 66-ից՝ շաբաթական, ամսական և եռամսյակային պարբերականությամբ: Չենք նշում կառավարական մարմինների, ընկերությունների և ակումբների կողմից լույս ընծայվող տարբեր հրատարակությունների մասին:

Վերջում կցանկանայի նշել, որ վերջին 18 տարիների ընթացքում Եգիպտոսում ոչ մի պետական կամ կուսակցական թերթ չի փակվել, բռնագրավվել կամ գրաքննվել: Իր արդյունավետությամբ և ազդեցիկ դերով եգիպտական մամուլը Եգիպտոսում և ամբողջ արաբական աշխարհում լուսավորչության ազատ դպրոց, գիտելիքի, արժեքների, արդիականության և զարգացման տարածող է հանդիսանում:

ՉԻՆԱՍՏԱՆ CHINA

*Ambassador Extraordinary and Plenipotentiary
of China in Armenia*
Zhu Zhaoshun

*Հայաստանում Չինաստանի
Արտակարգ և լիազոր դեսպան*
Չժու Չժաոշուն



Չանգվածային լրատվության միջոցներով մարդիկ ազատորեն արտահայտում են իրենց կարծիքը, քննադատական դիտողություններն ու առաջարկությունները, ինչպես նաև քննարկում պետական և հասարակական տարբեր թեմաներ: Թերթերի ու հանդեսների շատ սյունակներ, բազմաթիվ ռադիո և հեռուստածրագրեր արժանանում են հասարակության համընդհանուր սիրուն: Չինաստանում կա 2500 թերթ, 10000 հանդես, 1300 ռադիո և 1000 հեռուստակայան, ևս 1200 կաբելային հեռուստակայան: Չանգվածային լրատվության միջոցները նկատելիորեն սերտացրել են իրենց կապը լայն զանգվածների հետ:

Չինաստանում քաղաքական բանտարկյալներ չկան: Ոչ ոք չի կալանվել կամ ձերբակալվել իր քաղաքական հայացքների համար: Օրենք խախտողները պարզապես ենթարկվում են քրեական պատասխանատվության:

Չինաստանում իրականությունն այսպիսին է. 20 տարվա բարեփոխումների շնորհիվ 5,5 անգամ աճել է Չինաստանի ընդհանուր հզորությունը: Կենսամակարդակը շոշափելիորեն բարձրացել է: Օրինականությունն ու խաղաղությունն են բազմափորում Չինաստանի հասարակությունում: Անցյալից դասեր քաղելով՝ Չինաստանի ժողովուրդը սոցիալիզմ է կառուցում և հավատարիմ է կոմկուսի գաղափարներին:

Այն ուժերը, որոնք օտարերկրացիների աջակցությամբ փորձում էին սոցիալիստական համակարգը տապալել Չինաստանում, կորցրին ժողովրդի աջակցությունն ու համակրանքը: Երբ այս ուժերը խոսքից գործի անցան, հրահրեցին հակակառավարական գործողություններ և խախտեցին հասարակական կարգը, նրանց, այսպես

Through mass media people freely voice their opinions, critical remarks and suggestions and discuss various State and public issues. Many columns in newspapers and magazines and many TV and radio programs emerged that are the general public's favorites. In China there are 2,500 newspapers, 10,000 periodicals, 1,300 radio and 1,000 TV stations and 1,200 cable TV stations. The mass media have significantly strengthened their ties with broad masses.

In China there are no political prisoners. No one was detained or arrested because of his or her political views. However, those who break the law face criminal prosecution.

The reality in China is such: 20 years of



reforms have resulted in a 5.5-time increase in the aggregate might of China. Living standards have been perceptibly raised. Order and peace reign in the Chinese society. Deriving a lesson from the past, the Chinese people are committed to Socialism and they trust the leadership of the Communist party. Those forces that were trying to overthrow, with the support from abroad, the Socialist system in China have lost the support and sympathies of the country's people. When these forces turned their propaganda into action, provoked anti-government actions and violated public order, their so-called freedom of speech infringed on the rights of broad masses of people and, naturally enough, law-enforcement agencies put a stop to their criminal activities. That happened 10 years ago. And those who called themselves democrats do not enjoy the support of the people. Now their only source of income is tips doled out by western bankers. These people are already forgotten in China. And outside the country, too, they are falling into oblivion.

I would like to asseverate that Universal Declaration of Human Rights adopted by the United Nations as well as a number of related international covenants gained support and respect of many countries. The Chinese Government expressed its deep appreciation of the Declaration and recognized it as the first international document about the human rights, which laid a foundation for practical implementation of the human rights in the world.

However, the situation in the field of human rights is predicated on historical, social, economic, cultural and religious factors. It is a historical process. Owing to considerable differences among various countries in terms of historical conditions, social system, religious beliefs, cultural traditions and economic development, they have quite differing interpretations of the human rights and approaches to their implementation. And the attitude of different countries to international covenants adopted by the UN also varies. That is why when discussing the situation with human rights in an individual country we cannot do that in isolation from its history and its religion.

It would be counterproductive to confine ourselves to a single model. We should pro-

կոչված, խոսքի ազատությունը հակասեց ժողովրդական լայն զանգվածների իրավունքներին, իրավապահ ուժերը հարկադրված խափանեցին նրանց հանցավոր գործունեությունը: Դա 10 տարի առաջ էր: Իսկ նրանք, ովքեր իրենց դեմոկրատ էին հորջորջում, ժողովրդի կողմից աջակցություն չստացան: Այժմ նրանց միակ եկամտի աղբյուրը արևմտյան բանկերի կողմից հատկացված շնորհներն են: Այս մարդիկ արդեն մոռացված են Չինաստանում: Երկրից դուրս նրանք նույնպես անտեսվել են:

Ես ուզում եմ գոհունակությամբ հայտարարել, որ ՄԱԿ-ի ընդունած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ինչպես նաև մի շարք այլ համաման համաձայնագրեր, շատ երկրներում արժանացել են աջակցության ու հարգանքի: Չինական կառավարությունը բարձր է գնահատում Հռչակագիրը և այն ընդունում որպես միջազգային անդրանիկ փաստաթուղթը մարդու իրավունքների մասին, որը մարդու իրավունքների փաստացի կիրառման հիմքը դրեց աշխարհում:

Ինչնից, մարդու իրավունքների բնագավառում իրավիճակը պայմանավորված է պատմական, սոցիալական, տնտեսական, մշակութային և կրոնական գործոններով: Այլ խոսքով՝ այն պատմական պրոցեսի արդյունք է: Ելնելով տարբեր երկրների միջև գոյություն ունեցող պատմական պայմանների, սոցիալական համակարգի, կրոնական հավատքի, մշակութային ավանդույթների և տնտեսական զարգացման էական տարբերություններից, մարդու իրավունքները և նրանց կիրառման մոտեցումները միանգամայն յուրովի են սեկնաբանվում յուրաքանչյուր առանձին վերցրած երկրում: Տարբեր երկրների վերաբերմունքը ՄԱԿ-ի ընդունած միջազգային պայմանագրերի նկատմամբ նույնպես տարբեր է: Ահա թե ինչու, երբ քննարկում ենք մարդու իրավունքների իրավիճակը մի որևէ առանձին երկրում, չենք կարող հաշվի չառնել նրա պատմությունը և կրոնը:

Անօգուտ կլինի սահմանափակվել մի եզակի օրինակով: Մենք պետք է ելնենք երկրի իրավիճակից և մարդկության զարգացման յուրահատկություններից: Չինաստանը զարգացող երկիր է: Աշխարհագրական դիրքով ու իր ավանդույթներով այն հեռավոր արևելյան երկիր է: Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում նույնպես Չինաստանը ելնում է երկրի առանձնահատկություններից:

Ըստ մեր ընկալման, մարդու իրավունքները նախ և առաջ անհատի գոյատևման ու զարգացման

ceed from the realities of that country and from the diversity of development of mankind.

China is a developing country. Geographically and by its traditions China is a Far East country. In its safeguarding of human rights China also proceeds from the specific Chinese situation. In our interpretation, human rights are first of all the right of an individual to existence and development. After 20 years of reforms and openness China attained an unequivocal success in significant economic development while retaining its social system and leadership of the Communist party. This is a true way chosen by the Chinese people. We do not expect everybody in the world to be happy about this choice but according to the universal principles of international relations, the choice of the Chinese people should be respected. If someone in the world is trying to use the respect for human rights as a pretext for dictating their conditions and demands to our nation that is in glaring contradiction with universally recognized human rights. Participating in the UN activities in the human rights field, for a long time already China has been fighting against the situation that would enable any county to use the issue of human rights to impose its own value system, ideology, political criteria and development models and to meddle in the internal affairs of other countries, in particular numerous developing countries, and violating their sovereignty and dignity under the pretext of human rights issue.

China invariably believes that human rights issue is essentially an internal affair of each country. Respect for State sovereignty and non-interference in each other's internal affairs are universally accepted norms in international law and are applicable to all aspects of international relations and, naturally, to the human rights issues. But we never ruled out and we do not rule out presently holding the consultations with various countries about this issue.

Making my presentation in connection with the 50th anniversary of the Universal Declaration of Human Rights I would like to express my admiration for considerable progress in human rights protection both in the whole world and in our country.

նախապայմաններն են: Քսանամյա վերափոխումներից ու հրապարակայնությունից հետո Չինաստանը ձեռք է բերել ակնառու հաջողություններ տնտեսական զարգացման որոշ բնագավառներում՝ պահպանելով իր սոցիալիստական համակարգն ու կոմունիստական կուսակցության գաղափարախոսությունը: Դա Չինաստանի ժողովրդի կողմից ընտրված ճիշտ ուղի է: Մենք հակված չենք կարծելու, որ բոլորը ողջունում են մեր ընտրությունը, բայց ելնելով միջազգային հարաբերությունների ընդհանուր սկզբունքներից՝ Չինաստանի ժողովրդի ընտրությունը պետք է հարգել: Եթե աշխարհում որևէ մեկը մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը փորձում է օգտագործել որպես պատրվակ իր պայմաններն ու պահանջները մեր երկրին թելադրելու համար, ապա հանրորեն ընդունված մարդու իրավունքների կոպիտ խախտում է կատարում:

Մարդու իրավունքների բնագավառում ձեռնարկվող միջոցառումներին մասնակցելով՝ Չինաստանը երկար ժամանակ պայքարել է այն երևույթի դեմ, երբ որևէ երկրի հնարավարություն չի տրվում իրականացնել մարդու իրավունքների բուն գաղափարը, նրա վզին են փաթաթում օտար արժեքների համակարգ, գաղափարախոսություն, քաղաքական չափանիշներ և զարգացման մոդել, միջամտում են այլ երկրի ներքին գործերին (մասնավորապես բազմաթիվ զարգացող երկրների) և շահարկում նրա անկախությունն ու արժանապատվությունը մարդու իրավունքների քողի տակ:

Չինաստանն անվերապահորեն հավատացած է, որ մարդու իրավունքներին վերաբերող հարցերը զուտ յուրաքանչյուր երկրի ներքին գործն են: Հարգանքը պետության անկախության նկատմամբ և միմյանց ներքին գործերին չմիջամտելը համընդհանուր ընդունելի չափանիշներ են միջազգային օրենքով ու կիրառելի են միջազգային հարաբերությունների բոլոր բնագավառներում և, իհարկե, նաև մարդու իրավունքների հարցերում: Բայց մենք երբեք չենք խուսափել և հիմա էլ չենք խուսափում այս թեմայով խորհրդակցել տարբեր երկրների հետ:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 50-ամյակի կապակցությամբ ես կցանկանայի իմ հիացմունքն արտահայտել այն առաջընթացի համար, որը ձեռք է բերվել մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում համայն աշխարհում ու մեր երկրում:

ՈՒԿՐԱԻՆԱ UKRAINE

*Ambassador Extraordinary and Plenipotentiary
of Ukraine in Armenia*
Alexander Bozhko

*Հայաստանում Ուկրաինայի
Արտակարգ և լիազոր դեսպան
Ալեքսանդր Բոժկո*



This year we are celebrating the 50th anniversary of the United Nations Universal Declaration of Human Rights. Ukraine is making significant progress in improving her Constitution in that field and making its provisions a reality.

Human rights are of great importance to every country. It is worth mentioning that a lot has been done in this field in the years of independence. First of all we can be proud of our Constitution, which has a special chapter on human rights. That chapter complies with the most advanced democratic standards of protection of human rights and freedoms.

Այս տարի նշելով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 50-ամյակը՝ Ուկրաինան նշանակալի քայլ է անում այդ ոլորտում հայրենական օրենսդրության հետագա կատարելագործման և դրա դրույթները կյանքում մարմնավորելու ուղղությամբ:

Մարդու իրավունքները մեծ նշանակություն ունեն յուրաքանչյուր երկրի համար: Հարկ է նշել, որ մեր անկախության տարիներին այդ ուղղությամբ հաջողվել է շատ բան անել: Նախ՝ մենք կարող ենք հպարտանալ մեր Սահմանադրությամբ, որտեղ առանձին գլուխ է նվիրված մարդու իրավունքներին: Այդ գլուխը համապատասխանում է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության ամենաժամանակակից, ամենաժողովրդական չափանիշներին:

Եվրոպայի խորհուրդ ընդունվելու կապակցությամբ Ուկրաինան ստորագրել է մարդու իրավունքների վերաբերյալ եվրոպական կոնվենցիան, որը երաշխավորում է Գերագույն դատարանի և իշխանության մարմինների ցանկացած որոշում բողոքարկելու մեր քաղաքացիների իրավունքը: Բերված փաստերը, որոնց թվարկումը կարելի է շարունակել, վկայում են, որ այսօր Ուկրաինայում ժողովրդավարական լուրջ բարեփոխումներ են կատարվում:

Անհրաժեշտ է նշել, որ իմ երկրի նախագահի՝ Լեոնիդ Կուչմայի հատուկ հանձնարարությամբ ստեղծվել է հանձնաժողով՝ կազմակերպելու և նշելու Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 50-ամյակը:

Անշուշտ, Ուկրաինայում պետական մակարդակով այդ իրադարձությունը նշելու փաստն ինքնին մեծ նշանակություն ունի այնքանով, որքանով լրատվության զանգվածային միջոցներով նրա լայն լուսաբանումը, այլ կարևոր պատմական փաստաթղթերի

Ukraine has signed the European Agreement on the occasion of joining the European Council that guarantees the citizens' right to apply and appeal against any resolution made by the Supreme Court and its authorities. These mentioned facts (the list of which can be continued) prove that Ukraine undergoes serious democratic improvements.

It is worth mentioning that upon the request of the President of my country Leonid Kuchma, a special committee was established to organize and observe the 50th anniversary of the Universal Declaration of Human Rights.

The fact that it is observed in Ukraine at the Government level is of great importance. Mass media will provide a wide coverage of it, which, in its turn, will enhance the level of legal awareness of the public at large. The citizens of Ukraine will be aware about the important historical documents such as the Universal Declaration of Human Rights, their role and practical importance. I am sure that this event will greatly promote the further improvement of the Ukrainian legislation in this important field and make its provisions a reality.

In my short speech I would like to focus specially on the Ukrainian mass media which is called the “4th power” and which undergoes hard and sometimes contradicting transformation. In this respect, the economic, political and spiritual development of Ukraine as an independent State is focused on the development of its mass media with the aim of consolidation of the society.

The current high level of democratic society of Ukraine can be accounted for by the freedom of the press, freedom of activities guaranteed to the journalists and publishers, by access to the radio and TV broadcasting.

Today the mass media of Ukraine includes periodicals (the press), radio, TV, news agencies, press centres and services. The Ukrainian mass media is guided by the Ukrainian Constitution, legislative acts

նշանակության ու գործարար կշռի հանգամանակի պարզաբանումը կնպաստեն Ուկրաինայի հասարակայնության իրավական մշակույթի մակարդակի բարձրացմանը: Ես համոզված եմ, որ այս իրադարձությունը զգալիորեն կխթանի այս կարևոր ոլորտում Ուկրաինայի օրենսդրության կատարելագործմանն ուղղված հետագա աշխատանքները և կնպաստի, որպեսզի Հռչակագրի դրույթներն իրականություն դառնան նաև կյանքում:

Իմ համառոտ ելույթում ես կուզենայի առանձնակի անդրադառնալ Ուկրաինայի զանգվածային լրատվության միջոցներին, այսպես կոչված, երկրի չորրորդ իշխանությանը, որը նույնպես ապրում է բարդ և թերևս հակասական փոխակերպություն:

Ուկրաինայի՝ որպես անկախ պետության, տնտեսական, քաղաքական և հոգևոր ռազմավարությունն ի սկզբանե նախատեսել է լրատվամիջոցների զարգացումը հանուն հասարակության միաբանության:

Ժամանակակից Ուկրաինայի հասարակության ժողովրդավարական բարձր մակարդակի նախապայմանն, անշուշտ, մամուլի ազատությունն է, լրագրողների և հրատարակիչների ազատ գործունեության երաշխիքը, տպագրված նյութերի, ռադիո և հեռուստատեսության հաղորդումների ազատ մուտքը:

Ուկրաինայի զանգվածային լրատվության ժամանակակից միջոցներն ընդգրկում են տպագիր պարբերական հրատարակությունները (մամուլ), ռադիոն և հեռուստատեսությունը, տեղեկատվական գործակալությունները, մամուլ կենտրոնները և ծառայությունները: Ուկրաինայի լրատվության զանգվածային միջոցներն իրենց աշխատանքի ընթացքում դեկավարվում են Ուկրաինայի Սահմանադրությամբ, «Տեղեկատվության մասին», «Լրատվության զանգվածային տպագիր միջոցների մասին», «Ռ-ադիոյի և հեռուստատեսության մասին» օրենքներով, ինչպես նաև Ուկրաինայի այլ օրենսդրական ակտերով և Ուկրաինայի կողմից ճանաչված միջազգային իրավական փաստաթղթերով:

Լրատվության զանգվածային միջոցների ժամանակակից համակարգը հնարավորություն է տալիս հասարակությանը արագ, բազմակողմանիորեն և ակտիվ կերպով կողմնորոշվել հասարակական, քաղաքական և տնտեսական հարցերում, մշակութային կյանքում, ազդել մարդկանց վարքի և գաղափարների վրա: Իզուր չէ, որ ամբողջ աշխարհում այն «չորրորդ իշխանություն» է կոչվում:

Լրատվության զանգվածային միջոցներն իրենց գոյության տարբեր ժամանակաշրջաններում և

such as "On Information", " On the press", "On the radio and TV", and others as well as international legal documents recognized by Ukraine.

The modern structure of mass media gives opportunity to the society to be immediately and well informed about public, political and economic issues, cultural life, as well as to wield some influence on the people's behaviour and ideas. This is why it is called the "4th power" all over the world.

In different periods of its existence and under different political and economic conditions the mass media has always been in close relations with those public and economic structures which controlled most spheres of public life.

As to Ukraine, the first periodicals were issued in the 18th century, such as "Lvovski Kurier", which was the first periodical in East Ukraine, "Kharkovski Jezenedelnik" (1812) and "Kharkovski Izvestia" (1817).

In 1918, after the establishment of the Central Rada and independence in Ukraine, 60 newspapers in Ukrainian, 227 in Russian and 24 in other languages were published in our country.

Currently 4,000 periodicals of different nature, different backgrounds and different frequency of publication are registered in Ukraine. The present Ukrainian press is considered to be independent and free of censorship. The State guarantees their economic independence and prevents their abuse by the publishers and others.

Practically this freedom, especially economic, is gained with difficulty. It is conditioned by the fact that publication costs usually exceed the going market prices. And here we face the problem of existence of these periodicals.

Ways of maintenance of the Ukrainian press are different. Many periodicals have managed to find a sponsor. Some are trying to raise funding by themselves. Majorities of them keep their existence by printing advertisements.

The Ukrainian National radio and TV

քաղաքական-տնտեսական պայմաններում միշտ սերտ կապի մեջ են եղել այն հասարակական-քաղաքական կառույցների հետ, որոնք թելադրել և ղեկավարել են հասարակայնության կյանքի զանազան ոլորտների մեծ մասը:

Ինչ վերաբերում է Ուկրաինային, ապա առաջին պարբերականներն այստեղ լույս են տեսել 18-րդ դարում, օրինակ, «Լվովսկի կուրյերը», որն արևելյան Ուկրաինայում առաջին պարբերականն էր, «Խարկովսկի եժենեդելնիկը» (1812թ.) և «Խարկովսկի իզվեստիեն» (1817թ.):

1918թ. Կենտրոնական ռադայի իշխանության հաստատումից և անկախությունից հետո, մեր երկրում հրատարակվել է 60 անուն թերթ ուկրաիներեն, 227՝ ռուսերեն և 24՝ այլ լեզուներով:

Այսօր Ուկրաինայում գրանցված են տարբեր բնույթի, ժանրի և պարբերականության ավելի քան 4000 հրատարակություններ: Ժամանակակից Ուկրաինայի լրատվության զանգվածային տպագիր միջոցները համարվում են ազատ և ենթակա չեն գրաքննության: Պետությունը երաշխավորում է դրանց տնտեսական ինքնուրույնությունը, կանխում դրանց չարաշահումը հրատարակիչների և տարածողների կողմից:

Գործնականում այս ազատությունները, հասկապես տնտեսականը, բավականին մեծ դժվարություններով են ձեռք բերվում: Դա պայմանավորված է նրանով, որ պարբերական արտադրանքը տեղ հասցնելու ծախսերը հաճախ գերազանցում են սպառման դրամական եկամուտները: Այստեղից էլ ծագում է պարբերականների լինել-չլինելու խնդիրը:

Ուկրաինայի մամուլի գոյությունն ապահովելու ուղիները տարբեր են: Շատ հրատարակչություններ կարողացել են գտնել իրենց հովանավորներին: Որոշ կողեկախիվներ փորձում են ինքնուրույն միջոցներ հայթայթել իրենց հրատարակության համար: Նրանց ճնշող մեծամասնությունն իր գոյությունը պահպանում է գովազդային նյութեր արտադրելով:

Ուկրաինայի ազգային ռադիոյի և հեռուստատեսության համակարգի մեջ են մտնում պետական և ոչ պետական հեռուստա-ռադիո կազմակերպությունները: Էլեկտրոնային համակարգով հեռուստահաղորդումներն Ուկրաինայում սկսվել են 1951թ.: Ուկրաինան հանդիսանում է ռադիոյի և հեռուստատեսության միջազգային կազմակերպության անդամ: Պետական հեռուստառադիոընկերությունն ունի 3 ալիք, քաղաքական վերլուծության, հասարակական-քաղաքական, ինչպես նաև տեղեկատվության, սպորտային, երիտասարդական և այլ ծրագրեր: Մասսայականություն են վայելում ոչ պետական

structure involves both governmental and non-governmental radio and TV organisations. TV broadcasting by electronic system started in 1951. Ukraine is affiliated with the International organisation of Radio and TV. State TV company has 3 channels: political analysis, public and political as well as information, sports, youth and other programs. The non-governmental TV companies, like "1+1 Studio", "Inter", "Tet a Tet", "Gravis" and others are very popular.

The most famous of the news agencies of Ukraine are "GINAU" (Ukraine State news agency), "Interfax-Ukraine", Ukrainian independent news agency (UNIAR), and others. They have their journalists in all the regions of Ukraine and abroad. They disseminate information through press, radio and TV both in Ukraine and out of its boundaries.

There is a professional journalists union. We have the National Press Club, which has the goal to provide cooperation between the journalists of Ukraine and other countries and to enhance the professional level of Ukrainian journalists.

The Kiev political and economic research centre together with Konrad Adenauer Fund organised a roundtable discussion on Freedom of speech and authorities in Ukraine. The participants expressed their dissatisfaction with the relations that exist between the authorities and mass media. As a result, the following statement was made in the address to the President of Ukraine, Supreme Rada and Government. On the basis of Article 34 of the Constitution defining the procedure of restricting the right and freedom of speech with a special legislation that will rule out arbitrary interpretations, detail that section of the Law "On printed media" which focuses on the relations between the publisher and the newspaper, to limit the publishers' rights of criticism and, with the aim of preventing pressure on the publication, to make amendments in the same legislation which will define the legal status of independent journalist as a party in

հեռուստառադիո ընկերությունները՝ «1+» ստուդիան, «Ինտեր»-ը, «USF»-ն, «Տետատետ»-ը, «Գրավիս»-ը և այլն: Տեխնիկական տեսակետից արդիական են «USF» հեռուստառադիոընկերության հաղորդումները, որոնք տարածվում են Ուկրաինայի տարածքում և նրա սահմաններից դուրս արբանյակային համակարգի միջոցով:

Ուկրաինայում ամենաճանաչված լրատվական գործակալություններից են «ԻՆԱՌԻ»-ն (Ուկրաինայի պետական լրատվական գործակալություն), «Ինտերֆաքս-Ուկրաինան», Ուկրաինայի անկախ լրատվական գործակալությունը (ՈՒՆԻԱՐ) և այլն: Նրանք ունեն իրենց լրագրողները Ուկրաինայի բոլոր մարզերում ու արտասահմանում և մամուլի, ռադիո-ֆոտո, տեսա- և հեռուստատեսային տեղեկությունները տարածում են ինչպես Ուկրաինայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Ուկրաինայում գոյություն ունի պրոֆեսիոնալ լրագրողների միություն: Գործում է Ազգային մամուլ ակումբ, որի նպատակն է ընդլայնել լրագրողների շփումները Ուկրաինայում և նրա սահմաններից դուրս, բարձրացնել Ուկրաինայի լրագրողների մասնագիտական մակարդակը: Կիևի քաղաքական և տնտեսական հետազոտությունների կենտրոնի կողմից Կոնրադ Ադենաուերի Ֆոնդի հետ համատեղ կազմակերպված «կյոք սեղաններից» մեկի ժամանակ, որի թեման էր խոսքի ազատությունն ու իշխանությունն Ուկրաինայում, կողմերը դժգոհություն հայտնեցին իշխանության և զանգվածային լրատվության միջոցների միջև հարաբերություններից: Նրանց աշխատանքի արդյունքն էր Ուկրաինայի նախագահին, Գերագույն ռադային և Կառավարությանը հղված հետևյալ հայտարարությունը. «Համաձայն Սահմանադրության 34-րդ հոդվածի, առանձին օրենսդրությամբ սահմանել խոսքի ազատության իրավունքի սահմանափակման կարգը, որը կբացառի դրա սուբյեկտիվ և երկիմաստ մեկնաբանությունը: Ավելի մանրամասն լուսաբանել «Լրատվության զանգվածային տպագիր միջոցների մասին» օրենքի հոդվածի այն մասը, ուր խոսքը թերթի հրատարակչի և խմբագրության միջև հարաբերությունների մասին է: Սահմանափակել հրատարակչիչների իրավունքները՝ գրաքննությունից և խմբագրության վրա ճնշումից խուսափելու նպատակով:

Նույն օրենսդրության մեջ մտցնել փոփոխություններ, որոնք կսահմանեն անկախ լրագրողի իրավական կարգավիճակը իբրև լրատվական հարաբերությունների մասնակից:

Նախապատրաստել և ընդունել Ուկրաինայի լրագրողի էթիկայի վերաբերյալ հռչակագիրը:

relations between the journalists, to prepare and adopt the Code of Ethics of Ukrainian Journalists, to create a centre for media related debates as a political body, which would include editors of popular and important newspapers, prominent journalists and lawyers, to make amendments to and additions in the Ukrainian Law "On TV and radio" and to deprive the National Council of the right to revoke the license (this right should be the prerogative of the court of law).

A special committee on the issues of freedom of speech and media was set up and functions in the National Assembly of Ukraine. The committee seeks to divide the spheres of influence in the mass media policy based on legal and constitutional grounds.

Unfortunately, political pressure continues to be exerted in the process of formation of Ukrainian mass media, which is closely connected with money. That means that the power of money may come to replace the licensing and State censorship. Then, there will be no sense in speaking about the real freedom of speech. And indeed, is it possible to have a completely independent press?

We can say that a new TV channel will depend on its founder. The journalist who works in this channel and in this TV Company should be independent as a professional and a citizen. Perhaps that will be a part of the meaning of the "freedom of speech".

Journalism as a driving force should be responsible for the influence it has on the society. Well-secured freedom of speech in Ukraine is a prerequisite for good relations to be established between the authorities and journalists in the country.

Ստեղծել քաղաքացիական մարմին՝ լրատվական վեճերի (բանակցությունների) պալատ, որի կազմի մեջ կարողանային լինել ազդեցիկ և մասսայականություն վայելող թերթերի գլխավոր խմբագիրներ, հայտնի լրագրողներ, իրավաբաններ:

Լրացումներ և փոփոխություններ մտցնել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Ուկրաինայի օրենքում, որպեսզի հեռուստատեսության և ռադիոյի հարցերով Ազգային խորհուրդը չզրկվի արտոնագրերը չեղյալ համարելու իրավունքից (այդ իրավունքն ունի միայն դատարանը):»:

Ուկրաինայի Ազգային ժողովում ստեղծվել է գործում է խոսքի և լրատվության ազատության հարցերով հատուկ կոմիտե, որի առաջադրանքներից մեկն է լրատվական քաղաքականության մեջ ազդեցության ոլորտների բաժանումը ըստ Ուկրաինայի իրավական սահմանադրական հիմքերի:

Յավոք սրտի, Ուկրաինայի լրատվության գանգվածային միջոցների կազմավորման գործընթացում շարունակվում է քաղաքական ճնշման գործադրումը, որը սերտորեն կապված է փողի ազդեցության հետ: Այսինքն՝ անցյալ ժամանակների պետական արտոնագրություններին և պետական գրաքննությանը փոխարինելու է գալիս փողի մոնոպոլիան: Այսուհանդերձ, խոսքի իրական ազատության մասին հարկ չկա նույնիսկ խոսել: Եվ իսկապես, արդյո՞ք հնարավոր է լիովին անկախ մամուլի գոյությունը:


Ասեմք այսպես, հեռուստատեսության նոր ալիքը կախման մեջ կլինի ստեղծողից: Սակայն լրագրողը, որն աշխատում է այս ալիքի համար, այս հեռուստառադիոընկերությունում, պետք է լինի անկախ՝ որպես մասնագետ և որպես քաղաքացի: Ըստ երևույթին, դա էլ պետք է բովանդակի «խոսքի ազատություն» հասկացությունը:

Պետք է հաշվի առնել նաև, որ լրագրությունը՝ իբրև շարժիչ ուժ, անկասկած, պարտավոր է պատասխանատվություն կրել այն ազդեցության համար, որ ունի նա հասարակության վրա: Թե որքանով կհաջողվի Ուկրաինայի նորաստեղծ պետությանը լավ հարաբերություններ հաստատել իշխանության և լրագրողների միջև, կախված է մեծ մասամբ խոսքի ազատության հաստատումից:

ՀՈՒՆԱՍՏԱՆ GREECE

*First Secretary of the Embassy
of Greece in Armenia*
Anna Sorotou

*Հայաստանում Հունաստանի
դեսպանատան առաջին քարտուղար*
Աննա Սորոտու



Նախ և առաջ ես կուզենայի շնորհակալություն հայտնել ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի հասարակական տեղեկատվության բաժնին և հատկապես տիկ. Արմինե Հալաջյանին՝ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածն աշխարհում» խորագրով ելույթների այս շարքը կազմակերպելու համար: Մեծ պատիվ է ինձ համար, որ հնարավորություն է ընձեռվել խոսել այս հարցի շուրջ՝ անդրադառնալով մասնավորապես Հունաստանի իրավիճակին և այդպիսով նպաստել համաշխարհային մամուլի և խոսքի ազատության մասին լրագրողների շրջանում իրազեկության բարձրացման գործին:

1948թ. դեկտեմբերի 10-ին Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման պահից ի վեր Միացյալ ազգերի կազմակերպությունը դարձավ մարդու իրավունքների հիմնական իրականացնողը: Հունաստանն իր հերթին չէր կարող չմասնակցել իրավունքների նվազագույն պաշտպանությանն ուղղված այդ համընդհանուր ձեռնարկումներին, որոնք ամրագրված են անհատի քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներին վերաբերող միջազգային մի շարք փաստաթղթերում: Հարկ է նշել, որ նախորդ տարիների նշանակալի նվաճումներից մեկը ոչ միայն մարդու բոլոր իրավունքների փոխադարձ կապը, այլև օրենքի իշխանության և ժողովրդավարական համակարգի հետ դրանց անքակտելի կապն է: Այս գործընթացը լիովին համահունչ է Հունաստանի Հանրապետությանը, որը վավերացրել է մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված բոլոր հիմնական փաստաթղթերը:

Արտահայտման և կարծիքի այս ազատությունը, որն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր

First of all I would like to thank the UNDP/HR in Yerevan, and Mrs. Armine Hala- jian, in particular, for organizing this series of presentations, under the general title "Article 19 of the Universal Declaration of Human Rights in the World". I am honored to be given the opportunity to report on the issue with specific reference to the situation in Greece, contributing in this way to the effort of raising public awareness among journalists about freedom of the press and speech worldwide.

Since the adoption of the Universal Declaration of Human Rights on December 10, 1948, the Organization of the United Nations has become the main actor in the



field of human rights. Greece could not, of course, fail to participate in this international common effort for the consolidation of the minimum level of protection that is stipulated in the international documents concerning individual, political, social, economic and cultural rights.

It should be noted that one of the greatest achievements of previous years is the recognition not only of the interrelation between all human rights but also of their inextricable link to the rule of law and the democratic system. This development is in complete accordance with the main objectives of the Hellenic Republic, which has ratified all main documents concerning the protection of human rights.

The freedom of expression and opinion, as enshrined in Article 19 of the Universal Declaration of Human Rights, is central to the proper functioning of any democratic political system. In this regard, Greece has a long tradition in promoting this particular right, being the country in which democracy was born.

From a historical perspective, the virtues of intellectual curiosity, tolerance and political liberty prized so much by ancient Greeks still remain the touchstones of our civilization. The democracy of ancient Athens, with its sovereign assembly of the citizen body, was far more radical than any democracy of today. Citizens of the Athenian Republic were free to express their opinion before the "ekklesia", the people's assembly, even propose the adoption of laws. Greek philosophers established the argumentative approach, based on the principle of dialogue. Ancient Greek tragedy and especially Greek comedy were another way of expressing people's views. The comic plays of Aristophanes show the willingness of the Ancient Athenians to have fun at the expense of leading citizens, the gods and even sacred ceremonies. The unfortunate example of Socrates, however, shows that even in the most ideal of cases the need for public awareness with respect to the protection of the right of expression is always present.

In modern democracies the right of expression is very closely related to the freedom of the press. The press informs the public, controls the government, gives the

հոշակագրի 19-րդ հոդվածում, էական դեր է խաղում ցանկացած պատշաճ գործող ժողովրդավարական քաղաքական համակարգի համար: Այս առումով Հունաստանը՝ որպես ժողովրդավարության օրրան, մեծ փորձ ունի հատկապես տվյալ իրավունքի զարգացման խնդրում:

Պատմական տեսանկյունից մտավոր զարգացման, հանդուրժողականության և քաղաքական ազատության արժեքները, որոնք այնպես գնահատվում էին հին հույների կողմից, այսօր էլ մեր քաղաքակրթության հիմնական սկզբունքներն են: Հին Աթենքի ժողովրդավարությունն՝ իր քաղաքացիական մարմնի ինքնավար ասամբլեայի հետ միասին, շատ ավելի կայուն էր, քան ներկայիս որևէ այլ ժողովրդավարություն: Աթենական Հանրապետության քաղաքացիները ազատ արտահայտում էին իրենց կարծիքը «էկլեսիայի» ժողովրդական ասամբլեայի առջև և անգամ օրենքների վերաբերյալ առաջարկություններով հանդես գալիս: Հույն փիլիսոփաներն ստեղծեցին տրամաբանական մոտեցման համակարգը՝ հիմնված երկխոսության սկզբունքի վրա: Հին հույների ողբերգությունները և հատկապես կատակերգությունները ժողովրդի հայացքներն արտահայտելու մեկ այլ միջոց էին: Արիստոֆանեսի կատակերգությունները վկայում էին այն մասին, որ հին աթենացիները ցանկություն ունեին զվարճանալու. նրանք ծիծաղում էին իրենց առաջնորդների ու աստվածների վրա և նույնիսկ սրբազան արարողությունների ժամանակ: Այնուամենայնիվ, Մոկրատեսի տխուր օրինակից կարելի է եզրակացնել, որ նույնիսկ ամենաիդեալական պայմաններում հարկ է, որ հասարակությունը մարդու իրավունքների պաշտպանության հարցերի վերաբերյալ բավականաչափ իրազեկ լինի:

Ժամանակակից ժողովրդավարական համակարգերում արտահայտվելու իրավունքը սերտորեն կապված է մամուլի ազատության հետ: Մամուլը հասարակությանն ապահովում է տեղեկատվությամբ, տվյալ հարցի շուրջ մյուսների կարծիքները լսելուց հետո մարդկանց դատելու և որոշումներ կայացնելու հնարավորություն է ընձեռում: Իր այս չափազանց կարևոր գործառույթի շնորհիվ միանգամայն օրինաչափ է, որ շատ երկրներում դրա գործունեության հիմնական սկզբունքները հատուկ տեղ են գտնում Սահմանադրության մեջ:

Հույն ժողովուրդը, նկատի ունենալով Հունաստանի ամբողջ պատմության ընթացքում մամուլի ազատության կարևոր դերը արտահայտվելու ազատության իրավունքի իրականացման խնդրում, շատ զգայուն է դրան առնչվող հարցերի նկատմամբ:

opportunity to the people to judge and decide, after having heard all opinions on one subject. In view of its important role, it is not surprising that in most countries the basis of its functioning is laid down in the Constitution.

Greek people are particularly sensitive to issues concerning the freedom of the press, in view of the role it played in the exercise of the right of freedom of expression throughout Greek history. The first attempts to publish a Greek periodical took place as early as in 1784 in Vienna. The influence of the Enlightenment period was evident in these attempts as in the ones that led to the publication of three of the most important newspapers of the Greek revolution period in 1824.

In modern Greece the right of freedom of expression and opinion is enshrined in Article 14 of the Greek Constitution. Moreover, in 1948 Greece voted in favor of the General Assembly Resolution containing the Universal Declaration of Human Rights. In the years to follow, Greece ratified other international legal documents, such as the International Covenant on Civil and Political Rights and the European Convention on Human Rights. In 1985, Greece accepted the right of the individual to appeal before the European Court of Human Rights against acts of or failure to act by the State.

Responsible for the supervision of the implementation of these international documents will be the Directorate of Human Rights of the Ministry of Foreign Affairs, the establishment of which is foreseen in the recently adopted law concerning the structure of the Ministry. The National Committee on Human Rights which is to be established soon will also play an important role, since its main objectives will be the constant monitoring of developments concerning the international system of human rights protection and dissemination of information concerning the consequences of any violation of human rights. The character of its activity will therefore be mainly pre-emptive.

According to Article 14 of the Greek Constitution, every person can express his/her thoughts orally or through the press, in accordance with the law (i.e. without libel or insults). The press is free, and cen-

Հունաստանում պարբերական հրատարակելու առաջին փորձերն արվեցին 1784թ. սկզբներին Վիեննայում: Այդ փորձերում ակնհայտ էր լուսավորչական ժամանակաշրջանի ազդեցությունը, որը առկա էր նաև այն մյուս երեք հիմնական թերթերում, որոնք հրատարակվեցին 1824թ. հունական հեղափոխության ժամանակաշրջանում:

Ժամանակակից Հունաստանում արտահայտվելու և կարծիքի ազատության իրավունքն ամրագրված է Հունաստանի Սահմանադրության 14-րդ հոդվածում: Ավելին, 1948թ. Հունաստանը կողմ քվեարկեց գլխավոր ասամբլեայի այն որոշմանը, որն ընդգրկում էր Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: Հետագայում Հունաստանը վավերացրեց մի շարք այլ միջազգային իրավական փաստաթղթեր, որոնք առնչվում էին արտահայտվելու և կարծիքի ազատության իրավունքի պաշտպանությանը, ինչպես օրինակ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան: 1985թ. Հունաստանն ընդունեց պետության կողմից ընդունված օրենքների կամ այդ օրենքների խախտման դեպքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանին բողոքարկելու անհատի իրավունքը:

Այդ փաստաթղթերի իրականացման հսկողության պարտականությունն իր վրա է վերցնելու արտաքին գործերի նախարարության մարդու իրավունքների գծով վարչությունը, որի ստեղծումը նախատեսվում է նախարարության կառուցվածքին վերաբերող վերջերս ընդունված օրենքում: Մարդու իրավունքների ազգային կոմիտեն, որը նախատեսվում է շուտով հիմնել, նույնպես կարևոր դեր կխաղա այդ հարցում, քանի որ նրա հիմնական խնդիրն է լինելու հետևել մարդու իրավունքների պաշտպանության միջազգային համակարգի առաջընթացին, ինչպես նաև մարդու իրավունքների խախտման հետևանքների վերաբերյալ տեղեկատվություն տարածելուն: Ուստի, դրանց գործունեությունը հիմնականում կանխարգելող բնույթ է կրելու:

Հունաստանի Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված կարգով իրավունք ունի իր մտքերն արտահայտել բանավոր կամ մամուլի միջոցով, այսինքն՝ առանց գրապարտության կամ վիրավորանք հասցնելու: Մամուլին տրված է ազատություն, միաժամանակ արգելվում է հրատարակումների բռնագրավումը և ցանկացած այլ կանխամտածված գործողություն գրաքննության կողմից: Բացառություն են կազմում կրոնին, պետության նախագահին հասցեագրված վիրավորանքները և ընդհանրապես

sorship as well as confiscation of publications and any other pre-emptive measures are prohibited. Exceptions are in cases of an offence against religion, the President of the Republic and common decency.

Moreover, according to Article 15 of the Constitution, radio and television are under the direct control of the State and have, as their aim, the objective dissemination, on equal terms, of news and information, as well as of products of speech and art.

According to Law 2328/3.8.1995, the establishment of private TV stations is allowed after the granting of a license by the State. The Minister of Press and Mass Media, following the positive recommendation of the National Council of Radio and Television, grants this license on the basis of stimulating the public interest. TV programs should respect the regulations concerning TV broadcasting and advertisements, which are in force for the National Broadcasting Channel within the framework of Article 15 of the Constitution and the Regulation 89/552/EC of the Council of Ministers of the European Communities of 3.10.1989, as introduced in the Greek legal order.

All TV and radio programs (including advertisements) should respect the personality, the honor, the private and public life, the professional, social, scientific, artistic, political and other activities of the person whose image appears on the screen or whose name is being transmitted. Law 2644/13.10.1998 sets out the terms for the supply of radio and TV services under subscription.

The above mentioned legal framework has laid down the basis for the operation of a large number of newspapers, TV and radio stations. As a result Greece experiences an uninhibited public discourse and an energetic free press. Satirical and opposition newspapers routinely attack the government, while radio and television stations operate independently with few constraints on their reporting. In practice, even the exceptions to the right of expression, mentioned in the Constitution, and more precisely codified in the Greek penal code, have rarely been implemented.

Members of ethnic, religious and linguistic minorities, including the Muslim

քաղաքավարության նորմերի խախտմանն առնչվող դեպքերը:

Ավելին, Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն, ռադիոն և հեռուստատեսությունը, որոնք նպատակ ունեն հավասար պայմաններում նորություններ և տեղեկատվություն, ինչպես նաև հրապարակային խոսք ու արվեստի նմուշներ տարածել, ենթարկվում են պետության անմիջական հսկողությանը:

Ըստ 3.8.1995թ. 2328 թվակիր օրենքի՝ թույլատրվում է մասնավոր հեռուստակայանների հիմնումը պետության կողմից համապատասխան թույլտվություն ստանալուց հետո: Մամուլի և ՋԼՄ-ների նախարարը, առաջնորդվելով Ռադիոյի և հեռուստատեսության ազգային խորհրդի հանձնարարականներով, այն դեպքում, եթե դրանք հետաքրքրություն են առաջացնում հասարակության շրջանում, տալիս է այդ արտոնագիրը: Հեռուստածրագրերը պետք է հարգեն հեռուստատեսային թողարկումների և գովազդների վերաբերյալ այն կանոնակարգը, որը վերաբերում է պետական ալիքին:

Բոլոր ռադիո և հեռուստակայանները, այդ թվում նաև գովազդները, պարտավոր են հարգել եթերում ներկայացվող կամ հիշատակվող անձնավորությանը, նրա անձնական և հասարակական կյանքը, մասնագիտական, սոցիալական, գիտական, գեղարվեստական, քաղաքական և այլ տիպի գործունեությունը: 13.10.1998թ. թիվ 2644 օրենքը սահմանում է ռադիո և հեռուստատեսության ծառայություններին սարքավորումներ տրամադրելու պայմանները:

Վերը նշված իրավական դաշտը հող է ստեղծել մեծ թվով թերթերի, հեռուստակայանների և ռադիոկայանների գործունեության համար: Դրա արգասիքն է Հունաստանում հասարակության ազատ արտահայտման իրավունքը, ինչպես նաև արդյունավետ գործող և ազատ մամուլը: Երգիծական և ընդդիմախոս թերթերը սովորաբար հարձակումներ են գործում կառավարության վրա, իսկ ռադիո և հեռուստակայանները գործում են կառավարության հսկողությունից ազատ: Գործնականում արտահայտման իրավունքին վերաբերող որոշ բացառություններ, որոնք նշված են Սահմանադրության մեջ և ավելի ստույգ դասակարգված են Հունաստանի քրեական օրենսգրքում, հազվադեպ են իրականացվել:

Էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնությունները, այդ թվում Թրակիայի մահմեդական փոքրամասնությունը, ազատորեն հրատարակում են թերթեր և այլ պարբերականներ և

minority in Thrace, freely publish newspapers and other periodicals, often in a language other than Greek. In this respect, I would like to stress the important contribution of the Armenian press in Greece to the freedom of expression and opinion. According to non-official sources, it is estimated that since 1890 at least 107 Armenian publications have been issued in Athens. Throughout the years they have participated in the general exchange of views and promotion of ideas that cultivate relations and strengthen the cultural ties between Greece and Armenia.

Coming back to the evaluation of the whole picture, it should be mentioned that according to recent data of the Ministry of Press and Mass Media, 4,000 periodicals are in circulation in Greece today. These comprise:

1. 50 daily newspapers in Athens and 8 in Salonika,
2. 189 daily newspapers in provinces,
3. Around 300 weekly newspapers.

With regard to television and radio since the termination of the state monopoly in 1989, a large number of private stations have emerged. Nowadays 86 private TV stations function on a regional basis, 61 on a provincial basis and 10 on a national basis. Finally, the number of provincial radio stations is 115.

The number and variety of newspapers in Greece proves the important role they play in Greek society and in shaping the public opinion on a range of issues. It also shows the emphasis that the Greek political system places on the freedom of expression and opinion as a fundamental right of the individual and as the right that guarantees the proper functioning of any democratic system.

Fifty years after the adoption of the Universal Declaration of Human Rights, it has been widely established that the upgrading of the level of protection of human rights, especially the right to freely hold and express one's opinions and expression, constitutes a basic commitment and responsibility of a truly democratic State.

շատ հաճախ իրենց մայրենի լեզվով: Մասնավորապես, ես կցանկանայի ընդգծել հայկական մամուլի նշանակալի ներդրումը Հունաստանում արտահայտման և կարծիքի ազատության հարցում: Ըստ ոչ պաշտոնական աղբյուրների 1890թ. ի վեր մոտ 107 հայկական հրատարակություններ են լույս տեսել Աթենքում: Տասնամյակների ընթացքում դրանք մասնակցել են հասարակական կարծիքի ձևավորմանը և նոր գաղափարներ են առաջ քաշել, որոնք հիմք են հանդիսացել Հունաստանի և Հայաստանի միջև մշակութային կապերի հաստատման և ամրապնդման համար:

Վերադառնալով իրավիճակի ամբողջական գնահատականին՝ հարկ եմ համարում նշել, որ Մամուլի և ՋԼՄ-ների նախարարության տրամադրած վերջին տվյալների համաձայն, այսօր Հունաստանում շրջանառության մեջ են գտնվում 4000 պարբերականներ, այդ թվում՝

1. Աթենքում՝ 50, Սալոնիկում՝ 8 օրաթերթ,
2. գավառներում՝ 189 օրաթերթ,
3. մոտ 300 շաբաթաթերթ:

Սկսած 1989թ., երբ ռադիոն և հեռուստատեսությունը ձերբազատվեցին պետական մենաշնորհից, երևան եկան մեծ թվով մասնավոր հեռուստակայաններ: Ներկայումս գործում են 86 շրջանային, 61 գավառային և 10 ազգային մակարդակներով մասնավոր հեռուստակայաններ: Եվ վերջապես, գավառային ռադիոկայանների թիվը հասնում է 115-ի:

Հունաստանում թերթերի քանակն ու բազմազանությունը վկայում են այն կարևոր դերի մասին, որ ունեն դրանք հասարակական կարծիքի ձևավորման խնդրում: Դա ապացույցն է նաև այն իրողության, որ Հունաստանի քաղաքական համակարգը կարևորում է արտահայտման և կարծիքի ազատության դերը՝ համարելով այն անհատի հիմնական իրավունքներից մեկը, իրավունք, որով պայմանավորված է ցանկացած տիպի ժողովրդավարական համակարգի պատշաճ գործունեությունը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումից 50 տարի անց լայն տարածում է գտել այն համոզմունքը, որ մարդու իրավունքների հետագա առաջխաղացումը, հատկապես արտահայտման և կարծիքի ազատության պաշտպանության գործընթացը, իսկական ժողովրդավարական հասարակարգի հիմնական առաքելությունն ու պատասխանատվության խնդիրն է:

ԳՅՈՒՄՐԻ GYUMRI

*Production director of "Shant"
Broadcasting Company in Gyumri*
Levon Barseghian

*Գյումրիի «Շանթ» հեռուստառադիոընկերության
արտադրության տնօրեն*
Լեւոն Բարսեղյան



The implementation of all fundamental human rights will be impossible without freedom of speech, thought and opinion. This interdependence is clearly observable in both advanced democracies and in transition societies. Articles 23 and 24 of the Constitution of the Republic of Armenia are in fact grounded in and proceed from the provisions of Article 19 of the Universal Declaration of Human Rights and Article 10 of the European Convention on Human Rights.

Armenia, too, has embarked on the road to democracy. We realize that the bridge linking the former totalitarian regime with the society where there are equal rights and responsibilities for all is still very shaky for passage, and

Առանց խոսքի, մտքի և կարծիքի ազատության իրավունքների՝ մարդը չի կարող լիարժեք օգտագործել իր մյուս հիմնական իրավունքները, որոնց էական փոխշաղկապվածությունը առկա է ինչպես արդեն կայացած ժողովրդավարական երկրներում, այնպես էլ ժողովրդավարության ուղին նոր-նոր ուղի դրած պետություններում: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածը, դրանից բխած մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը իրենց արտացոլումն են գտել ՀՀ Սահմանադրության 23-րդ, 24-րդ հոդվածներում:

Հայաստանը ժողովրդավարության ուղի բռնած պետություն է և ամենքիս հայտնի է, որ նախորդ ամբողջատիրական ռեժիմներից դեպի իրավունքների և պարտավորությունների համարժեքությամբ հավասարակշիռ հասարակարգ կամուրջը չափազանց երերուն է, և այդ ճանապարհը հաղթահարելու համար անհատի, անհատների խմբի նույնիսկ բուն ցանկությունը կարող է ոչինչ չտալ, եթե բացակա են մի շարք կարևոր պայմաններ:

Ընդհանուր առմամբ, հասարակության թվացյալ պարզ շղթայում զանգվածային լրատվամիջոցների դերը նմանվում է և՛ հայելու, և՛ ոսպյակի, և՛ պրիզմայի:

Հայտնվելով հասարակություն-հասարակություն շղթայի մեջ՝ ՁԼՄ-ները արտացոլելու, հատկանշելու և վերլուծելու առաքելություն ունեն: Բերված հերթականությունը ցուցանում է այդ առաքելության բաղկացուցիչները՝ ըստ բարդության:

Մյուս կողմից՝ հասարակության և լրատվամիջոցների ակնհայտ փոխկապվածության ելակետով կարող ենք սահմանել, թե որքան առողջ և հզոր է հասարակությունը, այնքան առողջ և հզոր են այդ հասարակության լրատվամիջոցները: Որոշ

the desire of a person or a group of persons is not enough if certain conditions have not been met.

The role that the mass media performs in general in the society may be compared to that of the mirror or a prism.

The mission of mass media is to reflect, to describe and to analyze the current events and developments. The above-mentioned components of the mission are cited here in the order of growing complexity and intricacy.

On the other hand, the obvious interrelation between the society and the mass media provides grounds for noting that the more sound and powerful the society is, the more sound and powerful the mass media in that society will be. Some of the professionals believe that it provides essential background for the existence of the 4th power. When the 4th power is in place and robust, it means that given society may be assumed safe and sound.

Gyumri is the second largest city of Armenia in terms of territory and population (210,000 residents or 6,56% of the total population of Armenia.). It is situated 120-km northwest from the capital city Yerevan and is very close to the borders with Turkey. Gyumri sustained huge losses because of the 1988 earthquake (with the loss of 60-65% of its population due to mass loss of life, 17,000 victims, and to migration, and to 50-60% of workplaces). Gyumri like the rest of Armenia suffered greatly from the economic and energy crises, because of the conflict between Karabakh and Azerbaijan, because of war, and the blocked imposed by Azerbaijan. The existing extremely unfavorable socioeconomic situation in Gyumri has been brought about by the above-mentioned factors. This situation was clearly the worst and had the bleakest prospects in entire Armenia. It is this situation that has had an adverse impact on moral and psychological health of the nation and on the latter's socio-economic potential.

The number of mass media outlets operating in Gyumri and the leverage they have directly and indirectly testify to what Gyumri is in reality.

Gyumri has deep-rooted cultural traditions. In recent Armenian history both the capital and foreign countries benefited from the outflow of intellectual human capital from Gyumri.

մասնագետներ սա դիտում են որպես չորրորդ իշխանության լինելության պայման. եթե կայանում է 4-րդ իշխանությունը, ուրեմն հասարակությունն առողջանում է կամ առողջ է:

Գյումրին Հայաստանի երկրորդ խոշոր քաղաքն է՝ մակերեսով և բնակչությամբ (ՀՀ բնակչության 6.56%, մոտ 210 000 մարդ), հեռու է մայրաքաղաք Երևանից 120 կմ դեպի հյուսիս-արևմուտք, հարևան է Թուրքիային: 1988թ. երկրաշարժից տուժել է մյուս բնակավայրերից ավելի շատ և բոլոր առումներով (մոտ 17 000 զոհ, բնակֆոնդի 60-65% և աշխատատեղերի 50-60% կորուստ): Գյումրին, ինչպես և ամբողջ Հայաստանը, տուժել է նաև տնտեսական ճգնաժամից, էներգետիկ ճգնաժամից, դարաբաղա-աղբբեջանական հակամարտությունից և պատերազմից, աղբբեջանական շրջափակումից:

Վերոհիշյալը պայմանավորում է այն սոցիալ-տնտեսական ծայրահեղ վատթար իրավիճակը, որ կա Գյումրիում: Այդ իրավիճակն ամբողջ Հայաստանում վատթարագույնն ու անհեռանկարը կարելի է համարել:

Հենց նույն իրավիճակով էլ պայմանավորված է հասարակության առողջությունը՝ բարոյահոգեբանական իմաստով և հզորությունը՝ սոցիալ-տնտեսական:

Գյումրիում գործող զանգվածային լրատվամիջոցների և՛ թիվը, և՛ հզորությունները հիմնականում և անուղղակիորեն անդրադարձնում են այն, ինչ իրենից ներկայացնում է Գյումրին:

Գյումրին ունի մշակութային լավագույն ավանդույթներ և Հայաստանի նորագույն պատմության մեջ ինտելեկտուալ հարստության արտահանողն է եղել մայրաքաղաք, արտասահման:

Գյումրիում այսօր գործում են.

Հեռուստատեսություններ

Մասնավոր	«Շանթ» հեռուստաընկերություն
	2-րդ ալիք, 28-րդ ալիք
Պետական	«Շիրակ» հեռուստատեսություն
	6-րդ ալիք
Մասնավոր	«Ցայգ» հեռուստաընկերություն
	6-րդ ալիք

Ռադիոկայաններ

Մասնավոր	«Շանթ»	FM-104.1
Պետական	«Շիրակի ձայն»	քաղաքային ցանց
Մասնավոր	«SU»	FM-105



Mass Media Outlets currently operating in Gyumri:

	TV Stations	
Private	"SHANT" TV Company channel 2, channel 28	
National	"SHIRAK" TV channel 6	
Private	"TSAIG" TV Company channel 6	
	Radio Stations	
Private	"SHANT"	FM-104.1
National	"The Voice of Shirak" city network	
Private	"TM"	FM-105
	Newspapers	
Private	"Kumairi" weekly	
Private	"Hingshabti" weekly	
National	"Hyusisayin Hayastan" weekly	
Private	"Shant" weekly	
Private	"Shirak" monthly	

Of which "SHANT" TV, radio station and the weekly are represented by one legal person - "SHANT" Broadcasting Company (Ltd.), whereas "SHIRAK" TV Company and "The Voice of Shirak" radio station are controlled by another legal person, the radio and TV department "SHIRAK".

It would be far-fetched to contend that the above-mentioned non-government mass media outlets are absolutely independent. In general, independence of mass media is underlain by a combination of a free market and of the freedom, for all individuals, of speech, thought, opinion, of informing and being informed, which in a sense also represent the same market principle.

The ads market of Gyumri, which is shaped by the state of the economy, is extremely poor. Independence of mass media is nominal at best.

Since rates of airtime on TV and radio for commercials are high, the TV and radio stations, except government-run ones, worked and still work partially with losses.

The production cost of the newspapers and a nearly total lack of advertisers bring about such prices of the newspapers, which are pro-

Թերթեր

Մասնավոր	«Կումայրի» շաբաթաթերթ
Մասնավոր	«Հինգշաբթի» շաբաթաթերթ
Պետական	«Հյուսիսային Հայաստան» շաբաթաթերթ
Մասնավոր	«Շանթ» շաբաթաթերթ
Մասնավոր	«Շիրակ» ամսաթերթ

Վերջիններից «Շանթ» հեռուստաստուդիան, ռադիոկայանը, շաբաթաթերթը ներկայացնում է 1 իրավաբանական անձ՝ «Շանթ» հեռուստառադիոընկերությունը (ՍՊԸ), իսկ «Շիրակ» հեռուստաընկերությունը և «Շիրակի ձայն» ռադիոկայանը ներկայացնում է մեկ իրավաբանական անձ՝ «Շիրակ» հեռուստառադիոպետվարչությունը:

Վերը բերված ոչ պետական լրատվամիջոցների անկախությունը անվերապահ չի կարող սահմանվել, քանի որ ընդհանրապես լրատվամիջոցների անկախության անկյունաքարը դուալիզմն է, որի բաղկացուցիչը շուկան է, մյուսը՝ նույն շուկան ներկայացնող հասարակության խոսքի, մտքի, տեսակետի, տեղեկացման և տեղեկացնելու ազատության իրավունքը:

Գյումրիի տնտեսությամբ պայմանավորված գովազդային շուկան ավելի քան աղքատիկ է, լրատվամիջոցների անկախությունը՝ տարաբնույթ և ոչ կատարյալ:

Հեռուստատեսության և ռադիոյի պարագայում գովազդային վաճառքի ենթակա ժամանակի ինքնարժեքի բարձր լինելու պատճառով հեռուստատեսությունները և ռադիոկայանները, բացառությամբ պետականի, աշխատել են և այժմ մասամբ աշխատում են վնասով:

Թերթերի ինքնարժեքը և գովազդատուի գրեթե իսպառ բացակայությունը բերում է թերթերի վաճառքի այնպիսի գների, որոնք ծայրահեղ ցածր եկամուտներով, միջին խավի առկայության պարագայում իսկ, վերարտադրության և կայուն, անցնցում գոյատևման համար անհրաժեշտ իրացվող տպաքանակ չեն ապահովում:

Նման պայմաններում խիստ մեծ է որոշ մասնավոր լրատվամիջոցների գայթակղությունը ապավինելու ոչ թե շուկային, այլ ամենատարբեր ուժերի (ուժային կառույցներ, խմբային շահեր, պետության ներկայացուցիչներ, պաշտոնյաներ), որոնք իրենց հերթին հստակ գիտակցում են ՉԼՄ-ների հնարավորությունները և կարողությունները բավարար ֆինանսավորումների կամ սնումների դեպքում: Հայաստանում և Գյումրիում ձևավորված տերմին կա



hibitive for the remaining middle class, which is now in a very low income bracket and cannot ensure the circulation that would make the newspapers economically viable and sustainable.

Under the circumstances it is tending for private mass media outlets tend to rely not on market but rather on other powers (such as the military and law-enforcement agencies, vested interests, public officials and civil servants). The latter are aware of the opportunities and the capability mass media could provide in case of adequate funding. Patronage and protection are not a rare occurrence in Gyumri and throughout Armenia. They are viewed as an inevitable reality.

Since the state-run media as a rule did not differentiate between the national interests and that of State bodies, and moreover it was funded from the national budget, it had to be subservient, whether willingly or unwillingly, to the powers that be.

The situation is further aggravated by numerous flows and drawbacks of currently active legislation as well as by certain features of frequently changing authorities of the Republic of Armenia. As a result, mass media which ostensibly is a promoter of freedoms, faces numerous constraints in accomplishing its fundamental mission. At best media provides a mere reflection of events: who? visited? what? when? and where? and what they did. It may be important to get answers to who? when? where? and what? questions. The arguably more important question of why? is rarely, if ever, dealt with. The thing is that answering the what? and why? questions may loosen the rope of the sword of Damocles hanging over the media. It is in that respect that dependence of media on the market, on legal nihilism, on the unscrupulous permissiveness generated by that nihilism and the resulting dependence on the "invisible boss" from shadow economy is manifested in a striking fashion.

Thus, the media has not yet proved itself as the explorer of the whats and whys. Media is unprotected and vulnerable not only in Gyumri. I do not mean to say that investigations and explorations conducted by reporters are unheard-of occurrences. From time to time media comes up with well-researched, unbiased and audacious analytical articles, interviews and other materials. Nevertheless, these are few and far between and cannot set the

նույնիսկ՝ կրիշա (տանիք, ծածկ). սա ենթադրում է ուժային, ֆինանսական կամ այլ պաշտպանություն:

Քանի որ պետական լրատվամիջոցներն ավանդաբար պետության շահը շփոթել են պետական մարմինների շահերի հետ և, մանավանդ, ֆինանսավորվել են պետությունից, միշտ էլ կամավանա ենթարկվում են անմիջական կամ միջնորդավորված վերադասի կամքին: Այս ամենին անտարակույս նպաստում են նաև ՀՀ գործող օրենսդրության բազմաթիվ թերությունները, խոցելի կողմերը և հարափոփոխ իշխանությունների զանազան որակները:

Արդյունքում խոսքի գոնե բավարար ազատության իրավունքի ենթադրյալ արտահայտիչները՝ ՉԼՄ-ները, խիստ կաշկանդված են իրենց հիմնական առաքելության դաշտում: ՉԼՄ-ները լավագույն դեպքում աշխատում են իրադարձությունների լուսաբանումների՝ ընդհանուր արտացոլումների ոլորտում. այցելեցին, բացեցին, փակեցին, ժամը, տեղը: Տրվում են «ո՞վ», «ե՞րբ», «ո՞րտեղ», մասամբ «ի՞նչ» հարցերի պատասխանները: «Ինչու՞» հարցը ծայրահեղ քիչ է շոշափվում: Բանն այն է, որ «ի՞նչ» և «ինչու՞» հարցերի պատասխանները Գյումրիում քանդում են տեղի լրատվամիջոցների գլխավերևում կախված դազանակը պահող պարանը: Այստեղ է, որ առավել ցայտուն է արտահայտվում լրատվամիջոցների կախվածությունը շուկայից, իրավական նիհիլիզմից և վերջինից առաջացած ամենաթողության միջավայրից և այս ամենի արդյունքում՝ ստվերային «տիրոջից»:

Այսպիսով, ՉԼՄ-ները տակավին չեն արդարացրել իրերի ինչը և ինչուն ուսումնասիրողի իրենց դերը: ՉԼՄ-ները պաշտպանված չեն ոչ միայն Գյումրիում: Ասվածը չի նշանակում, թե չկան լրագրողական ուսումնասիրություններ և հետաքննություններ. երբեմն-երբեմն այս կամ այն լրատվամիջոցում երևում են ուժեղ նյութեր, հոդվածներ, վերլուծություններ, ռեպորտաժներ, հարցազրույցներ: Բայց սրանք չեն կարող ընդհանուր եղանակ ստեղծել, մանավանդ որ ուղեկցվում են լրագրողների և ՉԼՄ-սեփականատերերի միջև շարունակական կոնֆլիկտներով: Գյումրիում կան լրագրողներ, որոնք կարող են գրել հոդվածներ կամ պատրաստել ֆիլմեր ու ռեպորտաժներ, որոնք ոչ մի չեզոք լրատվամիջոց Գյումրիում (մեղք չի լինի ասել նաև Հայաստանում) չի համարձակվի հրապարակել: Լրագրողի աշխատանքը ցածր վարձատրվողներից է Գյումրիում: Ընդհանուր պաշտպանվածությամբ Գյումրիի լրագրողները չեն կարող պարծենալ:

Այնինչ բոլորիս հայտնի է, որ ՉԼՄ-ներն, առանց

general tone, more so that they are accompanied by never-ending conflicts between journalists and media owners. There are journalists in Gyumri who are capable to produce articles or a piece of reporting or a documentary, which, irrespective of their merits, it will be virtually impossible to find a media outlet that would run the risk of getting it to the audience in Gyumri (or elsewhere in Armenia, for that matter).

The job of a journalist is among the lowest paid in Gyumri. And there are no safety nets for journalists in Gyumri.

It is a well-known fact that mass media without free thinking writing journalists is very much like a painter without an easel and a palette.

During the 1998 presidential elections in the Republic of Armenia when a conflict arose between the TV companies, which were sharing one channel and which could not reach a consensus regarding the distribution of prime time, the head of the Gyumri military police took upon himself the protection of the Tsaig TV. The province Governor Mr. Gomtsian, who was supposed, by virtue of his post, to resolve the issue, had, in fact, no say in the matter.

This fact demonstrates once again that it is still premature to say that media is independent in Gyumri, even though after coming to power President R. Kocharian accomplished much in terms of promoting freedom of expression. The officials in Gyumri are more cooperative than they used to be in 1992-1997. They often have to answer uncomfortable questions. There is every indication that public control via mass media is gaining some ground.

The existence and operation of projects and organizations in Armenia that support mass media are of crucial importance. Three media outlets in Gyumri received grants from the Eurasia Foundation. The policies as regards the Gyumri media may significantly contribute to its genuine independence. Both public at large and each individual citizen will benefit from genuine independence of mass media.

In conclusion, I would like to say that mass media in Gyumri has not yet become the fourth power. At best it is at the beginning of the process. The process and its outcome depend on the economy (i.e. on the market), on mass media itself and on legislative reforms.

ազատ մտածող և գրող լրագրողների, մոտավորապես նույնն են, թե գեղանկարիչն առանց կտավ-ներկերի: Վերջինս չի մեռնի և հոգու խորքում միշտ էլ գեղանկարիչ կմնա:

1998թ. ՀՀ նախագահական ընտրությունների ժամանակ նույն ալիքով 3 հեռուստատեսությունների գիշերային աշխատանքը ժամաբաշխելու համառ վեճի մեջ (6-րդ ալիքն այդ ժամանակ տարբեր ժամերի կիսում էին 3 հեռուստաընկերությունները) «Յայգի» (նոր) շահերի պաշտպանությունը ստանձնեց Գյումրիի ռազմական ոստիկանության պետը: Սարգսյան Ա. Գոմցյանը, ում վերապահված էր գործը, փաստորեն խաղից դուրս մնաց:

Այս փաստը ևս մեկ անգամ գալիս է ապացուցելու, որ Գյումրիի ՉԼՄ-ների անկախության մասին խոսել դեռևս վաղ է, թեպետ ժողովրդավարացման այս ընթացքում Ռ. Քոչարյանի իշխանության գալը զգալի տեղաշարժեր կատարեց խոսքի ազատության ասպարեզում: Գյումրիի պաշտոնյաները 1992-97թթ. պես չխոսկան չեն, արդեն հաճախ ստիպված են լինում պատասխանել իրենց համար անցանկալի հարցերին, հիմա ավելի քան ակնհայտ է, որ հասարակական վերահսկողությունը, ի դեմս ՉԼՄ-ների, բավականաչափ լրջանում է:

Խիստ էական է ՉԼՄ-ների աջակցության ծրագրերի և մանավանդ աջակցող կազմակերպությունների առկայությունն ու գործունեությունը Հայաստանում: Գյումրիի ՉԼՄ-ներից 3-ը շնորհներ են ստացել «Եվրասիա» հիմնադրամից: Գյումրիի ՉԼՄ-ների նկատմամբ տարվող քաղաքականությունը կարող է ավելի նպաստավոր դառնալ ՉԼՄ-ների իրական անկախացման ճանապարհին: Իսկ ՉԼՄ-ների իրական անկախացմամբ կշահի հասարակությունը և յուրաքանչյուր անհատ:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ

ա) Գյումրիի զանգվածային լրատվամիջոցները դեռևս (30.3.1999) չեն կայացել որպես չորրորդ իշխանություն, լավագույն դեպքում դեռ կայացման փուլում են,

բ) Կայացման ընթացքն ու արդյունքը կախված է

- տնտեսությունից՝ շուկայից,

- իրենցից՝ ՉԼՄ-ներից,

- օրենսդրական բարեփոխումներից:

ՎՐԱՍՏԱՆ GEORGIA

Advisor of the Embassy of Georgia in Armenia
Zurab Aleksidze

Հայաստանում Վրաստանի դեսպանատան խորհրդական
Ջուրաբ Ալեքսիձե



Ցանկացած երկրում մամուլի ազատ գործունեությունը ժողովրդավարության կարևոր ձեռքբերումներից մեկն է համարվում: Խորհրդային Միության փլուզումից հետո նախկին միութենական հանրապետությունների զանգվածային լրատվական միջոցները ստիպված եղան դժվարին ճանապարհ անցնել, որպեսզի նորանկախ պետությունների ժողովրդավարական համակարգում չորրորդ իշխանությունը պատշաճ տեղ գրավի և նպաստի երկրի ժողովրդավարական զարգացման գործընթացին:

Այս առումով Վրաստանը բացառություն չի կազմում: Անկախություն ձեռք բերելուց հետո (1991թ. ապրիլի 9-ը), Վրաստանը պետականության կառուցման ճանապարհին բազմաթիվ դժվարություններ է հաղթահարել: Շատ հիմնախնդիրներ են ժառանգություն մնացել երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքի բնագավառներում: Երկրին վիճակվել է անցնել քաղաքացիական պատերազմների միջով, անցում կատարել շուկայական հարաբերությունների և լուծել բազմաթիվ տնտեսական խնդիրներ: Վրաց զանգվածային լրատվական միջոցներն այս ընթացքում զուտ ականատեսի դեր չեն ստանձնել, այլ փորձել են հնարավորինս անաչառ գնահատականներ տալ տեղի ունեցող իրադարձություններին և ձայն բարձրացնել անարդարությունների ու բռնությունների դեմ:

Պետական հեղաշրջումից հետո (1992թ. հունվարի 6-ը) մտքի ազատ արտահայտումն առավել հնարավոր դարձավ: Դուք տեղյակ եք, որ մինչև արտահերթ նախագահական ընտրությունները Վրաստանը ժամանակավորապես ղեկավարվում էր

In each country free activity of the press is considered one of the achievements of democracy. After the breakdown of the Soviet Union, the mass media outlets of the former republics had to pass through hard times to be able to occupy a prominent place as the 4th power in the newly created independent democratic state thus contributing to the development of democracy.

In this regard Georgia was no exception. After acquiring independence (on 9 April 1991) Georgia has overcome numerous difficulties in the process of creating statehood. It inherited a great deal of problems in policymaking and in the social and eco-



conomic spheres of the country's life. The country passed through civil wars, made transition into market relations and solved a lot of economic problems. The Georgian mass media was not an uninvolved bystander during this period. They made concerted efforts to make an objective evaluation of the current events, and voiced their protest against injustice and violations.

After the 6 January 1992 coup d'état it became even more indispensable to freely express opinion. You are aware that before the extraordinary presidential elections Georgia was governed first by the military council, then the national council came into power. The reason why that was the case was that not everybody was guaranteed the right to freedom of speech and expression, including civic and political groups that supported the former authorities.

After the 1992 parliamentary elections the irrevocable process of creating a new State started. The State was gradually getting rid of paramilitary and armed groups acting throughout Georgia and took an active part in the State governance. The newly created authorities initiated decisive actions aimed at setting up democratic institutions.

At present Articles 19 and 24 of the Constitution of Georgia are grounded in and proceed from the provisions of Article 19 of the Universal Declaration of Human Rights. The Law on Press of Georgia (1991) ensures the implementation of these articles. Pursuant to this law, the press and other mass media outlets in the country are free. The citizens of Georgia are entitled to express, disseminate and hold their opinions through any media outlets. Censorship over the press and other mass media outlets is prohibited.

The opportunities are provided for all these provisions to be carried out properly today unlike the situation that was during the reign of the former authorities. Now numerous independent newspapers are published in Georgia and the Government does not interfere in their activities with very few exceptions. The number of partisan

նախ զինվորական, ապա պետական խորհրդի կողմից: Այդ իսկ պատճառով խոսքի և մտքի ազատ արտահայտման հնարավորությունը բոլորին չէր տրված: Դրանց թվում էին նախկին իշխանություններին աջակցող հասարակական և քաղաքական ուժերը:

1992թ. խորհրդարանական ընտրություններից հետո սկիզբ է առել նոր պետության կառուցման անշրջելի գործընթացը: Պետությունն աստիճանաբար ազատվում էր զինվորական խմբավորումներից, որոնք անխափան գործում էին Վրաստանի ամբողջ տարածքում և մասնակցում պետական կառավարմանը: Նոր իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումները ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման նպատակ էին հետապնդում:

Ներկայում մարդու իրավունքների 19-րդ հոդվածում նշված իրավունքներն ամրագրված են Վրաստանի նոր սահմանադրության 19-րդ ու 24-րդ հոդվածներում: Նրանց իրականացումն ապահովված է Վրաստանի «Մամուլի մասին» օրենքով (1991թ.): Համաձայն այդ օրենքի, երկրում մամուլն ու զանգվածային լրատվական այլ միջոցներն ազատ են: Վրաստանի քաղաքացիներն իրավունք ունեն լրատվական բոլոր միջոցներով արտահայտելու, տարածելու ու պաշտպանելու իրենց կարծիքը: Մամուլի և զանգվածային լրատվական այլ միջոցների գրաքննությունն անթույլատրելի է:

Այս բոլոր դրույթների իրականացման համար այսօր ավելի մեծ հնարավորություններ կան, քան նախկին իշխանությունների ժամանակ: Այժմ Վրաստանում բազմաթիվ անկախ թերթեր են հրատարակվում, որոնց գործունեության համար պետությունը, բացառությամբ ծայրահեղ դեպքերի, խոչընդոտ չի ստեղծում: Կուսակցական թերթերի թիվը համեմատաբար փոքր է, քանի որ ոչ բոլոր կուսակցություններն են ի վիճակի ֆինանսապես ունենալու սեփական կուսակցական մամուլ: Սակայն հրատարակվող ոչ պետական մամուլում հիմնականում տեղ են գտնում սենսացիոն լուրեր, հասարակության ուշադրության կենտրոնում գտնվող անհատների, քաղաքական գործիչների հետ հարցազրույցներ, որոնք ուղղված են վերջիններիս վարկանիշը բարձրացնելուն և ընթերցողների քանակը մեծացնելուն: Ազատ մամուլի երևան գալը շատ հաճախ ուղեկցվում է ցածր արհեստավարժական մակարդակով, լոկ սենսացիաներով, երիտասարդ լրագրողների և վերլուծական մտածողության սակավությամբ:

Երկրում առկա ֆինանսական դժվարությունները

newspapers is relatively small. It is explained by the fact that not all political parties can afford to have their own periodicals. However, sensationalism dominates the publications in unofficial press as well as interviews with individuals and community activists being in the focus of public attention and aiming at increasing one's popularity and readership.

Lack of professionalism and skills of young journalists, and prevalence of sensationalism accompanied very often the emergence of free press.

Unfavorable financial situation of the country does not make it possible for some newspapers to involve professional journalists. The same holds true for independent TV companies. Nevertheless, "Rustavi" independent TV Company holds special place among them in terms of professionalism and high quality of broadcasting. This TV Company first appeared 3 years ago but the Ministry of Communication and Postal Services revoked its broadcasting license. After lodging a complaint with the Supreme Court the company was again granted the right to broadcast. Today "Rustavi-2" provides rather fair coverage of social, economic and political events in the country. It has reporters in a number of countries.

The energy crisis, paper shortage and poor financial situation often stand in the way of implementation of the provisions of Article 19 in Georgia. According to the Law on Freedom of the Press and Other Mass Media Outlets of Georgia, the State provides, through the Ministry of Communications and Postal Services of Georgia, licensing for television and radio broadcasting. Referring to other mass media outlets, including the right to start a newspaper or magazine, it is stipulated by law. The mass media outlets may start their activities only after registration. Only the court's ruling may place the restrictions, reduction of issues in circulation or ban on broadcasting.

Now the number of registered newspapers reaches 150. The State holds monopoly over two governmental newspapers and two television programs. The newspapers

հնարավորություն չեն տալիս որոշ թերթերին ներգրավելու արհեստավարժ լրագրողներին: Նույն վիճակում են հեռուստատեսային անկախ ընկերությունները, սակայն դրանց շարքում իր արհեստավարժությամբ և հեռարձակման բարձր որակով աչքի է ընկնում «Ռուսթավի» անկախ հեռուստաընկերությունը: Այս հեռուստաընկերությունն առաջին անգամ ասպարեզ եկավ երեք տարի առաջ, բայց հաղորդակցության նախարարությունը նրան զրկեց հեռարձակման արտոնագրից: Գերագույն դատարան հայց ներկայացնելուց հետո հեռուստաընկերությունը վերստին ձեռք բերեց հեռարձակման իրավունք: Այսօր «Ռուսթավի-2»-ն անկախ հեռուստաընկերություն է, որը բավականին խիստ և անաչառ կերպով լուսաբանում է երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրադարձությունները: Նա իր թղթակցային հենակետերն է բացել մի քանի արտասահմանյան երկրներում:

19-րդ հոդվածի իրականացմանը հաճախ խոչընդոտում են Վրաստանում առկա էլեկտրաէներգիայի ճգնաժամը, թղթի սղությունն ու ֆինանսական միջոցների ոչ բավարար լինելը: Վրաստանի «Մամուլի և զանգվածային լրատվական ալլ միջոցների ազատության մասին» օրենքի համաձայն, պետության կողմից նախատեսված է ռադիո և հեռարձակման արտոնագրում, որն իրականացնում է Վրաստանի փոստի և հաղորդակցության նախարարությունը: Ինչ վերաբերում է զանգվածային լրատվական ալլ միջոցների, այդ թվում թերթ կամ ամսագիր հիմնադրելու իրավունքին, ապա դա ամրագրված է օրենքով: Ջանգվածային լրատվական միջոցներն իրենց գործունեությունը կարող են սկսել միայն գրանցումից հետո: Սահմանափակումները, տպաքանակի նվազեցումը կամ հեռարձակման արգելումը կարող են իրականացվել միայն դատարանի համապատասխան որոշման հիման վրա:

Վրաստանում այժմ տարբեր ուղղություններ ունեցող գրանցված անկախ թերթերի քանակը հասնում է 150-ի: Պետական մենաշնորհ է տարածվում երկու կառավարական թերթերի և երկու հեռուստատեսային ծրագրերի վրա: «Մաքարթվելոս Ռեսպուբլիկա» (Վրաստանի Հանրապետություն) թերթը լույս է տեսնում շաբաթը 6 անգամ, 8000-10000 տպաքանակով, իսկ «Սվոբոդնայա Գրուզիա»-ն՝ շաբաթական 5 անգամ՝ 2000-3000 տպաքանակով: Այս թերթերը համարվում են պետական

"Sakartvelos Respublica" (The Republic of Georgia) is published 6 times a week and has a circulation of 8,000-10,000, and "Svobodnaya Gruzia"- 5 times a week claiming of the circulation of 2,000-3,000. These are official newspapers. The Channels 1 and 2 of the central TV as well as national radio reflect the views of the present authorities. The national channels are mainly involved in providing information and presenting the facts. The sessions in the Parliament of Georgia are broadcast live by the Georgian television. It is a tradition to broadcast every Monday the interview with the country's President on the national radio. The latter also broadcasts daily a half-an-hour news program in Georgian, which sums up the current events in Georgia.

News programs are also provided in Russian for the Russian-speaking community of Georgia through both television and radio broadcasting. Among the Russian-speaking people in Georgia the night program News (Vestnik) in Russian is very popular. It provides the general public with updated information.

The following are among the most prominent independent Georgian newspapers: "Rezonansi", "Shvi Dghe", "ALICE", "Skhali Taoba" and "Droni".

"Rezonansi" has a daily circulation of 5,000-7,000 copies,

"Skhali Taoba" has a daily circulation of 8,500-9,000 copies,

"ALICE"-4 times a week-circulation-2,000-3,000

"Droni"-3 times a week with circulation of 2,500-3,000 copies.

Recently the number of independent periodicals has increased, though they also face difficulties in taking root in the society. The periodicals "Sarke" (The Mirror) with the circulation of 1,000 copies, and "Politica" with the circulation of 700-800 copies deserve attention.

The State censorship does not threaten the print media any more. There is no monopoly on printing and disseminating newspapers.

պաշտոնաթերթեր: Կենտրոնական հեռուստատեսության առաջին, երկրորդ ծրագրերը և պետական ռադիոն նույնպես արտահայտում են ներկա իշխանությունների տեսակետը: Պետական ծրագրերը հիմնականում սահմանափակվում են գուտ տեղեկատվության հաղորդմամբ և փաստերի արձանագրմամբ: Վրաստանի հեռուստատեսության ուղիղ եթերով հեռարձակվում են Վրաստանի խորհրդարանի նիստերը: Ավանդաբար պետական ռադիոեթերով ամեն երկուշաբթի տեղի է ունենում երկրի նախագահի հարցազրույցը: Նույն ռադիոյի միջոցով հաղորդվում է ամենօրյա կեսժամյա լրատվական թողարկում վրացերեն լեզվով, որն ամփոփում են Վրաստանում ընթացող բոլոր իրադարձությունները:

Վրաստանում ապրող ռուսախոս բնակչության համար և՛ հեռուստատեսությամբ, և՛ ռադիոյով ռուսաց լեզվով տրվում են լրատվական թողարկումներ: Վրաստանի ռուսախոս բնակչության շրջանում մեծ ճանաչում է վայելում ռուսերեն լեզվով գիշերային «Լրագրեր» հաղորդումը, որն օպերատիվ տեղեկատվություն է տրամադրում ազգաբնակչությանը:

Վրացական անկախ թերթերի շարքում ուշագրավ են «Ռեզոնանսին», «Շվի դղեն», «ԱԼԻՍ»-ը, «Մխալի թառքան» «Գրոնին»: «Ռեզոնանսի»-օրաթերթ (տպաքանակը՝ 5000-7000), «Մխալի թառքան»-օրաթերթ (տպաքանակը՝ 8500-9000), «ԱԼԻՍ»-շաբաթական 4 անգամ (տպաքանակը՝ 2000-3000), «Գրոնի», շաբաթական 3 անգամ (տպաքանակը՝ 2500-3000):

Վերջերս աճել է անկախ ամսագրերի թիվը, թեև նրանք նույնպես դժվարությունների են հանդիպում հասարակության մեջ արմատավորվելու խնդրում: Ուշադրության է արժանի «Սարկե» ամսագիրը՝ 1000 տպաքանակով, «Պոլիտիկան»՝ 700-800 տպաքանակով:

Պետական գրաքննությունը թերթերի վրա այլևս չի տարածվում: Գոյություն չունի մենաշնորհ և՛ գրահրատարակչության, և՛ թերթերի տարածման միջոցների վրա:

Վրաստանում հրատարակվում են նաև ադրբեջաներեն և հայերեն թերթեր՝ «Վրաստան»-ը և «Գյուրջիստան»-ը, որոնք նախատեսված են Վրաստանի հայախոս և ադրբեջանախոս բնակչության համար: «Վրաստան» թերթը լույս է տեսնում շաբաթը մեկ անգամ, որը ֆինանսավորվում է պետբյուջեից (տպաքանակը՝ 3000):

Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և

The Azerbaijani and Armenian newspapers are also published in Georgia: the newspaper *Vrastan* and *Gurjistan* target the Armenian- and Azerbaijani-speaking people respectively. *Vrastan* (with circulation of 3,000) is a weekly funded from the national budget.

The English-language biweekly *Georgian Times* enjoys popularity among the diplomatic corps accredited to Georgia and the foreigners.

With regard to the independent television companies the following are noteworthy: The Voice of Georgia, Iberia, Evrika, The 9th Channel, Kavkasia. Some of them provide airtime for the Russian language and Armenian-language news broadcasting.

The following News Agencies also operate in our country: Iprinda, Sak Inform, B. S. Press, Prime News, Caucasus Press, Gea, IBERIA. The following foreign agencies have their offices in Georgia: Inter-News, Public Relation, Associated Press, BBC, Inter-Fax, Reuters, CNN, ITAR-TACC, etc.

One of the most typical and at the meantime controversial issues regarding the freedom of the mass media outlets still remains the publication of unverified materials about the person or organization, thus doing them moral damage. Georgian law entitles every citizen or organization demand from the editorial office refutation of the falsely imparted information. This refutation or appropriate response should be published in the newspaper under a special heading. If the citizen or the organization is not satisfied by the response, the issue may be resolved through litigation.

The above-mentioned issues are of importance particularly as regards the aspect of undermining the human dignity of the statesmen as well as presidents of other countries. We think the criticism over some domestic or foreign policy course or certain controversial issues of the country are acceptable. Nevertheless, when the figure of the president of the country - elected by the people and called upon to express their will - becomes the focal point, one ought to be more careful and treat the matter reason-

արտասահմանցիների շրջանում ճանաչված է անգլերեն լեզվով շաբաթական երկու անգամ լույս տեսնող *Georgian Times* թերթը:

Ինչ վերաբերում է անկախ հեռուստաընկերություններին, հիշատակության են արժանի «Վրաստանի ձայն»-ը, «Իբերիա»-ն, «Էվրիկա»-ն, «9-րդ ալիք»-ը, «Կավկասիա»-ն: Վերջինիս եթերային ժամերի մի մասը հատկացված է ռուսերեն և հայերեն լեզվով լրատվական թողարկումներին: Մեր երկրում գործում են նաև հետևյալ տեղեկատվական գործակալությունները. «Իփրինդա», «Սաք-Ինֆորմ», «Բի-Էս-արես», «Փրայմ նյուզ», «Caucasus Press», «Gea», «IBERIA»: Վրաստանում իրենց ներկայացուցչություններն ունեն հետևյալ արտասահմանյան գործակալությունները. Inter-News, Public Relation, Associated Press, BBC, InterFax, Reuters, CNN, ITAR-TACC և այլն:

Չանգվածային լրատվական միջոցների ազատության հատկանշական և միևնույն ժամանակ վիճելի հարցերից մեկը մամուլում անձի կամ կազմակերպության մասին վարկաբեկող, ստահող նյութերի հրապարակումն է: Վրաստանի օրենսդրության համաձայն, յուրաքանչյուր քաղաքացի կամ կազմակերպություն իրավունք ունի թերթի խմբագրությունից պահանջել տրված կեղծ տեղեկատվության հերքում: Պատասխանը կամ հերքումը հրապարակվում է թերթում՝ հատուկ խորագրի տակ: Եթե քաղաքացուն կամ կազմակերպությանը պատասխանը չի բավարարում, նա իրավունք ունի դիմել դատարան:

Տվյալ հարցը կարևոր է հատկապես օտարերկրյա պետական գործչի կամ օտարերկրյա պետության նախագահի արժանապատվությանը դիպչելու դեպքերում: Մեր կարծիքով, ընդունելի է այլ երկրների արտաքին և ներքին քաղաքականության կուրսի քննադատությունը, որոշ հարցերի շուրջ վիճաբանությունը, բայց երբ խոսքը պետության նախագահի մասին է, որն ընտրված է ժողովրդի կողմից և արտահայտում է նրա կամքը, պետք է ավելի զգուշավոր ու հավասարակշռված վերաբերմունք դրսևորվի:

Ոչ ոք իրավունք չունի քննադատել ու դատապարտել այլ երկրի նախագահին այն բանի համար, որ նա, ազգային պետականության շահերից ելնելով, այս կամ այն քաղաքական որոշումն է ընդունում: Դժվար է արգելել թերթերին քննադատական հրապարակումներ տպագրել, բայց և հարկավոր է տարրական էթիկայի նորմեր պաշտպանել, որպեսզի անձնական վիրավորանք չհասցվի երկրի նախագահի նկատմամբ, որը

ably. Nobody is entitled to level unjustified criticism or condemn the president of the country for the sole reason that he takes this or that decision protecting the interests of the State. Actually, one can hardly prevent the print media from focusing on critical issues. However, you should remain faithful to the generally accepted ethical norms to avoid personal maltreatment of the president who represents his country in the international political arena.

Today the conditions for the development of independent Georgian press are favorable. The social and economic problems that the country faces, still debatable points regarding the territorial integrity of the country provide plentiful material for the newspapers and are used by the opposition for the criticism of authorities. However, their self-confidence makes them overstep the limits. Some of the newspapers take it upon themselves to elaborate on domestic and foreign policies of the country and make unfavorable comments on the reality.

Unfortunately, the Georgian print and electronic media outlets are not in a position to operate freely throughout entire Georgia insofar as the issue of the territorial integrity of the country has not yet been resolved. More than 250,000 refugees are still deprived of their homes, and they may not voice their concerns through Abkhazian television. Even though the national Georgian TV provides some airtime for the discussion of the problems of the expelled Abkhazians and covers issues of the possible return of refugees to their settlements, that is merely a drop in the ocean. The ocean will be filled only with the return of refugees without any preconditions. The media will thus become an important factor contributing to the process of development of a democratic society.

պետությունը ներկայացնում է միջազգային քաղաքական ասպարեզում:

Մեր օրերում Վրաստանում ստեղծված են համապատասխան պայմաններ վրացական անկախ մամուլի զարգացման համար: Երկրի առջև ծառայած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, տարածքային ամբողջականության վերականգնման չլուծված հարցերը թերթերին առատ նյութ են մատակարարում, որն ընդդիմադիր մամուլը լավագույնս օգտագործում է իշխանությունների թերությունները նշելու համար: Նրանց չափից դուրս «ինքնավստահ արհեստավարժությունը և սենսացիաների ձգտումը» հաճախ անցնում է սահմանը: Որոշ թերթեր էլ իրենք են փորձում մշակել երկրի ներքին և արտաքին քաղաքականության ուղղությունը և ներկայացնում են իրականության աղավաղված պատկերը:

Ցավոք, վրացական մամուլն ու զանգվածային լրատվական այլ միջոցները դեռ ի գործու չեն ազատ գործել Վրաստանի ամբողջ տարածքում, քանի որ վերականգնված չէ երկրի տարածքային ամբողջականությունը: Ավելի քան 250 հազար փախստականներ դեռևս գրկված են հայրենի օջախի ջերմությունից և իրենց հոգսերի մասին չեն կարողանում արտահայտվել Աբխազիայի հեռուստատեսությամբ: Թեև Վրաստանի պետական հեռուստատեսությունը եթերային որոշ ժամեր է տրամադրում արտրված արխագների հիմնախնդիրներին, փախստականների՝ սեփական տուն հնարավոր վերադարձի լուսաբանմանը, բայց այդ ամենը սոսկ կաթիլ է ծովում, և փախստականների՝ առանց նախապայմանների վերադարձը սեփական բնակարանները կլցնի ծովն ու ժողովրդավարական պետության կառուցման գործընթացին նպաստող կարևոր գործոն կդառնա:

ԵՐԵՎԱՆ YEREVAN

Chairperson, Yerevan Press Club
Boris Navasardian

Երեւանի մամուլի ակումբի նախագահ
Բորիս Նավասարդյան



In order to analyze the currently existing situation in Armenia in terms of Article 19 of the Universal Declaration of Human Rights, it is first of all necessary to modernize the content of this document and to look at it in the perspective of the present-day developments.

Within the 50 years that followed the adoption of the Universal Declaration of Human Rights, the understanding of this document became more profound and clearer. This is particularly of Article 19. The documents adopted at different forums, seminars and conferences under the auspices of the United Nations and the UNESCO have designed a consistent conceptual framework for further progress of media.

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածի լույսի ներքո Հայաստանի իրավիճակը վերլուծելու համար անհրաժեշտ է նախ և առաջ այժմեականացնել այս փաստթղթի իմաստը, նրան նայել ժամանակակից իրողությունների տեսանկյունից:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումից հետո՝ անցած 50-ից ավելի տարիների ընթացքում, այս փաստաթղթի ոգու ընկալումն էականորեն խորացել և որոշակիացել է: Մա մասնավորապես նաև 19-րդ հոդվածին է վերաբերում: ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի տարբեր համաժողովների, սրանց հովանու ներքո անցկացված սեմինարների, կոնֆերանսների ժամանակ ընդունված փաստաթղթերը ներդաշնակ հայեցակարգ են ձևավորել, թե ինչ ուղիով պիտի զարգանան զանգվածային լրատվամիջոցները:

19-րդ հոդվածի հիմնարար սկզբունքներն են. «մարդը տեղեկատվություն ստանալու իրավունք ունի» եւ «տեղեկատվությունը պետք է ծառայի մարդուն»: Լրատվամիջոցների նկատմամբ կիրառելիս սա նշանակում է, որ լրագրողը՝ որպես հասարակության կողմից տեղեկություններ որոնելու, ստանալու եւ տարածելու կոչված սուբյեկտ, պետք է հնարավորություն ունենա անարգել կատարելու իր մասնագիտական պարտքը:

Այս իմաստով «Մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների մասին» ՀՀ գործող օրենքը հավաստում է լրատվամիջոցների՝ պետական մարմիններից, հասարակական և հասարակական-քաղաքական կազմակերպություններից տեղեկություններ ստանալու իրավունքը: Ետխորհրդային Հայաստանում այս դրույթն ընդհանուր առմամբ կիրառվում է՝ չնայած առանձին անցանկալի միջադեպերի: Կարելի է



The fundamental principles of Article 19 are, everyone has the right to receive information, and the information should serve everyone. Applied to media, it means that a journalist as a person commissioned by the society to seek, receive and impart information should have an opportunity to carry on his professional activities without undue interference.

In this respect the currently active Republic of Armenia Law on Press and Other Media safeguards the right of the media to receive information from State bodies, from civic and political organizations. This provision is in general complied with in post-Soviet Armenia, despite some isolated unpleasant incidents. It can be safely assumed that in recent years journalists were more knowledgeable and informed, which creates better conditions for adequately meeting the legitimate demands of the general public to be properly informed.

So far the tendency has been strengthened primarily due to media people. The State authorities have not made any concerted efforts. At best, they do not stand in the journalists' way.

In the worst case, however, we witness the attempts to restrict the search for information. Thus, the Draft law on Mass Media elaborated by the Ministry of Justice of the Republic of Armenia includes the provision that prohibits civil servants, except the press service employees, to provide information to journalists. Due to joint effort of the journalist community, the draft law was eventually discarded. However, the idea that had been behind the provision was made use of on more than one occasion.

To cite just one example. In September 1998 the employees of the Kotayk district Traffic Police Department rudely refused to provide information to the crew from the Hrazdan TV. The department alleged that there is an unspecified order issued by the Ministry of Interior and National Security, according to which any contacts of the personnel with journalists have to get prior authorization from the Press and Information Department of the Ministry.

Another widespread strategy of restricting access of journalists to information and practiced by some ministries and departments consists in demanding payment for information. One such episode occurred in October of 1997 when an Ayzhm journalist visited the Statistics, the State Register and Analysis Depart-

արձանագրել, որ լրագրողների իրազեկությունը վերջին տարիներին կայուն կերպով աճում է, ինչն էլ որոշակի նախադրյալներ է ստեղծում հասարակության տեղեկատվություն ստանալու իրավունքն առավելագույնս բավարարելու համար, թեև սա տեղի է ունենում գլխավորապես հենց մամուլի ներկայացուցիչների մասնագիտական ջանքերի շնորհիվ: Պետական մարմիններն այս առումով ոչ մի առաջադիմական քայլ չեն անում, լավագույն դեպքում չեն խոչընդոտում լրագրողների փնտրտուքին:

Վատագույն դեպքում մենք ականատես ենք դառնում այդ փնտրտուքը սահմանափակելու փորձերին:

Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «Չանգվածային լրատվամիջոցների մասին» օրինագծում, մամուլի ծառայությունների աշխատակիցներից բացի, պետական մյուս բոլոր պաշտոնյաների կողմից լրագրողներին տեղեկություններ տալու արգելք էր նախատեսվում: Լրագրողական հանրության ջանքերով այս օրինագիծը հանվեց քննարկումից, բայց նրանում եղած գաղափարը մեկ անգամ չէ, որ կիրառվել է գործնականում:

Մասնավորապես 1998 թվականի սեպտեմբերին պետավտոտեսչության Կոտայքի մարզային բաժանմունքի աշխատակիցները կոպիտ կերպով մերժեցին «Հրագրան» հեռուստաընկերության նկարահանող խմբին տեղեկություններ տրամադրել՝ վկայակոչելով ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության ինչ-որ հրաման, ըստ որի՝ լրագրողների հետ շփվելու համար աշխատակիցներին անհրաժեշտ էր ՆԳ և ԱԱՆ տեղեկատվության և մամուլի վարչության համաձայնությունը:

Լրագրողների համար տեղեկությունների մատչելիության սահմանափակման մյուս բնորոշ ձևը, որ կիրառում են մի շարք նախարարություններ և գերատեսչություններ, տեղեկությունների համար վճար պահանջելն է: Նման միջադեպ է եղել մասնավորապես 1997թ. հոկտեմբերին «Այժմ» շաբաթաթերթի և ՀՀ վիճակագրության, պետքեզիստրի և վերլուծության վարչության միջև: Այն ժամանակ վարչության պետնախարար Էդուարդ Աղաջանովն ասել է թղթակցին, որ իր հիմնարկի աշխատակիցներն ընդամենը 12 հազար դրամ աշխատավարձ են ստանում և պարտավոր չեն անվճար պատասխանել հարցերին:

Տեղեկություններ որոնելու եւ ստանալու ազատությունն անիմաստ է առանց տարածելու ազատության: Այս առումով 19-րդ հոդվածի ոգուն համապատասխանող առանցքային սկզբունքներն են գրաքննության եւ արտոնագրման բացառումը, լրագրողների անվտանգության ապահովումը:

ment of the Republic of Armenia. The then State Minister in charge of the Department Edward Aghajanov told the journalist that the Department employees' salary was merely 12,000 drams, and that they were not required by law to answer the questions free of charge.

The freedom to seek and receive information does not make much sense without the freedom of imparting this information. In this respect the ban on censorship and licensing, the protection of journalists' personal safety are the key principles that are in strict adherence to the spirit of Article 19.

The above-mentioned Law on the Press declares that mass media in the Republic of Armenia is free and may not be subjected to censorship. In reality, however, it is only the pre-publication control over the content that has been discarded in post-soviet Armenia. The censorship has many aspects. In 1990 in order to prevent the dissemination of information that they were not particularly happy about, the new, "democratic" Armenian authorities confiscated the entire edition of the Avangard weekly. In the years that followed, on more occasions than just one the problems were created for free and timely circulation of the newspapers (Ayzhm, Haykakan Zhamanak). In August of 1991 at the time of the aborted coup d'état staged in Moscow the publication of all the newspapers that were not controlled by the State was banned in Armenia.

These incidents may seem trivial and belonging to history. But it is vital to bear in mind that neither at that time nor the new Constitution of the Republic of Armenia contained a provision that could expressly prohibit any form of censorship.

Neither is there in the supreme law of the land a provision that requires mandatory licensing of the activities of mass media and of journalists (it should not be confused with the licensing of the radio frequencies). Anyway, even in future we are going to be exposed to the danger of bureaucratic mechanism envisioned by the currently active law On the Press when applying for the registration of a media outlet (which in reality amounts to licensing) unless that provision is repealed. This mechanism may be used to delay the start of operation of a newly established media outlet up to a year and a half.

The rationale behind the right of authoriza-

վերոհիշյալ «Մամուլի ... մասին» օրենքը հռչակում է, որ Հայաստանի Հանրապետության զանգվածային լրատվության միջոցներն ազատ են և ենթակա չեն գրաքննության: Իրականում ետխորհրդային Հայաստանում վերացել է հրատարակումների բովանդակության նախնական վերահսկումը միայն, մինչդեռ գրաքննությունը բազմադեմ երեւոյթ է: 1990-ին Հայաստանի նոր ժողովրդավարական իշխանությունները, խոչընդոտելու համար անցանկալի տեղեկատվության տարածումը, շրջանառությունից հանել էին «Ավանգարդ» թերթի տպաքանակը: Հետագայում նույն պատճառով խոչընդոտում էին այս կամ այն թերթի համարների ժամանակին տարածումը («Իրավունք», «Այժմ», «Հայկական ժամանակ»): 1991-ին՝ Մոսկվայի օգոստոսյան խռովության օրերին, Հայաստանում արգելվեց պետության կողմից չվերահսկվող բոլոր թերթերի թողարկումը:

Մեր մասշտաբներով այսքան հին պատմությանն անդրադառնալն անհրաժեշտ է որպես հիշեցում այն մասին, որ ո՛չ այն ժամանակ, ո՛չ էլ այսօր գրաքննության ցանկացած ձեւ արգելելու մասին դրույթը ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված չէ:

Հիմնական օրենքում արգելք չկա նաեւ լրատվամիջոցների եւ լրագրողների գործունեության արտոնագրման մասին (պետք չէ շփոթել ռադիոհաճախականություններից օգտվելու համար արտոնագրման հետ): Հետեւաբար մենք ապագայում էլ զանգվածային լրատվամիջոցների գրանցման (իրականում՝ արտոնագրման) խնդրում «Մամուլի ... մասին» գործող օրենքով նախատեսված բյուրոկրատական մեխանիզմի վտանգի առաջ ենք կանգնած: Այս մեխանիզմը հնարավորություն է տալիս նորահայտ լրատվամիջոցի մուտքը ձգձգել մինչեւ մեկուկես տարի...

Արդարադատության նախարարությանը «թույլատրելու իրավունք» տվող օրենքի տրամաբանությունը իրականում զուտ արտոնագրման տրամաբանությունն է. այն, ինչ տրվում է (գրանցումը), կարող է նաեւ ետ վերցվել (ժամանակավոր կամ ընդմիջ): Դատարանները Հայաստանում կարող են կասեցնել կամ փակել լրատվամիջոցները: Հիշենք, թե ինչպես 1996 թվականի մարտին երեք ամսով կասեցվեց «Լրագիր» օրաթերթի հրատարակումը: Այսինքն՝ պատժվողների թվում, չգիտես ինչու, հայտնվում է ընթերցողը, որին զգալի ժամանակով զրկում են լրատվության ծանոթ աղբյուրից: Մինչդեռ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածի ոգուն ավելի համապատասխան կլիներ լրատվամիջոցների կամ լրագրողների կողմից օրենքի խախտման համար պրոգրեսիվ տուգանքների

tion given by the law to the Ministry of Justice essentially boils down to the authority to licensing since what is granted (in this case the registration), may be taken away (temporarily or forever). The courts of law in Armenia are in a position to suspend or shut down the mass media outlets. Let me remind you the Lragir debacle of March 1996 when the publication of the daily was suspended for three months. In a case like that a reader is also punished for reasons not altogether clear, since he is deprived for a considerable period of time of the source of information that he came to trust. It would better fit the spirit of Article 19 of the Universal Declaration of Human Rights to impose progressively increasing fines for media or journalists for violations of the law.

The continuation of these insidious practices of granting or denying permits is a flagrant violation of law by the authorities. In the post-Soviet history of the Armenian press the worst ignominy took place in late 1994 when the Dashnak media and some media outlets that were sympathizing with Dashnaks were banned and later, on another occasion, when the statutes of the Azg daily were changed by the Ministry of Justice without considering the opinion of the majority of the founders. In the second case the grievous wrong was redressed a month later, whereas in the first case it took over three years. In both cases the arbitrariness was brought forth by political motives. The actions of the authorities lacked the legitimacy and exploited the situation of insufficient constitutional guarantees for press freedom.

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալ իր կարծիքներին:
2. Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով, գեղարվեստական կամ այլ ձևով, սեփական ընտրությամբ ամեն տեսակի տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը:
3. Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավունքներից օգտվելը որոշակի պարտավորություններ և պատասխանատվություն է թելադրում: Հետևաբար, այն ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է սահմանվեն օրենքով և լինեն պարտադիր՝
 - ա) այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար,
 - բ) պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պաշտպանության համար:

Հատվածներ միջազգային փաստաթղթերից եւ Հայաստանի հանրապետության օրենսդրությունից խոսքի, արտահայտվելու եւ մամուլի ազատության մասին

Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms (European Convention on Human Rights)

Article 10

1. Everyone has the rights to freedom of expression. This right shall include freedom to hold opinions and to receive, and impart information and ideas without interference by public authority and regardless of frontiers. This Article shall not prevent States from requiring the licensing of broadcasting, television or cinema enterprises.

2. The exercise of these freedoms, since it carries with it duties and responsibilities, may be subject to such formalities, conditions, restrictions or penalties as are prescribed by law and are necessary in a democratic society, in the interests of national security, territorial integrity or public safety, for the prevention of disorder or crime, for the protection of health or morals, for the protection of the reputation or rights of others, for preventing the disclosure of information received in confidence or for maintaining the authority and impartiality of the judiciary.

Մարդու իրավունքների պաշտպանության եւ հիմնական ազատությունների մասին եվրոկոնվենցիա

Հ ն դ ա ծ 10

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք: Այս իրավունքն ընդգրկում է համոզմունքներ ունենալը և հասարակական մարմնի կողմից անարգել տեղեկատվություն և գաղափարներ ստանալն ու տարածելը՝ անկախ պետական սահմաններից: Սույն հոդվածը չպետք է արգելի պետություններին՝ պահանջելու հեռարձակման, հեռուստատեսության կամ կինոյի ձեռնարկությունների արտոնագրում:

2. Այս ազատությունները՝ որոշակի պարտականություններով և պատասխանատվությամբ, կարող են այնպիսի ձևական փոփոխությունների, պայմանների, սահմանափակումների կամ տույժերի ենթարկվել, որպիսիք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության համար՝ ելնելով պետական անձեռնմխելիության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անվտանգության պաշտպանության, խռովություններից կամ հանցագործություններից, առողջապահության և բարոյականության, ուրիշների իրավունքների և հեղինակության պաշտպանության, գաղտնի կերպով ստացված տեղեկատվության հայտնաբերման և դատավորների իշխանության կամ անաշտության պաշտպանության շահերից:

Հատվածներ միջազգային փաստաթղթերից եւ Հայաստանի հանրապետության օրենսդրությունից խոսքի, արտահայտվելու եւ մամուլի ազատության մասին

International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination

Article 5

In compliance with the fundamental obligation laid down in article 2 of this Convention, States Parties undertake to prohibit and to eliminate racial discrimination in all its forms and to guarantee the right of everyone, without distinction as to race, colour, or national or ethnic origin, to equality before the law, notably in the enjoyment of the following rights:

- (d) Other civil rights, in particular:
 - (viii) The right to freedom of opinion and expression...

Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձևերի դեմ

Հոդված 5

Սույն կոնվենցիայի 2-րդ հոդվածում շարադրված հիմնական պարտականությունների համաձայն,

մասնակից պետությունները պարտավորվում են արգելել եւ վերացնել ռասայական խտրականությունը՝ իր բոլոր ձևերով եւ ապահովել ցանկացած անձի իրավահավասարությունը օրենքի առջեւ՝ անկախ ռասայի, գույնի, ազգային կամ էթնիկական տարբերություններից, հատկապես հետեւյալ իրավունքները իրականացնելիս.

- (դ) այլ քաղաքական իրավունքներ, մասնավորապես.
 - (viii) համոզմունքների ու արտահայտվելու ազատության իրավունք...

Հատվածներ միջազգային փաստաթղթերից եւ Հայաստանի հանրապետության օրենսդրությունից խոսքի, արտահայտվելու եւ մամուլի ազատության մասին

Charter of Paris for a New Europe

...We affirm that, without discrimination,

every individual has the right to freedom of thought, conscience and religion or belief,

freedom of expression...

...We stress that free movement and contacts among our citizens as well as the free flow of information and ideas are crucial for the maintenance and development of free societies and flourishing cultures...

Նոր եվրոպայի փարիզյան խարտիա

...Մենք հաստատում ենք, որ յուրաքանչյուր ոք,

առանց խտրականության, ազատ մտքի, խղճի, կրոնի, դավանանքի

ու ազատ արտահայտվելու իրավունք ունի...

...Մենք շեշտում ենք, որ մեր քաղաքացիների միջև ազատ տեղաշարժն ու շփումները, ինչպես նաև տեղեկատվության ու գաղափարների ազատ հոսքը կարևոր են ազատ հասարակության և բարգավաճող մշակույթների պահպանման ու զարգացման համար...

The Constitution of the Republic of Armenia

Article 20

Everyone is entitled to defend his or her private and family life from unlawful interference and defend his or her honor and reputation from attack.

The gathering, maintenance, use and dissemination of illegally obtained information about a person's private and family life are prohibited.

Everyone has the right to confidentiality in his or her correspondence, telephone conversations, mail, telegraph and other communications, which may only be restricted by court order.

Article 24

Everyone is entitled to assert his or her opinion. No one shall be forced to retract or change his or her opinion. Everyone is entitled to freedom of speech, including the freedom to seek, receive and disseminate information and ideas through any medium of information, regardless of state borders.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Հոդված 20

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքը անօրինական միջամտությունից, իր պատիվը, բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունք:

Արգելվում է անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը, տարածելը:

Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ:

Հոդված 24

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը տեղեկատվական ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Հատվածներ միջազգային փաստաթղթերից եւ Հայաստանի հանրապետության օրենսդրությունից խոսքի, արտահայտվելու եւ մասնուլի ազատության մասին

**Excerpts from International Instruments and Armenian National Legislation on
Freedom of Speech, of Expression and of the Press**

**A
P
P
E
N
D
I
X

1**

**The Law on Press and Other Media Outlets of the Republic of
Armenia**

**Article 2
Freedom of Press and Other Media Outlets**

Press and other media outlets enjoy freedom in the Republic of Armenia:
They are not subject to censorship. Citizens of the Republic of Armenia are entitled to express their views and opinions in relation to any issue of public life through press and other media outlets. They are also entitled to get recent and precise information. Maintenance of press and other media outlets monopoly should be strongly prohibited in the Republic of Armenia.

**Article 4
The right to receive information**

Press and other media outlets are entitled to receive information from any state authority, public or public and political organizations, heads of these organizations if the information required does not contradict the Charter of that organization and complies with the requirements of Article 6 of this law.

Press and other media outlets may therefore, receive information (news) from individuals.

**Հայաստանի Հանրապետության օրենքը
մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին**

Հոդված 2.

Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների ազատությունը

Հայաստանի Հանրապետությունում մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները ազատ են, գրաքննության չեն ենթարկվում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ունեն մամուլով և զանգվածային լրատվության մյուս միջոցներով իրենց տեսակետները, կարծիքները արտահայտելու, հասարակական կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատապ և հավաստի լրատվություն ստանալու իրավունք:

Հայաստանի Հանրապետությունում մամուլի և զանգվածային լրատվության միջոցների որևէ տեսակի մենաշնորհի չի թույլատրվում:

Հոդված 4.

Տեղեկություններ ստանալու իրավունքը

Մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները իրավունք ունեն ցանկացած պետական մարմիններից, հասարակական, հասարակական-քաղաքական կազմակերպություններից, դրանց ղեկավարներից ստանալու տեղեկություններ, եթե պահանջված լրատվության տրամադրումը չի հակասում տվյալ կազմակերպության կանոնադրությանը և սույն օրենքի 6 հոդվածի պահանջներին:

Մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները կարող են լուրեր ստանալ նաև անհատ քաղաքացիներից:

**Հ
Ա
Կ
Ե
Լ
Կ
Ա
Օ

1**

Հատվածներ միջազգային փաստաթղթերից եւ Հայաստանի հանրապետության օրենսդրությունից խոսքի, արտահայտվելու եւ մամուլի ազատության մասին



The Law of the Republic of Armenia
on TV and Radio Broadcasting

Article 4

The freedom of television and radio broadcasting

The censorship on television and radio broadcasting is prohibited in the Republic of Armenia.

The right to free choice, production and dissemination of TV castings is ensured in the Republic of Armenia.

The consumers enjoy the right to freely receive TV castings and additional information, including through satellite, closed circuit TV and wire networks, either free of charge or payable, both by decoding means and open TV and radio broadcasting networks.

Information is accessible to all the consumers, if, neither, there is a restriction imposed by the operator on the access of information in another way, nor the information was announced to have unrestricted access.

In the event, when the operator carries out broadcasting and TV castings for the consumers unlimited in number, provided, free of charge provision of information, then the consumer is entitled to enjoy such service without any compensation and informing the operator.

In other cases, the cost on the service rendered by the operator and the terms are defined pursuant to contractual order.

State authorities provide the necessary conditions and take appropriate measures for the ensured receipt of TV and radio broadcastings by organizations throughout the Republic of Armenia. It is prohibited to interrupt the online programs with that of other broadcasting companies.

The organization exercising close circuit, wire or not airtime broadcastings in the areas where the broadcasting zones are merged, should not limit the right of the TV viewers and radio auditors to receive TV and radio broadcastings.

Նախագիծ

Հայաստանի հանրապետության օրենքը
հեռուստատեսության եւ ռադիոյի մասին

Հոդված 4.

Հեռուստահաղորդումների ազատությունը

Հայաստանի Հանրապետությունում արգելվում է հեռուստահաղորդումների գրաքննությունը:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է հեռուստահաղորդումների ազատ ընտրության, արտադրության և տարածման իրավունքը:

Սպառողներն իրավունք ունեն ազատ ընդունել հեռուստահաղորդումներ և լրացուցիչ տեղեկատվություն, այդ թվում արբանյակային, կաբելային կամ լարային ցանցերով՝ անվճար կամ վճարովի, ինչպես ապակողմնավորող միջոցներով, այնպես էլ հեռուստառադիոհեռարձակման բաց ցանցերով:

Տեղեկատվությունը հասանելի է բոլոր սպառողներին, եթե օպերատորի կողմից այլ ճանապարհով տեղեկատվության հասանելիության նկատմամբ որևէ սահմանափակում չի դրվել, կամ նրա կողմից տվյալ տեղեկատվությունը սահմանափակ հասանելի չի հայտարարվել:

Այն դեպքում, երբ օպերատորը հեռարձակումը և հեռահաղորդակցությունը իրականացնում է անսահմանափակ թվով սպառողների համար և անվճար տեղեկատվություն տալու պայմանով, սպա սպառողն իրավունք ունի օգտվել օպերատորի նման ծառայությունից՝ անվարձահատույց և առանց օպերատորին տեղեկացնելու:

Այլ դեպքերում օպերատորի կողմից մատուցվելիք ծառայության գինը և պայմանները սահմանվում են պայմանագրային կարգով:

Պետական մարմիններն անհրաժեշտ պայմաններ են ստեղծում և միջոցներ ձեռնարկում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերությունների հաղորդումների երաշխավորված ընդունման համար: Արգելվում է սխալող ծրագրերն ընդհատել այլ հեռարձակող կազմակերպությունների ծրագրով:

Կաբելային, լարային կամ այլ ոչ եթերային հեռուստառադիոհեռարձակում իրականացնող կազմակերպությունը, համապատասխան սփռման գոտիների համընկնման շրջաններում, չպետք է սահմանափակի հեռուստառադիոընկերի և ռադիոընկերի՝ հեռուստառադիոծրագրեր ընդունելու իրավունքը:

Հատվածներ միջազգային փաստաթղթերից եւ Հայաստանի հանրապետության օրենսդրությունից խոսքի, արտահայտվելու եւ մասնուլի ազատության մասին



Excerpts from International Instruments and Armenian National Legislation on
Freedom of Speech, of Expression and of the Press

A
P
P
E
N
D
I
X
1

Draft

The Law of the Republic of Armenia "On Media"

CHAPTER I

Article 1.

Freedom of the Press

1. Media outlets are free and independent and serve the free democratic order in the Republic of Armenia.

Freedom of speech can be restricted only by the Constitution and within Constitutional frames - by the laws of the Republic of Armenia.

2. Pursuit and acquisition of information, its provision and dissemination, in the Republic of Armenia and outside its borders are not subject to restrictions.

3. No special certification is required for involvement in activities associated with media.

4. The citizens in the Republic of Armenia are guaranteed access to all media information and materials.

5. Any monopoly over publication and dissemination of media is forbidden in the Republic of Armenia.

6. Censorship, as well as impeding dissemination of information, articles and abstracts is forbidden.

7. The Legislation of the Republic of Armenia on media outlets consists of the present Law, and other legislative acts issued in accordance with it. Media are subject to the acting laws on the territory of the Republic of Armenia. In case an international agreement concluded with the Republic of Armenia has other than this Law provisions for the organization and activities of a media outlet, then international treaties take precedence over this Law.

Նախագիծ

Հայաստանի հանրապետության օրենքը
Ձանգվածային լրատվության միջոցների մասին

ԳԼՈՒԽ I

Հոդված 1.

Ձանգվածային լրատվության միջոցների ազատությունը

1. Հայաստանի Հանրապետությունում զանգվածային լրատվության միջոցներն ազատ են եւ ծառայում են ազատ, ժողովրդավարական իրավակարգին:

Մամուլի ազատությունը կարող է սահմանափակվել միայն Սահմանադրությամբ եւ դրա շրջանակներում՝ ՀՀ օրենքներով:

2. Տեղեկությունների որոնումը, ստացումը, թողարկումն ու տարածումը Հայաստանի Հանրապետությունում եւ նրա սահմաններից դուրս, ենթակա չեն սահմանափակումների:

3. Ձանգվածային լրատվության միջոցների բնագավառին առնչվող գործունեությամբ զբաղվելու որեւէ հատուկ արտոնագրում չի պահանջվում:

4. Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների համար երաշխավորվում է զանգվածային լրատվության միջոցների բոլոր տեղեկություններն ու նյութերը ստանալու ազատ հնարավորություն:

5. Հայաստանի Հանրապետությունում զանգվածային լրատվության միջոցների հրատարակության եւ դրանց տարածման ցանկացած մենաշնորհն արգելվում է:

6. Գրքերությունը, ինչպես նաեւ տեղեկությունների, նյութերի, նրանց առանձին հատվածների տարածումը խոչընդոտելն արգելվում է:

7. Ձանգվածային լրատվության միջոցների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կազմված է սույն օրենքից եւ դրա հիման վրա ընդունվող այլ օրենսդրական ակտերից: Մամուլը ենթարկվում է ՀՀ տարածքում գործող օրենքներին: Եթե ՀՀ կնքած միջազգային պայմանագրերով զանգվածային լրատվության միջոցների կազմակերպման եւ գործունեության համար նախատեսվում են այլ նորմեր, քան սույն օրենքով սահմանվածները, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Հ
Ա
Կ
Ե
Լ
Կ
Ա
Օ
1

Հատվածներ միջազգային փաստաթղթերից եւ Հայաստանի հանրապետության օրենսդրությունից խոսքի, արտահայտվելու եւ մամուլի ազատության մասին



Selected List of International Organizations Dealing with
Issues of Freedom of Speech and Rights of Journalists

A
P
P
E
N
D
I
X
2

International Federation of Journalists

International Federation of Journalists is the world’s largest organization of journalists. First established in 1926, it was re-launched in 1946 and again, in its present form, in 1952. Today the Federation represents around 450,000 members in 100 countries.

The IFJ promotes human rights, democracy and pluralism.

The IFJ condemns the use of media as propaganda to promote intolerance and social conflict.

The IFJ is recognized as the organization, which speaks for journalists at international level, notably within the United Nations system, and within the international trade union movement.

The IFJ supports the journalists and their unions wherever they are fighting subject to oppression and whenever they are fighting for their industrial and professional rights. It is established to provide humanitarian aid for journalists who are the victims of violence.

Լրագրողների միջազգային ֆեդերացիա

Լրագրողների միջազգային ֆեդերացիան (ԼՄՖ) լրագրողների խոշորագույն կազմակերպությունն է աշխարհում: Առաջին անգամ հիմնադրված լինելով 1926թ.՝ այն վերսկսել է իր գործունեությունը 1946թ. և վերջապես իր այժմյան տեսքով սկսել է գործել 1952թ-ից: Այսօր Ֆեդերացիան ունի մոտ 450 հազար ներկայացուցիչ 100 երկրներում: ԼՄՖ-ն նպաստում է մարդու իրավունքներին, ժողովրդավարությանը և բազմակարծությանը: ԼՄՖ-ն դատապարտում է այն լրատվությունը, որը քարոզում է անհանդուրժողականություն և սոցիալական հակամարտություն: ԼՄՖ-ն ճանաչված է իբրև մի կազմակերպություն, որն իր ձայնն է հղում լրագրողներին միջազգային մակարդակով, մասնավորապես ՄԱԿ-ի համակարգի և միջազգային արհմիությունների շարժման շրջանակներում: ԼՄՖ-ն օժանդակում է լրագրողներին և նրանց միություններին այն վայրերում, ուր նրանք պայքարում են ճնշումների պայմաններում և այն դեպքում, երբ նրանք պայքարում են իրենց արդյունաբերական և մասնագիտական իրավունքների համար: Այն հիմնադրվել է բռնության գոհ դարձած լրագրողներին մարդասիրական օգնություն տրամադրելու նպատակով:

Յ
Ա
Վ
Ե
Լ
Վ
Ա
Ծ
2

Խոսքի ազատության եւ լրագրողների իրավունքների հարցերով զբաղվող
միջազգային կազմակերպությունների համառոտ ցանկ



Selected List of International Organizations Dealing with Issues of Freedom of Speech and Rights of Journalists

A P P E N D I X 2

Freedom of Expression Institute

The **Freedom of Expression Institute (FXI)** was formed in January 1994 from a merger of two organizations involved in campaigning for freedom of expression during the apartheid years, namely the **Campaign for Open Media (COM)** and the **Anti-Censorship Action Group (ACAG)**. Recently the **FXI** also established the Media Defence Fund to sponsor freedom of expression court cases on behalf of media who are not able to afford the legal costs.

- The first aim of the **FXI** is to ensure the repeal or amendment of laws inhibiting freedom of expression and association.
- The second aim of the **FXI** is to ensure that the government does not attempt to enact new legislation to curb freedom of expression.
- The third aim of the **FXI** is to ensure that those whose right to communicate is interfered will have access to the courts.
- The fourth aim of the **FXI** is to educate and mobilize the public to resist any encroachments on their rights to receive and impart information, ideas and opinion.
- The fifth aim is to campaign for freedom of information on a grassroots level, rather than simply focusing attention on the powers of state. Much censorship is informal, and the **FXI** and concerned groups need to develop strategies to counter it.
- The sixth aim of the **FXI** is to express solidarity with, and protect victims of censorship.

Արտահայտվելու ազատության ինստիտուտը

Արտահայտվելու ազատության ինստիտուտը (ԱԱԻ) ձևավորվել է 1994թ. հունվարին ռասայական խտրականության տարիներին արտահայտվելու ազատությանն ուղղված քարոզարշավի գործունեություն ծավալող երկու կազմակերպությունների միաձուլումից, որոնք էին Բաց լրատվության քարոզարշավը (ԲԼԶ) և Հակազրաքննական գործողություններ իրականացնող խումբը (ՀԳԽ): Վերջերս ԱԱԻ-ին հիմնել է նաև Լրատվության պաշտպանության հիմնադրամ, որպեսզի լրատվության անունից հովանավորի արտահայտվելու ազատության խախտումների դատական գործերը նրանց համար, ովքեր ի վիճակի չեն վճարել դատական ծախսերի համար: ԱԱԻ-ի նպատակն է.

- Չեղյալ հայտարարել կամ լրացումներ կատարել այն օրենքներում, որոնք խոչընդոտում են արտահայտվելու և հավաքների ազատությունը:
- Երաշխավորել արտահայտվելու ազատությունը ոտնահարող նոր օրենսդրություն հաստատելու կառավարության փորձերի կանխումը:
- Երաշխավորել հաղորդակցվելու իրավունքը ոտնահարվածների դատարան դիմելը:
- Կրթել և համախմբել հասարակությանն այնպես, որ նա ի վիճակի լինի պայքարել տեղեկություններ, գաղափարներ և կարծիքներ ստանալու և տարածելու իր իրավունքների ոտնձգությունների դեմ:
- Տեղեկատվության ազատության քարոզարշավ կազմակերպել շատ ավելի լայն մակարդակով, քան ուշադրությունը զուտ պետական իշխանությունների վրա կենտրոնացնել է: Շատ դեպքերում գրաքննությունը ոչ պաշտոնական բնույթ է կրում, և՛ ԱԱԻ-ին, և՛ շահագրգռված խմբերին անհրաժեշտ է դրան դիմադրավելու ռազմավարություն մշակել:
- Համախմբել և պաշտպանել գրաքննության զոհերին:

Հ
Ա
Կ
Ե
Լ
Վ
Ա
Օ
2

Խոսքի ազատության եւ լրագրողների իրավունքների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների համառոտ ցանկ



Selected List of International Organizations Dealing with Issues of Freedom of Speech and Rights of Journalists

Reporters Sans Frontières

Reporters Sans Frontières is a Paris-based independent organization that defends the freedom to inform and to be informed. It has branches or members in more than 20 countries. Reporters Sans Frontières

1 - Reporters works to help imprisoned journalists. Press campaigns are organised and protest letters sent to the governments responsible. Reporters Sans Frontières also provides lawyers for journalists in prison, pays bail and fines, and supports needy families.

2 - publicises violations of press freedom in a monthly newsletter, an annual report and other reports on the state of press freedom in particular countries or regions of the world.

3 - helps media that are victims of repression. It provides material assistance to independent publications and broadcasters facing government repression, violence from armed groups or open conflict.

4 - encourages debate on problems connected with press freedom. It regularly organises conferences and seminars on journalists' work, covering professional ethics, developments in technology, relations with the legal authorities and the economic background.

5 - works alongside major international organisations, and has consultative status with the Council of Europe, the United Nations Commission on Human Rights and UNESCO. It also has observer status with the African Commission on Human and Peoples' Rights. Reporters Sans Frontières is recognised by the French government as an organisation in the public interest.

Լրագրողներ առանց սահմանի

Փարիզում տեղակայված *Լրագրողներ առանց սահմանի* կազմակերպությունն անկախ է, որը հանդես է գալիս տեղեկացնելու և տեղեկացվելու ազատության պաշտպանի դերում: Այն ունի մասնաճյուղեր և անդամներ 20-ից ավելի երկրներում: *Լրագրողներ առանց սահմանի* կազմակերպությունը՝

1 -աշխատում է օգնություն ցույց տալ բանտարկված լրագրողներին: Կազմակերպվում են մամուլ քարոզարշավներ, և բողոքի նամակներ են հղվում նրանց համար պատասխանատվություն կրող կառավարություններին: *Լրագրողներ առանց սահմանի* կազմակերպությունը նաև ապահովում է բանտարկված լրագրողներին փաստաբաններով, վճարում գրավներ և տուգանքներ, ինչպես նաև օգնում է կարիքավոր ընտանիքներին:

2 -աշխարհի առանձին երկրներում և տարածաշրջաններում մամուլի ազատության վիճակի վերաբերյալ ամենամսյա բյուլետենի, տարեկան զեկույցի և այլ հաղորդագրությունների միջոցով հրապարակում է մամուլի ազատության խախտումները:

3 -օգնում է ճնշման գոհ դարձած լրատվական միջոցներին: Այն նյութական օգնություն է տրամադրում կառավարության, զինված խմբերի կողմից կամ բաց հակամարտությանը ճնշման ենթարկված անկախ հրատարակություններին և հեռարձակողներին:

4 -խրախուսում է մամուլի ազատությանն առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ բանավեճը: Կանոնավոր կերպով կազմակերպում է լրագրողների աշխատանքի վերաբերյալ կոնֆերանսներ և սեմինարներ, որոնք արժարժում են նրանց պրոֆեսիոնալ բարոյագիտությանը, տեխնոլոգիայի բնագավառի զարգացումներին, իրավական մարմինների հետ նրանց հարաբերություններին վերաբերող և տնտեսական բնույթի հարցեր:

5 -աշխատում է միջազգային այլ հեղինակավոր կազմակերպությունների հետ համատեղ և ունի խորհրդատվական կարգավիճակ Եվրոխորհրդում, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում և ՅՈՒՆԵՍԿՕ-ում: Նաև դիտորդի կարգավիճակ ունի Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան կոմիտեում: *Լրագրողներ առանց սահմանի* կազմակերպությունը ֆրանսիական կառավարության կողմից ճանաչվել է որպես հասարակության շահերին ծառայող կազմակերպություն:

Խոսքի ազատության եւ լրագրողների իրավունքների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների համառոտ ցանկ

Selected List of International Organizations Dealing with
Issues of Freedom of Speech and Rights of Journalists

A
P
P
E
N
D
I
X
2

ARTICLE 19

ARTICLE 19 is an international human rights organization, which promotes freedom of expression and fights censorship all over the world. It is established in 1987 in London.

It has taken its name from *Article 19* of the United Nations Universal Declaration of Human Rights. The organization monitors, researches, publishes, lobbies, campaigns and litigates on behalf of freedom of expression wherever it is threatened.

With partners in 30 countries, Article 19 works to strengthen the local capacity to monitor and protest censorship.

19-րդ ՀՈՂՎԱԾ

Հ
Ա
Վ
Ե
Լ
Վ
Ա
Ծ
2

19-րդ ՀՈՂՎԱԾ-ը մարդու իրավունքների միջազգային կազմակերպություն է, որը խթանում է արտահայտվելու ազատությունը և ամբողջ աշխարհում պայքարում գրաքննության դեմ:

Ստեղծվել է 1987թ., Լոնդոնում: Այն իր անունը վերցրել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի **19-րդ հոդվածից**: Կազմակերպությունը հետևում, հետազոտում, հրապարակում, ներգործում, քարոզարշավներ է կազմակերպում և բողոքարկում հանուն արտահայտվելու ազատության այնտեղ, որտեղ դրան վտանգ է սպառնում: 30 երկրների գործընկերների հետ այն աշխատում է հզորացնել տեղական կարողությունները, հետևել գրաքննությանը և դրա դեմ հանդես գալ բողոքով:

Խոսքի ազատության եւ լրագրողների իրավունքների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների համառոտ ցանկ



Selected List of International Organizations Dealing with Issues of Freedom of Speech and Rights of Journalists

The Freedom Forum

The Freedom Forum, of Arlington, Va., is a financially independent, non-political international organization dedicated to free press, free speech, and free spirit of all people. The Freedom Forum supports its priorities through programs, publications and projects that promote the understanding and exercise of freedoms and values embodied in the First Amendment.

The Freedom Forum is a large media-oriented foundation, and one of the largest funders of journalism education. It is a leader in promoting the hiring and advancement of minorities and women in the media professions.

The Forum's main operating program is The Freedom Forum Media Studies Center, at Columbia University in New York, the first institute for the advanced study of mass communication and technological change.

Ազատության ֆորում

Արլինգտոնի ազատության ֆորումը ֆինանսապես անկախ, ոչ քաղաքական միջազգային կազմակերպություն է՝ նվիրված ազատ մամուլին, ազատ խոսքին և ժողովրդի ազատության ոգուն: Ազատության ֆորումն իր առջև դրված առաջնային խնդիրների իրականացման է ձգտում այնպիսի ծրագրերի, հրապարակումների և նախագծերի միջոցով, որոնք խթանում են ազատությունների ընկալումն ու բարձրացնում դրանց արժեքը, ինչպես որ ձևակերպված է առաջին լրացման մեջ:

Ազատության ֆորումը լրատվական ուղղվածություն ունեցող խոշորագույն հաստատություն է, ինչպես նաև լրագրողական կրթության ամենախոշոր ֆինանսավորողը: Այն առաջատար է նաև լրագրողական ոլորտում կանանց և փոքրամասնություններին աշխատանքի մեջ ներգրավելու գործում:

Ֆորումի գլխավոր ծրագիրը Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանում գործող Ազատության ֆորումի լրատվական ուսումնասիրությունների կենտրոնն է, որը զանգվածային լրատվության և տեխնոլոգիական փոփոխությունների գծով ուսումնասիրություններ կատարող առաջին առաջնակարգ հաստատությունն է:

Խոսքի ազատության եւ լրագրողների իրավունքների հարցերով զբաղվող
միջազգային կազմակերպությունների համառոտ ցանկ

From the History of Armenian Mass Media

A P P E N D I X 3

- History of the Armenian press encompasses a period of two centuries.
- The geography the Armenian press covers the whole world. Armenian periodicals were published in hundreds of cities of over 40 countries.
- The largest centers of the Armenian press were Moscow, St. Petersburg, New Nakhijevan (Rostov Don), Tiflis, Baku, Istanbul, Smyrna, Van, Venice, Vienna, Athens, Cairo, Alexandria, Aleppo, Beirut, Tehran, Tebriz, New-York, Boston, Fresno, etc.
- The exact number of Armenian periodicals has not been ascertained yet. The estimates vary from 2,000 to 4,000 or 5,000 in the works of different researchers. Most recent bibliographies make mention of 3,264 titles in the 1970 A. Kirakosian's *Bibliography of Armenian periodicals*, and 3,118 in the 1986 M. Babloyan's *Armenian periodicals*.
- The first Armenian-language periodical, the *Azdarar* magazine, was published from 1794 to 1796 in Madras.
- The first-born of the Western Armenian press, the *Lro gir* weekly (the Armenian version of the Turkish official newspaper *Tagvimi vakayi*) was published from 1832 to 1850 in Istanbul.
- The first Armenian political periodical, the *Europe* weekly was published by the Vienna Mkhitarists from 1847 to 1863.
- The Armenian periodical that has been in existence for the longest period of time is *Baz-*



mavep magazine. It has been published by the Venice Mkhitarists since 1843.

- The first Eastern Armenian periodical, the *Arevelian Tsanoutsounk* weekly was launched in 1816 in Astrakhan.
- The first periodical published in Yerevan was the literary, historical and educational newspaper *Psak* (from 1880 1884).
- The first periodical published in Gyumri (Alexandrapol) was *Akhourian* (1902), a calendar magazine for Armenian women.
- The *Gavar* weekly was the first periodical in Goris published from 1909 to 1910.
- Prior to 1980 218 titles of Armenian periodicals were published in Georgia, 74 in the Russian Federation, 8 in Ukraine, 160 in Egypt , 190 in Lebanon , 70 in Greece , 190 in France , 14 in Germany , 400 in USA .
- Armenian TV (now Armenian National TV) started its broadcasting on 29 November 1956. The first-born out-of-studio reporting was broadcast on 7 November 1957. The first videotaped program was aired in 1971. Channel 2 has been operating since 1973. The first broadcast in colour was undertaken on 1 May 1971.
- The first radio broadcasts from the newly built radio station in Yerevan started in September 1926 (1-1,5 hours/daily 3 times a week). First magnetic tape recordings were made in 1948-1949. In 1970-80s three radio programs were operating in the country by national radio on the average of 38,5 hours daily.

Ն Ա Կ Ե Լ Կ Ս Օ 3



From the History of Armenian Mass Media

- Հայ պարբերական մամուլը երկդարյա պատմություն ունի:
- Հայ պարբերականների հրատարակության վայրերի աշխարհագրությունը տարածվում է ամբողջ աշխարհում: Հայերեն պարբերականներ են հրատարակվել ավելի քան 40 երկրների հարյուրավոր քաղաքներում:
 - Հայ մամուլի առավել խոշոր կենտրոններ են Մոսկվան, Ս. Պետերբուրգը, Նոր Նախիջևանը (Ռոստով-Դոն), Թիֆլիսը, Բաքուն, Կ.Պոլիսը, Չնյուռնիան, Վանը, Վենետիկը, Վիեննան, Փարիզը, Աթենքը, Կահիրեն, Ալեքսանդրիան, Հալեպը, Բեյրութը, Թեհրանը, Թավրիզը, Նյու Յորքը, Բոստոնը, Ֆրեզնոն և այլն:
 - Հայ պարբերականների ընդհանուր թիվը տակավին ճշտված չէ: Տարբեր ուսումնասիրողների մոտ այդ թիվը տատանվում է 2 000-ից 4 000-4 500-ի միջև: Հայ մամուլի նորագույն մատենագիտություններից Ա. Կիրակոսյանի «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն» (Եր., 1970) աշխատությունում թվարկվում է 3264 անուն, Մ. Բաբլոյանի «Հայ պարբերական մամուլ» (Եր., 1986) մատենագիտությունում (որ առավել անթերի է)՝ 3118 անուն:
 - Հայերեն անդրանիկ պարբերականը՝ «Ազդարար» ամսագիրը, հրատարակվել է 1794-1796թթ., Մադրասում:
 - Արևմտահայ մամուլի առաջնեկը «Լրո գիր» շաբաթաթերթն է («Թագվիմի վաքայի» թուրքերեն պաշտոնաթերթի հայերեն տարբերակը), որ լույս է տեսել 1832-50թթ., Կ. Պոլսում:
 - Հայերեն քաղաքական անդրանիկ լրագիրը՝ «Եվրոպա» շաբաթաթերթը, հրատարակել են Վիեննայի Մխիթարյանները 1847-63թթ.:
 - Հայերեն ամենաերկարակյաց պարբերականը Վենետիկի Մխիթարյանների «Բազմավեպ» հանդեսն է, որ լույս է տեսնում 1843թ-ից:
 - Արևելահայ առաջին պարբերականը՝ «Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթը, լույս է տեսել 1816-ին, Աստրախանում:
 - Երևանում հրատարակված առաջին պարբերականը՝ «Պսակ» գրական, պատմական և մանկավարժական լրագիրը, լույս է տեսել 1880-84թթ.:
 - Գյումրիում (Ալեքսանդրապոլ) հրատարակված առաջին պարբերականը «Ախուրյան» հայ կանանց օրացույց հանդեսն է (1902թ.):
 - Գորիսի առաջին պարբերականը «Գավառ» շաբաթաթերթն է, որ լույս է տեսել 1909-1910թթ.:
 - Մինչև 1980թ. Վրաստանում լույս են տեսել 218 անուն հայերեն պարբերականներ, Ռուսաստանի Դաշնությունում՝ 74 անուն, Ուկրաինայում՝ 8, Եգիպտոսում՝ 160, Լիբանանում՝ 190, Հունաստանում՝ 70, Ֆրանսիայում՝ 190, Գերմանիայում՝ 14, ԱՄՆ-ում՝ 400:
 - Հայկական հեռուստատեսության (այժմ՝ Հայաստանի ազգային հեռուստատեսություն) առաջին հաղորդումը եթեր է արձակվել 1956-ի նոյեմբերի 29-ին: Արտաստուդիական անդրանիկ ռեպորտաժը տրվել է 1957-ի նոյեմբերի 7-ին: Առաջին տեսագրումը կատարվել է 1971-ին: 1973-ից գործում է երկրորդ ծրագիրը: Գունավոր պատկերմամբ առաջին հաղորդումը տրվել է 1971-ի մայիսի 1-ին:
 - Առաջին ռադիոհաղորդումները Երևանի նորակառույց ռադիոկայանից եթեր են արձակվել 1926թ. սեպտեմբերից (շաբաթը 3 անգամ՝ օրական 1-1,5 ժամ տևողությամբ): Մագնիսական ժապավենի վրա առաջին ձայնագրությունները կատարվել են 1948-1949թթ.: 70-80-ականներին հանրապետական ռադիոն ունեցել է երեք ծրագիր՝ օրական 38,5 ժամ միջին տևողությամբ:



A Selected List of Mass Media in Armenia

Government dailies:

Language	Name	No. of copies
Armenian	<i>Hayastani</i>	
	<i>Hanrapetutyun</i>	6,500
Russian	<i>Respublika</i>	
	<i>Armenia</i>	5,000

Independent dailies:

Language	Name	No. of copies
Armenian	<i>Aravot</i>	6,000
	<i>Azg</i>	4,000
	<i>Hayots</i>	
	<i>Ashkharkh</i>	3,500
	<i>Yerkir</i>	3,000
	<i>Zhamanak</i>	1,500
	<i>Oragir</i>	N/A

Independent newspapers:

Language	Name	No. of copies
Armenian	<i>Iravunk</i>	18,000
Russian	<i>Golos Armenii</i>	5,230
Russian	<i>Novoe Vremia</i>	5,000
Armenian	<i>Hayk</i>	N/A
English	<i>Noyan Tapan</i>	
	<i>Highlights</i>	1,000

Monthly journals:

Language	Name	No. of copies
Armenian	<i>Garun</i>	2,000
Armenian	<i>Hayatsk Yerevanits</i>	1,500
Russian	<i>Literaturnaya</i>	
	<i>Armenia</i>	1,000
Armenian	<i>Nork</i>	500

Պաշտոնական օրաթերթեր

Լեզու	Անուն	Տպաքանակ
Հայերեն	<i>Հայաստանի Հանրապետություն</i>	6500
	<i>Ռեսպուբլիկա Արմենիա</i>	5000

Անկախ օրաթերթեր

Լեզու	Անուն	Տպաքանակ
Հայերեն	<i>Առավոտ</i>	6000
	<i>Ազգ</i>	4000
	<i>Հայոց աշխարհ</i>	3500
	<i>Երկիր</i>	3000
	<i>Ժամանակ</i>	1500
	<i>Օրագիր</i>	անորոշ

Անկախ թերթեր

Լեզու	Անուն	Տպաքանակ
Հայերեն	<i>Իրավունք</i>	18000
	<i>Գոլոս Արմենիի</i>	5230
Ռուսերեն	<i>Նովոյե Վրեմյա</i>	5000
Հայերեն	<i>Հայք</i>	
Անգլերեն	<i>Նոյան Տապան</i>	
	<i>Հայլայթս</i>	1000

Ամսագրեր

Լեզու	Անուն	Տպաքանակ
Հայերեն	<i>Գարուն</i>	2000
	<i>Հայացք Երեւանից</i>	1500
Ռուսերեն	<i>Լիտերատուրնայա</i>	
	<i>Արմենիա</i>	1000
Հայերեն	<i>Նորք</i>	500

Հայաստանի զանգվածային լրատվամիջոցների համառոտ ցանկ



A List of Selected Mass Media in Armenia

News Agencies

Government	<i>Armenpress</i>
Independent	<i>Arka</i> <i>Noyan Tapan</i> <i>Snark</i>

Radio

Government	<i>National Radio of Armenia</i>	<i>MW</i>
Independent	<i>Ardzagank</i> <i>Burg</i> <i>Hai FM</i>	<i>FM</i> <i>FM</i> <i>FM</i>

Television

Government	<i>State TV</i>	<i>metric frequency</i>
Independent	<i>AR</i> <i>Armenia TV</i> <i>A1+</i> <i>AST</i> <i>Ayg</i> <i>Mair Hairenik</i>	<i>metric frequency</i> <i>decimetric frequency</i> <i>decimetric frequency</i> <i>decimetric frequency</i> <i>decimetric frequency</i> <i>decimetric frequency</i>

Լրատվական գործակալություններ

Պաշտոնական Անկախ	<i>Արմենպրես</i> <i>Առկա</i> <i>Նոյան Տապան</i> <i>Սնարք</i>
---------------------	---

Ռադիո

Պաշտոնական Անկախ	<i>Ազգային Ռադիո</i> <i>Արծազանք</i> <i>Բուրգ</i> <i>Հայ FM</i>	<i>միջին ալիք</i> <i>FM</i> <i>FM</i> <i>FM</i>
---------------------	--	--

Հեռուստատեսություն

Պաշտոնական Անկախ	<i>ՀԱՀ</i> <i>ԱՐ</i> <i>Արմենիա TV</i> <i>Ա1+</i> <i>ԱՍՏ</i> <i>Այգ</i> <i>Մայր Հայրենիք</i>	<i>մետր. հաճախականությամբ</i> <i>մետր. հաճախականությամբ</i> <i>դեցիմ. հաճախականությամբ</i> <i>դեցիմ. հաճախականությամբ</i> <i>դեցիմ. հաճախականությամբ</i> <i>դեցիմ. հաճախականությամբ</i> <i>դեցիմ. հաճախականությամբ</i>
---------------------	--	--

Հայաստանի զանգվածային լրատվամիջոցների համառոտ ցանկ

